ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ 2012

947.925.1+940.53/.54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

II
97751

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945 ԹԹ.)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
80

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
80

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2012

ՀՏԴ 325:940.53/.54
ԳՄԴ 66.5 (2Հ)+63.3(0)62
Հ 422

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Պատասխանատու խմբագիր՝ Կ. Ա. Հարությունյան
Գրախոս՝ Հ. Բ. Աբրահամյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

Հ 422 Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945 թթ.) / Կ. Ա. Հարությունյան. Պատասխանատու խմբագիր.՝ Կ. Ա. Հարությունյան.- Եր.: Պատմ. ինստ. հրատ, 2012.- 133 էջ:

Աշխատության մեջ ՌԴ Սոցիալ-քաղաքական պատմության պետական կենտրոնական արխիվի նորահայտ տվյալների, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա լուսաբանվել է ԼՂԻՄ-ի 1939-1945 թթ. պատմությունը, բացահայտվել մարզում իրականացված ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատանքների էությունը, ժողովրդական տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու գործընթացը, վեր հանվել թիկունքի աշխատողների հերոսական աշխատանքը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, մշակույթի և առողջապահության բնագավառներում, ցույց տրվել նրանց ներդրած ավանդը երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

ISBN 978-99941-73-67-9

ՀՏԴ 325:940.53/.54
ԳՄԴ 66.5 (2Հ)+63.3(0)62

©Պատմության ինստիտուտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2011 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մեծ շուքով նշեց իր անկախության 20-ամյակը: Այն հստակ ցույց տվեց, որ ԼՂՀ-ն չնայած դեռ չի ճանաչվել իրավաբանորեն, սակայն գոյություն ունի փաստորեն ու շատ բաներով նույնիսկ առաջ է անցել իր նման գաղութատիրության ստրկական շղթաները կտրած ու անկախացած մի շարք ճանաչված պետություններից: ԼՂՀ-ն այսօր ունի ժողովրդական ճանապարհով ընտրված նախագահ, ազգային ժողով, համապատասխան պետական կառույցներ, անկախության համար մղված մարտերում կոփված պաշտպանական բանակ: Երկրի պաշտպանունակության ամրապնդման, ժողովրդական տնտեսության զարգացման, կրթության, գիտության, մշակույթի մի շարք առաջնահերթ խնդիրների լուծման հետ միաժամանակ, ԼՂՀ-ում կարևոր աշխատանք է տարվում նաև իր ներկա և ոչ վաղ անցյալի պատմության ուսումնասիրության ուղղությամբ: Ինչպես հայտնի է ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի անօրինական որոշման հետևանքով պատմական Հայաստանի անխախտելի մասնիկը հանդիսացող Արցախը, որը եղել է Մեծ Հայքի նահանգներից մեկը, բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին, որի հետևանքով 1923 թ. հուլիսի 7-ին նրա լեռնային մասում ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որը Խորհրդային Ադրբեջանի կազմում փաստորեն գոյություն ունեցավ մինչև 1988 թ. փետրվար-մարտյան համաժողովրդական շարժումը, որի հետևանքով ԼՂԻՄ-ի մարզխորհուրդը փետրվարի 20-ին, իսկ մարզկոմը մարտի 17-ին իրենց պատմական որոշումներով դիմեցին ԽՍՀՄ, Հայաստանի և Ադրբեջանի գերագույն խորհուրդների նախագահություններին ու ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից հանելու և Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջով: Սակայն արցախահայության այդ օրինական, սահմանադրական, արդարացի պահանջին, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար և ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ Մ. Ս. Գորբաչովի երկերեսանի, բացահայտ հակահայկական ու սադրիչ քաղաքականությունից ոգևորված Ադրբեջանի կառավարությունը պատասխանեց իր երկ-

ռում ապրող ավելի քան 600000 հայերի դեմ իրականացված ցեղասպանությունով (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ, Մինգեչաուր, Մարաղա և այլն), որը նման էր 1915 թ. Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության կողմից իրագործված մեծ եղեռնին, մուսավաթականների կողմից 1920 թ. մարտի 25-ին Շուշի քաղաքի հայ բնակչության կոտորածներին, Նախիջևանի հայաթափմանը: Խորհրդային Միության փլուզումից հետո ԼՂԻՄ-ի դեմ Ադրբեջանի սկսած դաժան պատերազմն ավարտվեց Արցախի հերոս ժողովրդի հաղթանակով, որի հետևանքով 1991 թ. սեպտեմբերի 2-ին ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ինչպես հայտնի է, ԼՂԻՄ-ի գոյության տարիներին, ինչպես Խորհրդային Ադրբեջանի, այնպես էլ Խորհրդային Հայաստանի պատմաբանների առջև արգելք էր դրված երկրամասի պատմության ճշմարտացի ուսումնասիրության համար: Այնուամենայնիվ, եթե Ադրբեջանում այդ թեմային անդրադառնում էին հայկական մարզը որպես Ադրբեջանի «պատմական» տարածք ցույց տալու, իսկ հայերին որպես եկվորներ համարելու կեղծարարությամբ, ապա Խորհրդային Հայաստանի պատմաբաններն ընդհանրապես իրավունք չունեին այդ թեմայի կողքով անգամ անցնելու: Այս առումով էլ ավելի է կարևորվում, արդիական ու հրատապ դառնում ԼՂԻՄ-ի այս կամ այն շրջանի պատմության հիմնահարցերի, այդ թվում նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մարզի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությունը: Ուստի, ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության պատմաբաններն անկախության 20 տարիների ընթացքում մեծ ուշադրություն են դարձրել Արցախի պատմության հետ առնչվող մի շարք հիմնահարցերի, այդ թվում նաև Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմի տարիներին վերաբերող թեմաների ուսումնասիրությանը: Այս բնագավառում հատկապես զգալի աշխատանք են կատարել պատմական գիտությունների դոկտորներ՝ Հրանտ Աբրահամյանը, Կլիմենտ Հարությունյանը, պատմական գիտությունների թեկնածուներ՝ Վահրամ Բալայանը, Հակոբ Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի երկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Շահեն Մկրտչյանը, որոնք իրենց առջև չնայած հատուկ խնդիր չեն դրել

ամբողջապես ուսումնասիրել պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ի թիկունքի աշխատավորների պատմությունը, այնուամենայնիվ նրանք թեկուզ ծավալով քիչ, բայց չափազանց արժեքավոր գործ են կատարել այս հիմնահարցի գիտական հետազոտության բնագավառում: Այսպես, օրինակ, Հրանտ Աբրահամյանն իր «Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Բ 1923-1985» մենագրության մեջ, որը հրատարակվել է 2005 թ. Երևանում (ծավալը 280 էջ), ընդամենը 20 էջ է նվիրել պատերազմական շրջանին: Կ. Ա. Հարությունյանը 2009 թ. տպագրած իր «Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945)» մենագրության մեջ (ծավալը 526 էջ, ռուսերեն) թիկունքի աշխատանքների լուսաբանմանը հատկացրել է ընդամենը 17 էջ, Վահրամ Բալայանը «Արցախի պատմության» գրքի միայն 3 էջն է նվիրել երկրորդ աշխարհամարտին արցախահայերի մասնակցությանը: Ինչ վերաբերում է Հակոբ Գրիգորյանին, որը 2004 թ. թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել «Արցախահայության մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» թեմայով (ծավալը 230 էջ), ապա նա թիկունքի աշխատանքի մասին խոսել է ընդամենը 13 էջում, իսկ ատենախոսության հիմնական մասը գերազանցապես նվիրված է ռազմաճակատում արցախահայերի կատարած սխրանքների վերհանմանը: Թեպետ Շահեն Մկրտչյանը հատուկ մենագրական աշխատություն չի գրել խնդրո առարկա թեմայի շուրջ, բայց և այնպես նա 1970 թ. Բաքվում հրատարակած «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ» ուղեցույցում և 1985 թ. «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1-ին համարում տպագրած «Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» հոդվածում ճշգրիտ և արժեքավոր տվյալներ է տալիս 1941-1945 թթ. ընթացքում մարզից գործող բանակ զորակոչված և ռազմաճակատում զոհված արցախահայերի թվաքանակի վերաբերյալ: Թիկունքի աշխատանքները նա լուսաբանել է այնքանով, որքան թույլ է տվել հոդվածի սահմանափակ ծավալը: Այնպես, որ մենք մեր մենագրության մեջ հիմնականում քննարկել ենք ԼՂԻՄ-ի 1939-1945 թթ.պատմությունը՝ լուսաբանելով մարզի աշխատավորների հերոսական, բայց դժվարին աշխատան-

քը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, մշակույթի, գիտության, առողջապահության բնագավառներում, ցույց տվել նրանց ներդրած ավանդը հայրենիքի պաշտպանության գործում, նորահայտ փաստերի հիման վրա ճշտել ԼՂԻՄ-ից պատերազմին մասնակցած Խորհրդային Միության հերոսների, Փառքի շքանշանի լրիվ ասպետների և զորահրամանատարների թվաքանակը...

Այս ամենը ապացուցում են մեր մենագրության թեմայի արդիականությունը, գիտական նշանակությունն ու կարևորությունը, ցույց են տալիս, որ այն հանդիսանում է հայ ժողովրդի բաղկացուցիչ մասը հանդիսացող արցախահայության 1939-1945 թթ. համեմատաբար քիչ ուսումնասիրված պատմության սպիտակ էջերից, որոնք պետք է գրվեն ու ամբողջացվեն: Հետևապես Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերոհիշյալ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությունն ունի պատմագիտական նշանակություն: Այդ թեմայի լուսաբանումը ոչ միայն վեր կհանի հայ ժողովրդի արցախյան հատվածի անհայտ ու կեղծված պատմության էջերը, այլև կնպաստի Հայոց պատմության ամբողջական շարադրանքին: Իսկ պատերազմական ծանր տարիներին ԼՂԻՄ-ի աշխատավորության՝ «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով կատարած հերոսական աշխատանքը և նրա զավակների մարտական սխրանքները մեծ չափով կնպաստեն մատաղ սերնդի, ինչպես նաև հայ զինվորի ու սպայի ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Այս ամենը ավելի են կարևորում ու արդիական դարձնում մեր աշխատության թեման:

Ժամանակագրական առումով մեր ուսումնասիրության շրջանակները թեկուզ պարփակվում են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներով՝ 1939-1945 թթ., բայց արծարծված որոշ հարցերի ընդգրկման ժամանակաշրջանն ավելի լայն է և առնչվում է ԼՂԻՄ-ի ավելի վաղ ու ներկա պատմական իրադարձությունների հետ, որոնք բախտորոշ նշանակություն են ունեցել արցախահայերի կյանքում:

Չնայած թեմայի արդիական և գիտական կարևոր նշանակությանը, առ այսօր հայ պատմագիտության մեջ չկա Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ի պատմության վե-

բաբերյալ մի ամբողջական ուսումնասիրություն, որտեղ հանգամանորեն լուսաբանված կլիներ մարզի թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքը: Ահա թե ինչու մեր մենագրության հիմնական նպատակն է նորահայտ արխիվային փաստերի, մամուլի և համապատասխան գրականության հիման վրա ստեղծել ԼՂԻՄ-ի 1939-1945 թթ. պատմությունը լուսաբանող համապարփակ ու ընդհանրացնող գիտական աշխատություն: Ելնելով վերոհիշյալից մենագրության մեջ քննարկման են դրվել հետևյալ հիմնական խնդիրները՝ լուսաբանել ԼՂԻՄ-ի պատմությունը պատերազմի առաջին փուլում (1 սեպտեմբերի 1939 թ. – 21 հունիսի 1941 թ.), բացահայտել Հայրենական մեծ պատերազմի սկզբին մարզում իրականացված ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատանքների էությունը, վերհանել մարզի ժողովրդական տնտեսությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու գործընթացը, ցույց տալ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի գործում ԼՂԻՄ-ի հայերի ներդրած ավանդը՝ կանգ առնելով արդյունաբերության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության և մշակույթի աշխատողների, մարզից ռազմաճակատ զորակոչված արցախահայերի հերոսական գործունեության լուսաբանման վրա:

Չնայած հիմնահարցի կարևորությանն ու արդիականությանը հայ պատմագրությունը դեռևս բավարար չափով չի լուսաբանել այն, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, խորհրդային տարիներին ԼՂԻՄ-ի պատմության թեման արգելված էր ուսումնասիրության համար, իսկ անկախության համեմատաբար կարճ ժամանակաընթացքում չնայած լուսաբանվեցին շատ հարցեր, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, մի շարք հիմնահարցեր, որոնց թվում նաև մարզի աշխատավորների պատերազմական տարիներին թիկունքում կատարած հերոսական աշխատանքների պատմությունը, մնացել էին անմշակ: Ամենից առաջ դա պայմանավորված էր նրանով, որ պատերազմի տարիներին հրդեհի հետևանքով այրվել էր ԼՂԻՄ-ի մարզկոմի ու մարզգործկոմի արխիվների մի զգալի մասը, իսկ մյուս մասն էլ գտնվում էր Բաքվի արխիվներում, որտեղ հայ պատմաբանի մուտքը հասկանալի պատճառներով արգելված է: Ինչ

վերաբերում է Մոսկվայում ԽՄԿԿ Կենտկոմի Մարքսիզմ-Լենինիզմի կուսակցական նախկին արխիվում (այժմ՝ Ռուսաստանի Դաշնության հասարակական-քաղաքական պատմության պետական կենտրոնական արխիվ՝ РГАСПИ) պահպանվող ԼՂԻՄ-ի պատմության պատերազմական շրջանին վերաբերող փաստաթղթերին, ապա դրանք մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը կրում էին գաղտնիության կնիքը: Միայն վերջերս այդ նյութերը ապագաղտնիացվեցին և բացվեցին ուսումնասիրողների առջև: Դա հնարավորություն տվեց մեզ աշխատել այդ արխիվում, հավաքել անհրաժեշտ արժեքավոր փաստեր, դրանք օգտագործել մեր մենագրության համար և ստեղծել ԼՂԻՄ-ի 1939-1945 թթ. պատմության վերաբերյալ ամբողջական մի աշխատություն, որն իր բնույթով և օգտագործած արխիվային նյութերով նորություն է հայ պատմագիտության մեջ: Այսպիսով, մեր ուսումնասիրությունը լրացնելու է Հայոց պատմության համեմատաբար քիչ հետազոտված էջերից մեկը և նպաստելու է ԼՂԻՄ-ի պատմության 1939-1945 թթ. պատերազմական ժամանակաշրջանի գիտականորեն նորովի լուսաբանմանը: ԼՂԻՄ-ի պատմության այդ հերոսական ու բախտորոշ նշանակություն ունեցան ժամանակահատվածի հետազոտությունն այսօր ավելի է արժևորվում ու գործնական նշանակություն ստանում նորանկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պայմաններում, երբ անհրաժեշտություն է դարձել հերքել ադրբեջանցի վայ պատմաբանների կողմից Արցախի մասին հորինած կեղծ, ստահոդ «տեսությունը», որ իբր հայերը այդ երկրամասում հանդիսանում են եկվորներ, իսկ իրենք բնիկներ, և ստեղծել օբյեկտիվ, ճշմարիտ փաստերի հիման վրա հիմնված գիտական կարևոր նշանակություն ունեցող աշխատություն: Դրա հետ միասին սույն մենագրությունն ունի գործնական նշանակություն, քանի որ այնտեղ օգտագործված արխիվային փաստերը, որոնք շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, կարող են օգտակար լինել պատմաբանների, բուհերի դասախոսների ու ուսանողների, մագիստրատուրայում սովորողների, ինչու չէ, նաև Արցախի պատմության այդ շրջանով հետաքրքրվողների համար:

Մենագրությունը գրվել է արխիվային նորահայտ փաստերի, գրականության և մամուլի նյութերի հիման վրա՝ պատմահամե-

մատական, օբյեկտիվ լուսաբանման մեթոդի կիրառմամբ: Արծարծված շատ հարցեր մեկնաբանված են սկզբնաղբյուրների քննական վերլուծության, համեմատության ու համադրման մեթոդների կիրառման միջոցով՝ չափանիշ ընդունելով պատմական ճշմարտությունը: ԼՂԻՄ-ի 1939-1945 թթ. պատմությունը լուսաբանելիս օգտագործել ենք դեպքերի ու երևույթների շարադրման պատմանականության մեթոդը՝ հիմք ընդունելով պատմական օբյեկտիվ ճշմարտությունը, չափն ու անկողմնակալությունը:

Մեր աշխատության աղբյուրագիտական հիմքը կազմել են Ռուսաստանի Դաշնության սոցիալ-քաղաքական պատմության պետական կենտրոնական արխիվի՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 17-րդ ֆոնդի՝ 22, 43, 44, 45 ցուցակների նյութերը, որոնք հիմնականում հանդիսանում են ԼՂԻՄ-ի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների պլենումների ու կոնֆերանսների արձանագրություններ, հաշվետություններ ու որոշումներ: Չնայած, ինչպես արդեն նշեցինք, հրդեհի հետևանքով այրվել են ԼՂԻՄ-ի կուսակցական և պետական արխիվների շատ նյութեր, այնուամենայնիվ մեզ հաջողվել է ԼՂՀ պետական արխիվում հայտնաբերել մի շարք արժեքավոր փաստեր և օգտագործել դրանք. ֆ. 1, g. 1, 3; ֆ. 82, g. 1; ֆ. 18, g. 1: Մենք օգտվել ենք նաև ԼՂՀ պատմաերկրագիտական թանգարանի 2-րդ ֆոնդից (Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին): Մեր մենագրության համար արժեքավոր նյութեր ենք քաղել նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվի թիվ 274 ֆոնդից (Լեռնային Ղարաբաղի աշխատավորները Հայրենական մեծ պատերազմի տարիներին), ինչպես նաև՝ «Սովետական Ղարաբաղ», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» (Բաքու), "Правда", "Бакинский рабочий" թերթերից, «Բանբեր Հայաստանի արխիվների» և «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսներից:

Մեր մենագրության համար արժեքավոր տվյալներ ենք քաղել նաև ԼՂԻՄ-ի պատմաերկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Շահեն Մկրտչյանի, ԼՂԻՄ-ի Մարտունու շրջանի Քերթ գյուղի միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն, այժմ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտու-

թյունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանի, ԼՂԻՄ-ի կոմերիտական կազմակերպության նախկին քարտուղար՝ Փառո Շահրամանյանի, մարզկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի նախկին վարիչ Հրանտ Շահրամանյանի, մարզի մետաքսարդյունաբերության նախկին ղեկավար աշխատող Ա. Բ. Զաքարյանի աշխատություններից, ԼՂԻՄ-ի ժողովրդական տնտեսության մասին 1963 թ. Ստեփանակերտում հրատարակված (ռուսերեն) ժողովածուից, ինչպես նաև ադրբեջանցի պատմաբանների մի շարք ուսումնասիրություններից[1]:

Մեր աշխատանքը կատարելիս օգտագործել ենք նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մնացականյանի, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի, պատմական գիտությունների թեկնածուներ՝ Վահրամ Բալայանի, Ռոնա Բալայանի, Հակոբ Գրիգորյանի, գրող-հրապարակախոս Լեոնիդ Հուրունցի, միջազգայնագետ, լրագրող, քաղաքագետ Արսեն Մելիք-Շահնազարովի աշխատություններից, պատմական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ՝ Գալուստ Գալոյանի և Կոնստանդին Խուդավերդյանի խմբագրությամբ հրատարակած «Լեռնային Ղարաբաղ» պատմական տեղեկանքից (ռուսերեն),

---

[1] **Շահեն Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ուղեցույց), Բաքու, 1970: Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 1, 1985; Արցախ, Ե., 2000: Արցախի համար զոհված դիզակցիներ (Հրանտ Աբրահամյանի համահեղինակությամբ), Ե., 2000: **Հրանտ Աբրահամյան**, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Բ, 1923-1985, Ե., 2005: Արցախյան գոյամարտ, Ե., 1991: Քերթ, Ե., 2010: **Փառո Շահրամանյան**, Լեռնային Ղարաբաղի կոմերիտական կազմակերպությունը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Ստեփանակերտ, 1958: **Г. Л. Шахраманян,** Нагорно-Карабахская областная организация Коммунистической партии Азербайджана в годы Великой Отечественной войны Советского Союза (1941-1945 гг.). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Баку, 1964. **Ա. Բ. Զաքարյան**, Լեռնային Ղարաբաղի մետաքսարդյունաբերությունը, Բաքու, 1970: Достижение Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963. История Азербайджана (в трех томах), т. 3, Баку, 1963. **Мадатов Г. А.,** Азербайджан в годы Великой Отечественной войны, Баку, 1975. **М. Абасов, А. Григоренко, Р. Зейналов,** Азербайджан в годы Великой Отечественной войны, Баку, 1990 и т. д.

Հայ ժողովրդի պատմության 8-րդ և Հայոց պատմության 4-րդ հատորի 1-ին գրքից և այլն[2]:

Աշխատության մեջ օգտագործել ենք նաև Երկրորդ համաշխարհային ու Հայրենական մեծ պատերազմների պատմության մասին Մոսկվայում հրատարակված մի շարք հիմնակազմ աշխատություններ, որոնք ընդհանուր տեղեկություններ են տվել մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին[3]:

Ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, վերոհիշյալ բոլոր հեղինակներն իրենց առջև նպատակ չեն դրել հատուկ աշխատություն գրել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների պատմության վերաբերյալ: Նրանք այդ հարցին մոտեցել են այնքանով, որքանով իրենց թեման շատ թե քիչ առնչվել է պատերազմական ժամանակաշրջանի հետ: Այնուամենայնիվ, որոշ հեղինակներ, ինչպես օրինակ, Փառո

---

[2] **Արամայիս Մնացականյան,** Միասնական շարքերում, Ե., 1975: **Կլիմենտ Հարությունյան,** Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմին (1941-1945), Ե., 2009 (ռուսերեն): **Վահրամ Բալայան,** Գիշի, Ե., 1997: Արցախի պատմություն, Ե., 2002: **Ռոնա Բալայան,** Մեծ փորձություն, Ստեփանակերտ, 1990: **Հակոբ Գրիգորյան,** Արցախահայության մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2004: **Леонид Гурунц,** Наедине с собой или докричаться до вас, потомки! Дневниковые записи 1975-1982, Е., 2002. **Арсен Мелик-Шахназаров,** Нагорный Карабах. факты против лжи, М., 2009; **Ґалуст Галоян, Константин Худавердян,** Нагорный Карабах. Историческая справка, Е., 1988. Հայ ժողովրդի պատմություն,հ. 8, Ե., 1970; Հայոց պատմություն, հ. 4, գիրք 1, Ե., 2010:

[3] История Великой Отечественной войны Советского Союза 1941-1945 гг., в 6-и томах, М., Воениздат, 1960-1965; КПСС о Вооруженных Силах Советского Союза. Документы 1917-1966, М., Воениздат, 1969; История Коммунистической партии Советского Союза, в шести томах, т. 5, кн. 1, М., Политиздат, 1970; Великая Отечественная война Советского Союза 1941-1945. Краткая история. Издание второе, исправленное и дополненное. М., Воениздат, 1970; Великая Отечественная война 1941-1945, в 4-х томах, М., изд. "Наука", 1998-1999; Кавалеры ордена Славы трех степеней. Краткий биологический словарь, М., Воениздат, 2000; Россия и СССР в войнах XX века. Статистическое исследование, М., изд. "ОЛМА-ПРЕСС", 2001; Великая Отечественная война без грифа секретности. Книга потерь, М., изд. "Вече", 2009; **Ս. Մ. Շտեմենկո,** Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք 2-րդ, Ե., 1977 և այլն:

Շահրամանյանը, Հրանտ Շահրամանյանը, Շահեն Մկրտչյանը, Հրանտ Աբրահամյանը, Կլիմենտ Հարությունյանը, Հակոբ Գրիգորյանը իրենց մի շարք աշխատություններում Արցախի վերոհիշյալ շրջանի պատմությանն անդրադարձել են ավելի խորացված կերպով: Նրանցից առաջինը՝ Փառո Շահրամանյանը 1958 թ. Ստեփանակերտում 48 էջանոց գրքույկ է հրատարակել 1941-1945 թթ. ԼՂԻՄ-ի կոմերիտական կազմակերպության գործունեության, իսկ Հրանտ Շահրամանյանը 1964 թ. Բաքվում թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարզի կուսակցական կազմակերպության պատմության վերաբերյալ: Երկու ուսումնասիրություններն էլ կատարվել են 1950-1960-ական թվականներին և իրենց վրա կրում են խորհրդային վարչահրամայական, միակուսակցական համակարգի ժամանակաշրջանին բնորոշ թերություններ, ինչպիսիք են՝ ցիտատամոլությունը, իրականության գունազարդումը, գաղափարական կաղապարների մեջ պարփակվելը, մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի դրույթների անառարկելի դավանությունը՝ դոգմատիզմը, անհատի պաշտամունքին տուրք տալը և այլն: Չնայած ժամանակաշրջանի ոգով գրված լինելուն և դրանցից բխող բնորոշ թերություններին, այնուամենայնիվ այդ աշխատությունները պարունակում են հարուստ փաստական նյութ, որը մեր աշխատության համար դարձել է կարևոր սկզբնաղբյուր: Ինչ վերաբերում է Շահեն Մկրտչյանի 1985 թ. «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1-ին համարում տպագրած հոդվածին, ապա այն հավաստի ու արժեքավոր թվական տվյալներ է պարունակում, ինչպես 1941-1945 թթ. ԼՂԻՄ-ից ռազմաճակատ զորակոչված արցախահայերի, այնպես էլ մարտերում զոհվածների մասին, ուստի այն նույնպես մեր ատենախոսության համար կարևոր սկզբնաղբյուր է հանդիսացել: Ինչ վերաբերում է Հրանտ Աբրահամյանի, Կլիմենտ Հարությունյանի մենագրություններին ու Հակոբ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսությանը, ապա հեղինակներից առաջինը տվյալ ժամանակաշրջանի մեզ հուզող հիմնահարցի լուսաբանմանը, ինչպես արդեն նշեցինք, նվիրել է ընդամենը 20 էջ, իսկ մյուսները՝ համապատասխանաբար 17 և 13 էջ, քանի որ թիկունքի աշխատանքի ուսումնասիրությունը նրանց

համար հիմնական խնդիր չի հանդիսացել: Հրանտ Աբրահամյանը հարուստ աղբյուրագիտական բազայի վրա ստեղծել է մի ուշագրավ մենագրություն, որտեղ լուսաբանված է Արցախ-Լեռնային Ղարաբաղի պատմությունը՝ 20-րդ դարի 20-ական թվականներից մինչև 80-ական թվականների սկիզբը: Չնայած 280 էջանոց այդ մենագրության միայն 20 էջ է հատկացված մեզ հուզող հիմնահարցի լուսաբանմանը, բայց այդ քիչն էլ բավականաչափ արժեքավոր սկզբնաղբյուր է հանդիսացել մեր աշխատության համար: Ինչ վերաբերում է Կլիմենտ Հարությունյանի՝ «Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի հայ ռազմիկների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» մենագրությանը (ռուսերեն), ապա այն, ինչպես երևում է վերնագրից, ամբողջովին նվիրված է ռազմաճակատում արցախահայերի կատարած մարտական սխրանքների լուսաբանմանը: 526 էջանոց այդ ստվարածավալ, հիմնականում Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նյութերի հիման վրա գրված աշխատության միայն 17 էջն է նվիրված թիկունքի աշխատանքների լուսաբանմանը: Սակայն այդքանն էլ մեծ արժեք է ներկայացնում մեր մենագրության համար և նույնպես կարևոր սկզբնաղբյուր է հանդիսացել մեր ուսումնասիրության ընթացքում: Նմանատիպ, բայց համեմատաբար փոքրածավալ (230 էջ) թեկնածուական թեզ է պաշտպանել Հակոբ Գրիգորյանը: Սակայն նրա աշխատությունը նույնպես հիմնականում նվիրված է ռազմաճակատում արցախահայերի կատարած սխրանքների վերհանմանը: Ատենախոսության միայն առաջին գլխի մեկ ենթագլխի մի մասն է նվիրված թիկունքի աշխատանքներին (ընդամենը 13 էջ): Այսպիսով, վերոհիշյալ երեք հեղինակները նույնպես իրենց առջև հատուկ խնդիր չեն դրել լուսաբանել ԼՂԻՄ-ի 1939-1945 թթ. պատմությունը ամբողջապես, իսկ թիկունքի աշխատանքները՝ մասնավորապես: Այդ հեղինակները հիմնահարցին անդրադարձել են այնքանով, որքանով այն այս կամ այն չափով առնչվել է իրենց թեմայի հետ: Այնպես, որ մեր մենագրությունը առաջին փորձն է համապարփակ կերպով ուսումնասիրելու ԼՂԻՄ-ի պատմությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, հիմնականում վերհանելով թիկունքի աշխատանքը,

լուսաբանելով մարզի գյուղատնտեսության, արդյունաբերության, կրթության, առողջապահության, մշակույթի հետ առնչվող հարցեր, համառոտակի անդրադառնալով նաև ռազմաճակատում արցախահայերի կատարած սխրանքներին:

Ժամանակագրական առումով թեկուզ մեր ուսումնասիրության սահմանները պարփակվում են հիմնականում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներով՝ 1939-1945 թթ., բայց արծարծված որոշ հարցերի ընդգրկման ժամանակաշրջանն ավելի լայն է և առնչվում է ԼՂԻՄ-ի ավելի վաղ ու ներկա պատմական իրադարձությունների հետ, որոնք բախտորոշ նշանակություն են ունեցել արցախահայերի կյանքում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1 սեպտեմբերի 1939 թ. – 21 հունիսի 1941 թ.)

1. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԼՂԻՄ-ԻՑ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐԸ ԶՈՐԱԿՈՉՎԱԾ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Առաջին համաշխարհային պատերազմից պարտված դուրս եկած Գերմանիան օգտագործելով կապիտալիստական երկրների միջև եղած սուր հակասությունները, կարողացավ 1920-1930-ական թվականներին ոչ միայն վերականգնել իր ռազմական արդյունաբերությունը, այլև 1933 թվականի հունվարի 30-ին, երբ իշխանության գլուխ անցավ ռազմատենչ ֆաշիստական կուսակցությունը Ադոլֆ Հիտլերի գլխավորությամբ, բացահայտ բռնել պատերազմի ուղին: Օգտվելով Եվրոպայում իր համար ստեղծված բարենպաստ պայմաններից, ֆաշիստական Գերմանիան 1939 թ. սեպտեմբերի 1-ին հարձակվեց Լեհաստանի վրա, որով սկիզբ դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմին: Սեպտեմբերի 3-ին Անգլիան ու Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Պատերազմը սկսվելուց մի քանի օր առաջ՝ 1939 թ. օգոստոսի 23-ին, Մոսկվայում նախորդել էր Խորհրդային Միության և ֆաշիստական Գերմանիայի միջև 10 տարի ժամանակով չհարձակման կնքված պայմանագրի և դրան կից գաղտնի արձանագրության ստորագրումը: Գաղտնի արձանագրության համաձայն, երկու երկրները որոշում էին Մերձբալթիկայում և Լեհաստանում իրենց ազդեցության գոտիներն ու շահերը[1]: Գերմանական զորքերը կարճ ժամանակաընթացքում ծնկի բերեցին լեհական բանակը և շարժվեցին դեպի արևելք:

---

[1] Великая Отечественная война. Книга 1, Суровые испытания, М., изд. «Наука", 1998, с. 26-27.

Սեպտեմբերի 17-ին խորհրդային զորքերն անցան լեհական սահմանը և մինչև սեպտեմբերի 25-ը խորացան դեպի արևմուտք, ազատագրելով Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի այն շրջանները, որոնք 1920 թ. Խորհրդային Ռուսաստանից զավթել էր պանական Լեհաստանը: Դրա հետևանքով ԽՍՀՄ արևմտյան սահմանները արևմուտք տարվեցին 250-350 կմ: Ազատագրված տարածքները, որտեղ ապրում էին ավելի քան 7 միլիոն ուկրաինացիներ ու 3 միլիոն բելառուս, միավորվեցին Ուկրաինական և Բելոռուսական խորհրդային հանրապետություններին[2]:

Դրանից հետո Խորհրդային Միության կառավարությունը դիմեց մերձբալթյան երեք պետությունների՝ էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի կառավարություններին փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու առաջարկով, որն ընդունվեց նրանց կողմից: Սեպտեմբերի 28-ին էստոնիայի, հոկտեմբերի 5-ին Լատվիայի և հոկտեմբերի 10-ին Լիտվայի հետ Մոսկվայում կնքվեցին փոխադարձ օգնության պայմանագրեր, որոնց համաձայն Կարմիր բանակի զորամասերը մտան այդ երկրների տարածքն ու տեղակայվեցին այնտեղ: 1940 թ. ամռանը էստոնիան, Լատվիան ու Լիտվան մտան ԽՍՀՄ-ի մեջ, որպես համահավասար խորհրդային հանրապետություններ: Դրա հետ մեկտեղ Խորհրդային Միությունը կարողացավ խաղաղ ճանապարհով վճռել նաև Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի հարցը, որոնք 1917-1918 թթ. Ռումինիան զավթել էր Ռուսաստանից, Բեսարաբիան միացվեց Մոլդովական ինքնավար հանրապետությանը, որից հետո կազմավորվեց Մոլդովայի Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն, իսկ Հյուսիսային Բուկովինան հանձնվեց Ուկրաինական ԽՍՀ-ին: Դրա հետևանքով խորհրդային պետական սահմանները դեպի արևմուտք տարվեցին ավելի քան 200 կմ[3]:

Արևմուտքում և Մերձբալթիկայում իր սահմանները ամրապնդելուց հետո Խորհրդային Միության կառավարությունը սկսեց ուղիներ փնտրել ԽՍՀՄ հյուսիսարևմտյան սահմանների ամրա-

---

[2] История Второй мировой войны 1939-1945, т. 3, Начало войны. Подготовка агрессии против СССР, М., Воениздат, 1974, с. 357.

[3] Նույն տեղում, էջ 371

պնդման համար: 1939 թ. հոկտեմբեր-նոյեմբերին ԽՍՀՄ կառավարությունը առաջարկեց Ֆինլանդիայի կառավարությանը՝ խորհրդա-ֆիննական պետական սահմանագիծը, որն անցնում էր Լենինգրադից հյուսիս 32 կմ հեռավորության վրա, 20-25 կմ ետ քաշել դեպի Կարելյան պարանոց և ԽՍՀՄ-ին զիջել 276 քառ. կմ տարածք: Դրա փոխարեն Խորհրդային Միությունը Ֆինլանդիային էր զիջում երկու անգամ ավելի շատ տարածք՝ 552.9 քառ. կմ Խորհրդային Կարելիայից: Սակայն Ֆինլանդիայի կառավարությունը Անգլիայի և Ֆրանսիայի դրդմամբ չհամաձայնվեց այդ առաջարկության հետ և սկսեց ավելի ամրապնդել Լենինգրադից 32 կմ հյուսիս, Կարելյան պարանոցում, գերմանական, անգլիական և ֆրանսիական զինվորական մասնագետների օգնությամբ 1927-1939 թթ. կառուցված երկարատև ամրությունների համակարգը՝ «Մաններհայմի գիծը», որն ուներ 135 կմ երկարություն և 90 կմ խորություն, որտեղ տեղադրված էին 2000-ից ավելի երկարատև կրակակետեր (դոտեր ու դզոտներ)[4]: 1939 թ. նոյեմբերի 30-ին խորհրդային զորքերն անցան հարձակման և մինչև 1940 թ. մարտի 13-ը մեծ դժվարությամբ ու հսկայական կորուստների գնով ճեղքեցին անանցանելի համարվող «Մաններհայմի գիծը»: 105 օր տևած մարտական գործողությունների ժամանակ, որոնք ընթանում էին ձմեռային սաստիկ սառնամանաիքների և անանցանելի անտառոտ, քարքարոտ տեղանքում, խորհրդային զորքերը կորցրեցին 333084 մարդ, որից՝ 65384 սպանված, 19610 անհայտ կորած, 186584 վիրավոր, 1892 ցրտահարված[5]: Մարտի 13-ին Մոսկվայում Խորհրդային Միության և Ֆինլանդիայի միջև կնքված պայմանագրով ավարտվեց Խորհրդա-ֆիննական պատերազմը, պետական սահմանը զգալի չափով հետ քաշվեց «Մաններհայմի գծից» հյուսիս, որի հետևանքով զգալի չափով ամրապնդվեց ԽՍՀՄ հյուսիսարևմտյան սահմանների անվտանգությունը: Չնայած մարտի դաշտում կրած վիթխարի կորուստներին, խորհրդային ռազմիկները ձմեռային և բնակլիմայական ծանր պայմաններում ցուցաբերեցին արիության ու տոկունության բազմաթիվ օրինակներ: Ավե-

[4] Россия и СССР в войнах XX века. Потери вооруженных сил. Статистическое исследование, М., изд. "ОЛМА-ПРЕСС", 2001, с. 189.
[5] Նույն տեղում, էջ 195:

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

լի քան 50000 զինվոր ու սպա արժանացան կառավարության զանազան պարգևների, իսկ 412 հոգու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Ըստ ազգային կազմի հերոսներից 284-ը ռուսներ էին, 85-ը՝ ուկրաինացի, 13-ը՝ բելոռուս, 4-ը՝ հայ, 3-ը՝ վրացի և այլն: Ադրբեջանցիները Խորհրդա-ֆիննական պատերազմում Խորհրդային Միության հերոս չեն ունեցել: Այնինչ միայն ԼՂԻՄ-ից 3 հայ՝ 7-րդ բանակի հրետանու պետ, դիվիրամ Միքայել Արտեմի Պարսեղովը (Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Կոլխոզաշեն գյուղից), դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Գրիգոր Միքայելի Հայրապետյանը (Մարտակերտի շրջանի Մինգրելս գյուղից) և գնդացրային դասակի հրամանատարի օգնական Իսահակ Մարկոսի Մանասյանը (Մարտունու շրջանի Խերխան գյուղից), դարձան Խորհրդային Միության հերոսներ[6]: Այդ պատերազմում իր մարտական առաջին մկրտությունը ստացավ Գարեգին Շեգիի Բալայանը (ԼՂՀ Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղից), որը Հայրենական մեծ պատերազմում արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության կոչում ստացան նաև Հյուսիսային Արցախի հայորդիներ՝ ծովակալ Հովհաննես Ստեփանի Իսակովը (Տեր-Իսահակյան, Գետաշենի ենթաշրջանի Հաջիքենդ գյուղից) և տանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը (Չարդախլու գյուղից): Իրենց մարտական առաջին մկրտությունը Խորհրդա-ֆիննական պատերազմում ստացած արցախահայերի թվում էին՝ տանկիստ, ավագ սերժանտ Եփրեմ Գրիգորի Ղարիբյանը (Մարտունու շրջանի Գիշի գյուղից), որը Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար ներկայացվեց հերոսի կոչման, սակայն պարգևատրվեց Լենինի շքանշանով: Խորհրդա-ֆիննական պատերազմի ակտիվ մասնակիցներից էր նաև հեծյալ գնդի հրամանատար, մայոր Բագրատ Իվանի Իսահակյանը (Շուշի քաղաքից), որը Հայրենական մեծ պատերազմի տարիներին դարձավ մեքենայացված բրիգադի հրամանատար, ապա արժանացավ տանկային զորքերի գեներալ-մայորի կոչման: Խորհրդա-ֆիննական

---

[6] Книга о героях, с. 11-16.

պատերազմում իր առաջին մկրտությունը ստացած հայորդիների թվում էր նաև հետագայում գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Քրիստափոր Իվանի Իվանյանը: «Մաններհայմի գիծը» ճեղքողների թվում էին՝ գումարտակի կոմիսար, ավագ քաղղեկ Արիստակես Համբարձումի Գաբրիելյանը (Մարտակերտի շրջանի Կարադաղ գյուղից), գնդացրային վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Արամ Ադամի Պետրոսյանը (Շուշիի շրջանի Մեծ Կալադարասի գյուղից), բժշկուհի Ելենա Տիգրանի Բոռնազյանը (Շուշի քաղաքից) և շատ ուրիշներ: Ըստ ԼՂՀ զինվորական կոմիսարիատի տվյալների Խորհրդա-ֆիննական պատերազմին ԼՂԻՄ-ից մասնակցել են ավելի քան 1000 արցախահայ, որոնց շուրջ 100-ը զոհվել են մարտերում[7]:

Հարկ է նշել, որ ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին, այնպես էլ նրա առաջին փուլում, երբ արդեն խիստ շիկացած էր միջազգային դրությունը ամբողջ աշխարհում, ստիպեց Խորհրդային Միության կառավարությանը համապատասխան միջոցառումներ կիրառել երկրի պաշտպանունակության ամրապնդման բնագավառում: Նման միջոցառումների թվում էր պաշտպանական աշխատանքների ծավալումը: Համ Կ(բ)Կ 18-րդ համագումարը (1939 թ. մարտի 10-21) որոշում ընդունեց հանրապետությունների մարզերում և շրջաններում ռազմական բաժիններ բացելու մասին: Այդ որոշման համաձայն նման բաժին բացվեց նաև ԼՂԻՄ-ում: Հանրապետության, մարզային և շրջանային ռազմական բաժինները կոչված էին բարելավելու պաշտպանական աշխատանքները տեղերում: ԼՂԻՄ մարզային և շրջանային ռազմական բաժինները իրենց ստեղծման առաջին օրվանից սկսեցին սերտ կապեր հաստատել, ինչպես մարզային, այնպես էլ շրջանային զինվորական կոմիսարիատների, ինչպես նաև բոլոր հասարակական մարզապաշտպանական կազմակերպությունների (ՊԱՋԸԱվիաքիմ, Կարմիր կիսալուսին, Ֆիզիկական կուլտուրայի կոմիտե և այլն) հետ: Դա շուտով տվեց իր դրական արդյունքը: 1939 թ. աշնանը Կարմիր բանակի շարքերը զորակոչվածների 49.7%-ը հանդիսա-

---

[7] Ավելի մանրամասն այդ մասին տե՛ս Կ. Ա. Հարությունյան, Հայ ռազմիկների մասնակցությունը Խորհրդա-ֆիննական պատերազմին, Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2008:

նում էին «Պատրաստ աշխատանքի և երկրի պաշտպանության» կրծքանշանակիրներ, 63.1%-ը՝ Վորոշիլովյան հրաձիգներ, 63.6%-ը հակաօդային պաշտպանության դասընթացներում սովորածներ և այլն: Միայն 1939 թ. ընթացքում մարզում 1519 հոգի հանձնել են Վորոշիլովյան հրաձգի կրծքանշանի 1-ին աստիճանի նորմաները, իսկ 27-ը՝ 2-րդ կարգի, 7522 հոգի հանձնել են հակաքիմիական և հակաօդային պաշտպանության 1-ին աստիճանի նորմաները, իսկ 153-ը՝ 2-րդ կարգի, 1919-ը դարձել են «Պատրաստ աշխատանքի և երկրի պաշտպանության», իսկ 3757-ը՝ «Պատրաստ սանիտարական պաշտպանության» կրծքանշանակիրներ[8]: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Խորհրդա-ֆիննական պատերազմում հերոսի կոչման արժանացած Գրիգոր Հայրապետյանը մինչև Կարմիր բանակի շարքեր զորակոչվելը հանձնել էր Վորոշիլովյան հրաձգի կրծքանշանի 1-ին և 2-րդ աստիճանի նորմաները, մարզում և հանրապետությունում առաջին տեղը գրավել նռնականետման գծով:

1941 թ. մարտի 4-7-ը տեղի ունեցավ ԼՂԻՄ կուսակցական կազմակերպության 11-րդ պլենումը, որտեղ խոսելով 1939 թ. զորակոչի մասին մարզի զինկոմ Կիրիլովը նշել է, որ այն ընթացել է հաջողությամբ: Զորակոչիկներից 45 հոգի ունեցել են բարձրագույն կրթություն, իսկ 40 տոկոսը՝ միջնակարգ կրթություն[9]:

1940 թ. վերջերին մարզում 1939 թ. համեմատ պատրաստվեցին երկու անգամ ավելի շատ Վորոշիլովյան հրաձիգներ, դիպուկահարներ, գնդացրորդներ, նռնականետողներ, բուժքույրեր և այլն: Ոատի պատահական չէր, որ ԼՂԻՄ-ից բանակ զորակոչվածները, ինչպես Խորհրդա-ֆիննական, ապա Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկան իրենց կատարած սխրանքներով և մարտավարական ունակություններով:

2. ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Խորհրդա-ֆիննական պատերազմի ավարտի վերջին օրերը համընկան ԼՂԻՄ-ի կուսակցական կազմակերպության 11-րդ մարզային կոնֆերենցիայի աշխատանքների հետ, որոնք տեղի

---

[8] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, л. 74.
[9] Նույն տեղում, թ. 47:

ունեցան 1940 թ. մարտի 4-7-ը: Մարզկոմի հաշվետվությամբ զեկուցումով հանդես եկավ մարզկոմի 1-ին քարտուղար Մուշեղ Ավագի Գրիգորյանը: Անդրադառնալով այդ պատերազմում խորհրդային զորքերի կողմից 1940 թ. գարնան սկզբին «Մաններհայմի գծի» ճեղքմանը և մարտական գործողություններում ձեռք բերված հաջողություններին, Մ. Ա. Գրիգորյանը նշեց նաև մարզի արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրական շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողությունների մասին[10]: Հաշվետու զեկուցման մեջ բերված փաստերը ցույց են տալիս, որ երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլում ԼՂԻՄ-ը ուներ համեմատաբար զարգացած թեթև արդյունաբերություն, որի հիմնական ճյուղը մետաքսի արդյունաբերությունն էր: Մետաքսարդյունաբերությունը ԼՂԻՄ-ի ժողովրդական տնտեսության կարևոր ճյուղն էր հանդիսանում, որը սկիզբ է առել դեռևս 19-րդ դարի 60-ական թվականներից: Մետաքսարդյունաբերության զարգացման համար մարզում կային նպաստավոր պայմաններ: Այսպես, օրինակ, մարզում զարգացած էր շերամապահությունը, որը տալիս էր մետաքսի հումք: Մարզը հարուստ էր անտառներով, որոնք վառելանյութի բնական պաշարներ էին հանդիսանում: Մարզն ուներ նաև հորդառատ գետեր, որոնք դարձան հիդրոէլեկտրակայանների կառուցման անսպառ աղբյուրներ: Իսկ ինչպես հայտնի է, առանց էներգետիկայի զարգացման, արդյունաբերությունը չի կարող գոյատևել: Բացի այդ հայկական հինավուրց երկրամասի բնակչությունը, որը հակում ուներ դեպի գորգագործությունը, տնային մետաքսակարժումն ու ջուլհակագործությունը և աչքի էր ընկնում իր աշխատասիրությամբ, կարևոր աշխատուժ էր հանդիսանում մետաքսարդյունաբերության համար: Դեռևս ցարական Ռուսաստանում Շուշիի գավառը որոշակի տեղ է գրավել մետաքսաթելի արտադրության բնագավառում, աչքի ընկել իր բարձր որակով ու մշտապես պահանջարկ ունեցել Ռուսաստանում և արտասահմանում: Ինչպես իր աշխատության մեջ նշում է Ա. Բ. Զախարյանը «Մինչև առաջին իմպերիալիստական պատերազմը Շուշու գավառի տարբեր գյուղերում և Շուշի քաղաքում

[10] Նույն տեղում, թ. 42:

գոյություն ունեին մետաքսաթելի 36 փոքրիկ ֆաբրիկաներ՝ 1590 մետաքսակարժական թասերով և 10 ոլորման ֆաբրիկաներ՝ 8888 իլիկներով: Այդ ֆաբրիկաներից 33-ը կառուցվել են 1865-1900-ական թվականների ընթացքում: Ըստ շրջանների այդ ձեռնարկությունները տեղավորված էին հետևյալ կերպ. Խաչեն (այժմվա Ստեփանակերտի և Շուշվա շրջանները միասին) – 24 փոքրիկ մետաքսակարժային ֆաբրիկա, 7 ոլորման ֆաբրիկա, Դիզակ (Հադրութ)՝ 943, Վարանդա (Մարտունի)՝ 2 և 0, Զրաբերդ (Մարտակերտ)՝ 1 և 0: Ընդամենը 36 և 10: Այդ թվում Շուշի քաղաքում՝ 2 ոլորման ֆաբրիկա»[11]: Այնուհետև, Առաջին համաշխարհային պատերազմի, ինչպես և 1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխության տարիներին և 1918-1920 թթ. քաղաքացիական պատերազմների և հայադրբեջանական կռիվների հետևանքով քայքայվեց մետաքսի արդյունաբերությունը: Լեռնային Ղարաբաղում, իրենց աշխատանքները դադարեցրեցին վերոհիշյալ բոլոր ձեռնարկությունները: Երկրամասում խորհրդային կարգեր հաստատվելուց և ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո մարզի կուսակցական և խորհրդային մարմինները ձեռնամուխ եղան մետաքսի արդյունաբերության վերականգնման գործընթացին: Սկզբում այդ աշխատանքները ընթացան մասնավոր ձեռնարկությունների պետականացման միջոցով, ապա երբ 1925 թ. հուլիսի 6-ին կազմակերպվեց մետաքսակարգային ֆաբրիկաների պետական տրեստը՝ «Ղարմետաքսարդյունաբերությունը», ապա այդ գործը ղեկավարեց նորաստեղծ տրեստը: Առաջին հերթին պետականացվեցին մասնավոր փոքրիկ ձեռնարկությունները, իսկ երբ 1929 թ. սեպտեմբերի 29-ին ավարտվեց Ստեփանակերտի 26 կոմիսարների անվան խոշոր մետաքսակարժային ֆաբրիկան, ապա առաջին հնգամյակի տարիներին (1929-1933 թթ.) մարզի մետաքսի արդյունաբերությունը կենտրոնացվեց Ստեփանակերտում: 1940 թ. ֆաբրիկան արտադրեց 99 տոննա մետաքսաթել՝ 26 տոննա ոլորման մետաքսաթել՝ 1926 թ., 12.3 տոննա մետաքսաթելի և 1.5 տոննա ոլորման մետաքսաթելի փոխարեն: 1940 թ. ֆաբրիկան արտադ-

[11]Ա. Բ. Զախարյան, Լեռնային Ղարաբաղի մետաքսարդյունաբերությունը, էջ 51-52:

ռեց նաև 120000 քառակուսի մետր գործվածք: 1926 թ. մարզում գործվածք չի արտադրվել[12]:

1925 թ. փետրվարին ԼՂԻՄ-ի ժողկոմխորհը որոշում ընդունեց նաև մարզի անտառային և սպիրտի արդյունաբերության, էլեկտրաէներգիայի զարգացման և գյուղատնտեսական մթերքների վերամշակման ուղղությամբ[13]: Ըստ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանի «քանի որ սպիրտի և մետաքսի արտադրության ընդլայնումն ամենից առաջ կապված էր այգեգործության և շերամապահության զարգացման հետ, ուստի մարզում շեշտը դրվում է գյուղատնտեսության այդ ճյուղերի խթանման վրա»[14]: Նախապատերազմյան տարիներին Վարանդայում և Դիզակում կառուցվել էին օղեթորման գործարաններ, որոնք ղեկավարվում էին Լեռնային Ղարաբաղի գինու և սպիրտի տրեստի՝ Ղարգինտրեստի կողմից[15]: Երեսունական թվականներին Ասկերանի և Կարմիր շուկայի գործարանները արտադրում էին կոնյակի հումք, որոնք փոխանակ տեղում կոնյակ արտադրելու, տարվում էին Բաքու և այնտեղի կոնյակի գործարանում թողարկում որպես բարձրակ կոնյակ: Դա զգալի չափով վնաս էր հասցնում ԼՂԻՄ-ի խմիչքի արդյունաբերությանը, ցույց տալիս Ադրբեջանի խտրական տնտեսական քաղաքականությունը հայկական մարզի հանդեպ: 1936 թ. ամռանը Ղարգինսովխոզտրեստի մի շարք ձեռնարկություններ հանձնվեցին 1934 թ. կազմավորված Լեռնային Ղարաբաղի տեղական արդյունաբերության կոմբինատի կառավարմանը: Տեղարդկոմբինատի մեջ էին մտնում՝ Ստեփանակերտի փայտամշակման ֆաբրիկան, մեխանիկական նորոգման և կարի արհեստանոցները, կղմինդրի ու կրի գործարանները, քարի ու ավազի հանքերը: Վանքի ջրաղացքարերի հանքը, Շուշիի գորգագործական ֆաբրիկան, Ստեփանակերտի սննդամթերքի արտադրության կոմբինատը և այլն[16]: Տեղական արդյունաբերության մեջ զգալի տեղ էր հատկացված

---

[12] Նույն տեղում, էջ 85:
[13] ԼՂՀ ՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 7, թ. 14-16:
[14] Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Բ, էջ 34:
[15] ԼՂՀ ՊԱ, ֆ. 33, ց. 1, գ. 45ա, թ. 5 (1933 թ. տրեստը վերանվանվեց Ղարաբաղի գինու և սովխոզների տրեստի):
[16] Նույն տեղում, գ. 210, թ. 4:

փայտամշակությանը: Ըստ Հրանտ Աբրահամյանի մարզի փայտանյութի ընդհանուր պաշարը 1934 թ. տվյալներով կազմում էր 15557000 խորանարդ մետր[17]: Սակայն փայտանյութի շահագործումը մարզում Ադրբեջանի կառավարության կողմից կատարվում էր գիշատիչ կերպով: Այսպես, օրինակ, Հադրութի և Մարտակերտի շրջաններում գործող սղոցարանները գիշեր-ցերեկ աշխատում էին Ադրբեջանի մի շարք քաղաքների կահույքի ֆաբրիկաների համար՝ նրանց մատակարարելով թանկարժեք անտառանյութ:

Տեղական արդյունաբերության զարգացմանը օժանդակում էր նաև տնայնագործությունը: 1936 թ. մարզում գոյություն ուներ տնայնագործական 24 արտել, որտեղ աշխատում էր 694 արհեստավոր[18]: Արհեստագործական կոոպերացիայի արտելներում զբաղվում էին՝ սայլերի արտադրությամբ, որոնք ունեին ինչպես տնտեսական, այլև պաշտպանական նշանակություն, մշակում էին կաշի ու մորթի, պատրաստում էին կավե անոթներ, կարասներ, խնոցիներ, պուլիկներ, փայտե շերեփներ, գդալներ, գրտնակներ, թակեր, հյուսում էին ծղոտե զամբյուղներ, հացթուխի գործիքներ, կարում շորեր, տրեխներ, արտադրում ջրաղացքարեր, երկանքներ, սանդեր, ճախարակներ, իլիկներ, պայտեր և այլն:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական տնտեսության ստեղծման և նրա հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ուներ էներգետիկ բազայի ապահովման հարցը: Այդ նպատակով դեռևս 1930 թ. Կարկառ գետի վրա (Ասկերանի շրջան) շահագործման հանձնվեց 225 կվտ հզորությամբ հիդրոէլեկտրակայան: Երեսնական թվականների առաջին կեսում փոքր հզորության հիդրոէլեկտրակայաններ կառուցվեցին նաև Շուշիում, Մարտակերտում, Հադրութում, Մարտունիում և մի շարք այլ վայրերում: 1931 թ. Թարթառ գետի վրա (Մարտակերտի շրջան) սկսվեց մեծ հզորության հիդրոէլեկտրակայանի կառուցումը, որի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1940 թվականին: Չնայած դրան, ԼՂԻՄ-ի գյուղական բնակավայրերի մեծ մասը զուրկ էր էլեկտրական լուսավորությունից, որովհետև արտադրված էլեկտրաէներգիայի

---

[17] Հրանտ Աբրահամյան, նշված աշխատությունը, էջ 47:
[18] Նույն տեղում, էջ 46:

առյուծի բաժինը տրվում էր ադրբեջանական բնակավայրերին: Այսպես, օրինակ, Կարկառի հիդրոէլեկտրակայանը հոսանք էր մատակարարում Ասկերան և Շուշի քաղաքներին, որոնց բնակչության մեծ մասը ադրբեջանցիներ էին, ինչպես նաև Ստեփանակերտի արդյունաբերական ձեռնարկություններին, իսկ Թարթառի հիդրոէլեկտրակայանը՝ ԼՂԻՄ-ին սահմանակից ադրբեջանական Միր-Բաշիրի և Բարդայի շրջաններին: Չնայած հայկական մարզում արտադրված էլեկտրաէներգիայի անարդար բաշխմանը, այնուամենայնիվ էներգետիկ բազայի ստեղծումը զգալի չափով ազդեց մարզի արդյունաբերության զարգացման վրա: Այսպես, օրինակ, 1940 թվականին արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների արտադրանքը 1932 թ. համեմատությամբ ավելացավ ավելի քան 2 անգամ, բանվորների թիվը 2118-ից հասավ շուրջ 4000-ի, զգալի չափով ավելացավ նրանց աշխատավարձը, բարելավվեցին կենցաղային պայմանները: Միայն տեղական արդյունաբերության ձեռնարկությունների թողարկած արտադրանքը 1940 թվականին 1930 թ. մակարդակը գերազանցեց 11 անգամ[19]:

1920-1930-ական թվականներին, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին, ԼՂԻՄ-ում զգալի չափով զարգացում ապրեց նաև գյուղատնտեսությունը, որը հանդիսանում էր մարզի ժողովրդական տնտեսության հիմնական բնագավառը: Չնայած գյուղի համատարած կոլեկտիվացման ժամանակ թույլ տրված մի շարք կոպիտ սխալների, այնուամենայնիվ 1940 թ. վերջերին մարզում կոլեկտիվացման ընթացքը համարյա ավարտվելու վրա էր և այն կազմում էր 97.7%: Կոլտնտեսությունների համախառն եկամուտը նույն ժամանակամիջոցում հասավ 33174475 ռուբլու: 1940 թ. վերջերին մարզում կար 200 կոլտնտեսություն[20]: Գյուղատնտեսության հիմնական ճյուղերը հանդիսանում էին անասնապահությունը, հողագործությունը, այգեգործությունը և բանջարաբուծությունը: 1930 թ. համեմատությամբ 1941 թ. հունվարի 1-ին մարզում 1.5 անգամ աճել էր բոլոր տեսակի անասունների գլխաքանա-

---

[19] ԼՂՀ ՊԱ, ֆ. 82, ց. 1, գ. 21, թ. 19:
[20] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, л. 62.

կը հասնելով 300.2 հազարի, որի 52%-ը պատկանում էր կոլտնտեսություններին ու պետական տնտեսություններին[21]:

Այսպես, օրինակ, միայն կոլտնտեսություններին պատկանող խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, կազմում էր 52272, ոչխարներինը՝ 48528, այծերինը՝ 10359, խոզերինը՝ 16248, ձիերինը՝ 5512, էշերինը՝ 137, ջորիներինը՝ 137[22]: Բոլոր կոլտնտեսություններում կային անասնապահական ֆերմաներ: Ընդ որում երեքական ֆերմա ունեին 99, երկուական՝ 98, մեկական՝ 3 կոլտնտեսություն[23]: Անասնաքանակի ավելացման հետ զուգահեռ աշխատանք էր տարվում անասունների ցեղատեսակների բարելավման ու զարգացման, մսատվության, կաթնատվության և բրդատվության բարձրացման ուղղությամբ. եթե 1937 թ. կոլտնտեսությունները պետությանը տվեցին 169888 ռուբլու բուրդ, ապա 1939 թ. տվեցին 347300 ռուբլու, այսինքն աճը կազմեց 104%[24]:

Անասնապահության զարգացման կարևոր պայմաններից էր կերի կայուն բազա ստեղծելը: 1940 թվականին՝ 1937 թ. համեմատությամբ 781 հեկտարով ավելացան անասնակերի ցանքատարածությունները[25]: Չնայած խոտհարքների ցանքատարածքների ավելացմանն ու դրանց բերքատվության բարձրացմանը, չափազանց ցածր մակարդակի վրա էր գտնվում անասնակերի սիլոսացման գործընթացը: Այդ նպատակով էլ մեծ ուշադրություն դարձվեց ագրոտեխնիկական միջոցների ներդրման և կերային մշակաբույսերի բերքատվության բարձրացման վրա:

Գյուղատնտեսության մեջ կարևոր ճյուղերից էր նաև հացահատիկային մշակաբույսերի աճեցումը: Չնայած ամբողջ ցանքատարածքների 86.5%-ը հատկացված էր ցորենի ու գարու մշակմանը, այնուամենայնիվ դեռևս ցածր էր մեկ հեկտարից ստացվող հացահատիկի բերքատվությունը: Այսպես, օրինակ, 1938 թ. հացահատիկային բույսերի բերքատվությունը կազմեց 4.9 ցենտներ, իսկ 1939 թ.՝ 5.8 ցենտներ: Այնինչ մի շարք կոլտնտեսություններում մի-

---

[21] Достижение Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, с. 46-49.
[22] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, л. 62.
[23] Նույն տեղում, թ. 63:
[24] Նույն տեղում, թ. 65:
[25] Նույն տեղում, թ. 66:

ջին հաշվով հեկտարից ստանում էին 12-13 ցենտներ (Վերին Չայլու, Արաչաձոր, Խանաբադ և այլն): Ցածր բերքատվությունը պայմանավորված էր ագրոտեխնիկայի վատ ներդրումով: Այդ առումով էլ մարզի կուսակցական ու խորհրդային մարմինները մեծ ուշադրություն դարձրեցին այդ կարևոր խնդրի լուծման վրա: Շնորհիվ ձեռք առնված միջոցների 1940 թ. ավելացան, ինչպես հացահատիկային մշակաբույսերին հատկացված ցանքատարածքները, այնպես էլ ագրոտեխնիկական միջոցների ներդրումը, որը զգալի չափով ազդեց բերքատվության բարձրացման վրա: Արդեն 1940 թ. մեկ հեկտարից միջին հաշվով հավաքվում էր 8-9 ցենտներ հացահատիկ: Նշենք, որ Մարտունու շրջանում ցորենի միջին բերքատվությունը մեկ հեկտարից հասել էր 18 ցենտների: Այդ նույն ժամանակաընթացքում ԼՂԻՄ-ում կատարած հացահատիկային մշակաբույսերի ցանքսը ավելացել էր 1.2 անգամ և կազմել 81969 հեկտար[26]: Գարնանացանի, բերքահավաքի և աշնանացանի աշխատանքներին կոլտնտեսություններին մեծ օգնություն էին ցույց տալիս շրջանային մեքենատրակտորային կայանները:

Նախապատերազմական տարիներին ԼՂԻՄ-ի Մարտակերտի շրջանում զարգացած էր բամբակագործությունը: Շնորհիվ ագրոտեխնիկայի ներդրման և աշխատանքի ճիշտ կազմակերպման 1939 թ. շրջանը բամբակի մթերման պլանը կատարեց 130.3%-ով՝ պետությանը հանձնելով 48072 ցենտներ բամբակ[27]: Հարկ է նշել, որ եթե 1930 թ. մեկ հեկտարից ստացվում էր 7.3 ցենտներ բամբակ, ապա 1937 թ. ստացվում էր 43.67 ցենտներ[28]:

Հետաքրքիր է նշել, որ Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Մարտակերտի շրջանի 5 կոլտնտեսություն և 1 խորհրդային տնտեսություն (սովխոզ) զբաղվում էին կաուչուկի մշակաբույսի աճեցմամբ, որի անհրաժեշտությունը հատուկ նշանակություն ուներ ժողովրդական տնտեսության համար և կարևոր ռազմավարական հումք էր հանդիսանում ռեզինատեխնիկական արդյունաբերության համար: Այդ մշակաբույսի աճեցումը հատկապես հաջողությամբ էր

---

[26] Достижение Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, с. 50.
[27] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, л. 67.
[28] «Խորհրդային Ղարաբաղ», 8 հունվարի 1937 թ.:

ընթանում Մարտակերտի շրջանում, որտեղ ստեղծվել էր «Պիոներ-Ղարաբաղ» տեսակի սերմը, որը բավական լավ էր հարմարվել տեղի կլիմայական պայմաններին և ուներ բարձր բերքատվություն: Պատերազմի նախօրյակին խնդիր էր դրվել Մարտակերտի շրջանում ավելացնել կաուչուկի աճեցման պլանտացիաների տարածքները և ավելի շատ զբաղվել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այդ եկամտաբեր մշակաբույսի աճեցմամբ[29]: Այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հազիվ թե հիշեն, որ մի 70 տարի առաջ, հանրապետության տարածքում աճեցրել և ստացել են կաուչուկի բերք: Այդ ռազմավարական կարևոր նշանակության ունեցող մշակաբույսի պլանտացիաների վերականգնումը, մեր կարծիքով, այժմ հրատապ նշանակություն ունի, քանի որ կաուչուկի կիրառումը ժողովրդական տնտեսության մեջ խիստ անհրաժեշտ է դարձել նաև մեր օրերում: Ուստի նպատակահարմար եմ գտնում հարց բարձրացնել ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության առջև հանրապետությունում վերականգնել կաուչուկաբուծությունը:

Պատերազմի նախօրյակին մարզում զգալի չափով զարգացած էր նաև այգեգործությունը՝ հատկապես խաղողագործությունն ու թթենու մշակությունը: Մարզում եթե 1936 թ. փետրվարի դրությամբ կային 3650 հեկտար թթենու, խաղողի և այտղատու այլ այգիներ, ապա 1938 թ. վերջերին այն ավելացավ 3840 հեկտարով, այսինքն՝ կրկնապատկվեց: Դրա հետևանքով մարզի կոլտնտեսությունների դրամական եկամուտները 1938 թ. կազմեց 4106000 ռուբլի: Սակայն կարկտահարության հետևանքով 1939 թ. եկամուտը նվազեց և կազմեց 3519900 ռուբլի[30]: Մի շարք կոլտնտեսություններում եկամտի նվազումը հետևանք էր նաև այգիների վատ խնամքի, բարձիթողի էր արված այգիների բուժման ընթացքը, քանի որ Բաքվից ժամանակին չէին ուղարկվում համապատասխան թունաքիմիկատներ՝ այգիները սրսկելու համար: Այսպես օրինակ, խաղողի որթերը ժամանակին չսրսկելու հետևանքով 60-80 ցենտներ բերքի փոխարեն ստացվում էր 12-13 ցենտներ: 1940 թ. մարտի 4-7-ը Ստեփանակերտում տեղի ունեցած ԼՂԻՄ 11-րդ կուսակցական կոնֆերանսը

---

[29] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, л. 68.
[30] Նույն տեղում:

մեծ ուշադրություն դարձրեց այդ հարցին և որոշեց տարվա ընթացքում վերացնել նկատված թերությունները, կարգի բերել այգեգործության վիճակը և հասնել բարձր բերքատվության[31]:

Պատերազմի նախօրյակին մարզի գյուղատնտեսության մեջ բավարար չափով տեղ էր տրված նաև բանջարաբուծությանը և այդ նպատակին հատկացված էր 1100 հեկտար: Սակայն ցածր բերքատվության պատճառով կոլտնտեսությունները չէին կարողանում բավարարել քաղաքային բնակչության պահանջները: Մարզի առևտրական կազմակերպությունները ստիպված էին դրսից ներմուծել կարտոֆիլ, թթու դրած կաղամբ, լոլիկ, վարունգ, բադրիջան, բիբար, սոխ, սխտոր և այլն: Կուսակցության մարզային 11-րդ կոնֆերանսը անդրադարձավ նաև այս հարցին և գյուղատնտեսության համապատասխան բնագավառի աշխատողների առջև խնդիր դրեց կարճ ժամանակում ստեղծել բանջարաբոստանային մշակաբույսերի սեփական բազա և բավարարել բնակչության պահանջները[32]:

Համեմատաբար բարձր հիմքերի վրա էր դրված շերամապահությունը, որի համար առկա էին բնական անհրաժեշտ պայմաններ, շերամորդի կերի բազա թթենու ծառաստաններ: 1938 թ. պետությանը հանձնվեց 1100 ցենտներ, իսկ 1939 թ.՝ 1203 ցենտներ շերամի բոժոժ[33]: Դա հնարավորություն էր տալիս մարզում պատշաճ հիմքերի վրա պահել մետաքսի արդյունաբերությունը:

Վերոհիշյալ ժամանակամիջոցում մարզում հատ ու կենտ մարդիկ զբաղվում էին նաև մեղվաբուծությամբ, որը կրում էր սիրողական բնույթ և չէր կարող լիովին սպառել բնակչության կարիքները:

---

[31] Նույն տեղում, թ. 69:
[32] Նույն տեղում:
[33] Նույն տեղում:

3. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔ

1920-1930-ական թվականների ընթացքում մարզի արդյունաբերության և գյուղատնտեսության շարունակական վերելքը նպաստեց բնակչության նյութական բարեկեցության աճին՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում: Տարեցտարի մեծանում էր ժողովրդական կրթության համակարգում սովորողների թիվը, բարձրանում էր բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցող մարդկանց քանակը, աճում էր մշակութային-կենցաղային հաստատությունների, դպրոցների, մանկապարտեզների, մանկամսուրների թիվը և այլն: Այսպես, օրինակ, եթե 1937-1938 ուսումնական տարում դպրոցներում սովորում էր 37221 աշակերտ, ապա 1939-1940 ուսումնական տարում սովորող աշակերտների թիվը հասավ 41680-ի: 1940 թ. մարտի դրությամբ մարզում կար 191 դպրոց, որտեղ դասավանդում էին 1796 ուսուցիչ: Եթե 1925 թ. նրանցից ոչ մեկը չուներ բարձրագույն կրթություն, ապա 1940 թ. մարտի դրությամբ նրանցից 98-ը ուներ բարձրագույն կրթություն, 234-ը ավարտել էր երկամյա ուսուցչական ինստիտուտ, 1464-ը ուներ միջնակարգ կրթություն: Բացի այդ մարզում գործում էր 6 միջնակարգ մասնագիտական ուսումնարան, որտեղ սովորում էր 1605 ուսանող[34]: Շուշիում գործում էր երկամյա ուսուցչական ինստիտուտ, որը հիմնականում ապահովում էր մարզի դպրոցները ուսուցչական կադրերով: Հետաքրքիր է նշել, որ երեսնական թվականների սկզբներին բավականաչափ քիչ էին բարձր դասարաններում սովորող աղջիկների թիվը, որովհետև նրանք վաղ հասակում էին ամուսնանում և թողում դպրոցը: Այդ ուղղությամբ տարվող աշխատանքները երեսնական թվականների վերջերին տվեցին իրենց արդյունքները: Այսպես, օրինակ, եթե 1937 թ. մարզի դպրոցներում սովորում էր 15645 աղջիկ, ապա 1939-1940 ուսումնական տարում նրանց թիվը հասավ 17802-ի[35]:

---

[34] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, л. 71.
[35] Նույն տեղում, թ. 72:

Նախապատերազմյան տարիներին մարզում զգալի աշխատանքներ տարվեցին նաև բնակչության անգրագիտության վերացման ուղղությամբ: Շնորհիվ ձեռնարկված միջոցների 1940 թ. մարզում անգրագիտությունը վերացված էր 98%-ով: Դրան մեծ չափով նպաստեցին երեսնական թվականներին գործող 646 լիկկայանները և 150 խրճիթ-ընթերցարանները, գյուղական և քաղաքային մասսայական գրադարանները, 1923 թվականից լույս տեսնող «Սովետական Ղարաբաղ» թերթը և 1932 թ. հիմնադրված Ստեփանակերտի Մաքսիմ Գորկու անվան դրամատիկական պետական թատրոնը (այժմ այդ թատրոնը կոչվում է Խորհրդային Միության ժողովրդական դերասան Վահրամ Փափազյանի անվան): Ստեփանակերտում և Շուշիում գործում էր երկու ստացիոնար կինոթատրոն, իսկ շրջանների գյուղերը սպասարկվում էին շրջիկ կինոկայանների կողմից: Պատերազմի նախօրյակին մարզկենտրոնում, շրջանային բոլոր կենտրոններում գործում էին ռադիոհանգույցներ, իսկ գյուղական բնակավայրերում ռադիոկետերի թիվը հասնում էր 2500-ի[36]: Պատերազմի նախօրյակին Ստեփանակերտում, Շուշիում և շրջանային կենտրոններում գործում էին հեռախոսակայաններ: Սակայն գյուղական բոլոր բնակավայրերում դեռևս չկային հեռախոսակետեր ու հեռագրատներ: Գյուղերի հետ փոստային կապը տարվում էր փոստատարների միջոցով:

Նախապատերազմական տարիներին զգալի տեղաշարժ կատարվեց նաև մարզի առողջապահության բնագավառում: Եթե մինչև խորհրդային կարգերի հաստատումը Լեռնային Ղարաբաղի տարածքում գործում էր միայն 1 հիվանդանոց, որն ուներ 30 մահճակալ, 2 բժիշկ և 7 բուժաշխատող, որը գտնվում էր Շուշիում, ապա 1940 թ. ԼՂԻՄ-ում գործում էին 2 հիվանդանոց՝ 262 մահճակալով, 5 ամբուլատորիա, 21 բժշկական և ֆելդշերական կետ, 1 ջերմախտի կայան, մանկական 4 և կանանց 1 կոնսուլտացիոն կետ: Հիվանդանոցներում աշխատում էին 46 բժիշկ, 162 կրտսեր բուժաշխատող, 5 ատամնաբույժ և այլն[37]: Հիվանդանոցները և ամբուլատորիաները

---

[36] Նույն տեղում, թ. 72-73:
[37] ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 135, թ. 34-36; ֆ. 3, ց. 1, գ. 21, թ. 55; ց. 3, գ. 70, թ. 10: Достижение Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах, с. 147-166.

տեղաբաշխված էին Ստեփանակերտում, Շուշիում, շրջկենտրոններում և մի շարք խոշոր բնակավայրերում:

Ինչ վերաբերում է հոգևոր կյանքին, ապա Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին շրջանում այն բոլորովին վերացված էր ԼՂԻՄ-ի տարածքում: Այսպես, օրինակ, եթե 1914 թ. Հայ Առաքելական եկեղեցու թեմում կար 222 գործող եկեղեցի, 188 հոգևորական, որոնք սպասարկում էին 224 հայկական գյուղ՝ 206768 հավատացյալներով, ապա 1941 թ. սկզբին ԼՂԻՄ-ում չկար ոչ մի գործող եկեղեցի և հոգևորական[38]: Դա ուներ իր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները: Այսպես, երբ Լեռնային Ղարաբաղը խորհրդային կարգեր հաստատվելուց հետո բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին, ապա այնտեղ հոգևոր կյանքը սկսվեց աստիճանաբար մարել: Դա տեղի ունեցավ, ինչպես իշխող կոմունիստական կուսակցության հակակրոնական աթեիստական գաղափարախոսության, այնպես էլ Ադրբեջանի կառավարության հակահայկական, ազգայնամոլ քաղաքականության հետևանքով: 1931 թ. Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանին գրած նամակում գրում է, որ օրեցօր կրճատվում է գործող եկեղեցիների թիվը, որ մարզում մնացել է ընդամենը 112 գործող եկեղեցի ու 18 վանք, զգալի թվով պակասել է հոգևոր սպասարկողների թիվը: Այդ նամակից հետո Վրթանես եպիսկոպոսը ձերբակալվեց ու աքսորվեց շատ հոգևորականների հետ միասին: Իսկ մեկ տարի անց՝ 1932 թ. մարզում արգելվեց բոլոր եկեղեցիների ու վանքերի գործունեությունը: Փաստորեն Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին հոգևոր կյանքը ԼՂԻՄ-ում իսպառ վերացված էր[39]:

Չնայած մեր ուսումնասիրության հիմնական խնդիրներից չէ նախապատերազմյան տարիներին ԼՂԻՄ-ի պետական, քաղաքական ու հասարակական կյանքի լուսաբանումը, այնուամենայնիվ նպատակահարմար ենք գտնում համառոտակի անդրադառնալ նաև այդ հարցին: Պատերազմի նախօրյակին մարզը կառավարվում էր ՀամԿ(բ)Կ Կոմունիստական կուսակցության ԼՂԻՄ-ի մարզկոմը՝ Մու-

---

[38] Нагорный карабах, Историческая справка, с. 19.

[39] **Арсен Мелик-Шахназаров**, Нагорный Карабах факта против лжи, с. 160.

շեղ Ավագի Գրիգորյանի ղեկավարությամբ: Մարզկոմը ընտրվում էր մարզային կուսակցական կազմակերպության կոնֆերենցիայի կողմից: 1940 թ. մարտի 4-ի դրությամբ մարզային կուսկոնֆերենցիայի աշխատանքներին մասնակցում էին վճռական ձայնի իրավունք ունեցող 219, խորհրդակցական ձայն ունեցող՝ 43 պատգամավոր: Կուսակցական կոնֆերենցիան ընտրում էր մարզային կազմակերպության պլենում բաղկացած 51 անդամից և 9 անդամության թեկնածուից: Պլենումը ընտրում էր մարզային կուսակցական կազմակերպության 1-ին քարտուղարին: Շրջաններում կուսակցական աշխատանքները ղեկավարում էին շրջանային կուսակցական կազմակերպությունները, որոնք գյուղական բնակավայրերում ունեին իրենց սկզբնական կուսակցական բջիջները: Մարզկոմին և շրջկոմներին զգալի օգնություն էին ցույց տալիս կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները: 1940 թ. մարտի 1-ի դրությամբ մարզի կոմունիստական կուսակցական կազմակերպությունն իր շարքերում ուներ 3325 անդամ և 1689 թեկնածու, իսկ կոմերիտական կազմակերպությունը՝ 15411 մարդ՝, որից 5244-ը աղջիկ[40]: Սակայն մարզում գործադիր իշխանությունը իրականացնում էր ԼՂԻՄ-ի խորհուրդների համագումարը, որն ընտրում էր մարզային խորհուրդների գործադիր կոմիտե: Շրջաններում և գյուղերում տեղական իշխանությունը պատկանում էր աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային ու գյուղական խորհուրդներին: Խորհուրդների շրջանային համագումարները ընտրում էին շրջանային գործադիր կոմիտեներ մինչև 45 հոգի կազմով, իսկ գործադիր կոմիտեները ընտրում էին 9 հոգուց բաղկացած նախագահություն: Շրջանային խորհուրդները իշխանությունը իրականացնում էին՝ խորհրդային շինարարության կատարման հսկողության, արդյունաբերական և մատակարարման գյուղատնտեսական, ֆինանսաբյուջետային, ժողովրդական լուսավորության, առողջապահության և աշխատանքի սեկտորների միջոցով: Շրջանային գործադիր կոմիտեները ունեին, նաև՝ ընդհանուր, հողային, ֆինանսական, պլանային և արվեստի բաժինները, բանվորագյուղացիական տեսչություն-

[40] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 42, с. 48-53.

ները, միլիցիայի և քրեական հետախուզության վարչություն և շրջանային ջրային տնտեսություն: Կոլտնտեսություններում ներքին բոլոր աշխատանքները ղեկավարում էին կոլտնտեսությունների վարչությունների և նրանց նախագահները, խորհրդային տնտեսություններում՝ սովխոզների տնօրենների միջոցով: Գյուղական խորհուրդները և նրանց նապագահները որպես պետական իշխանության տեղական մարմիններ ղեկավարում էին գյուղի ողջ կյանքը՝ չխառնվելով կոլտնտեսությունների ներքին գործերին[41]:

Երեսնական թվականների վերջերին ԼՂԻՄ-ը նույնպես զերծ չմնաց ստալինյան վարչահրամայական, միակուսակցական համակարգին յուրահատուկ բռնաճնշումներից, որոնք Ադրբեջանին բռնակցված այդ հայկական մարզում իրականացվեց համեմատաբար ավելի շատ և դաժան կերպով: Ավելի քան 500 պետական, կուսակցական գործիչներ, արտադրության ղեկավար և շարքային աշխատողներ մեղադրվեցին «տրոցկիզմի», «թևանականության», «դաշնակցության» մեջ և որպես «ժողովրդի թշնամիներ» անհիմն դատապարտվեցին գնդակահարության, կամ նետվեցին Շուշիի ու Բաքվի բանտերը, աքսորվեցին Սիբիր: Նրանց թվում էին՝ մարզկոմի առաջին քարտուղար Պյոտր Պողոսյանը, մարզգործկոմի նախագահ Սուրեն Բաղամյանը, Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Մուխան Գրիգորյանը, Հադրութի շրջխորհրդի նախագահ Հայկ Բալայանը (անվանի գրող և հրապարակախոս, Արցախի հերոս Զորի Բալայանի հայրը), Ղարմետաքսարդի տնօրեն Արտաշես Մուսայելյանը և շատ ուրիշներ[42]:

Չնայած այդ ամենին երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը ուներ շատ թե քիչ զարգացած արդյունաբերություն ու գյուղատնտեսություն, կրթական համակարգ, մշակութային օջախներ, առողջապահական ցանց և այլն:

Այսպիսով, հանրագումարի բերելով առաջին գլխում լուսաբանված հիմնահարցերը, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀԿ(բ)Կ Կավբյուրոյի անօրինական որոշմամբ Խորհրդային Ադրբե-

---

[41] Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Բ, էջ 78-81:
[42] Նույն տեղում, էջ 104:

ջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, չնայած ադրբեջանական կուսակցական և պետական մարմինների բացահայտ հակահայկական, խտրական քաղաքականությանը, մարզում 1930-ական թվականների վերջերին իրականացված բռնաճնշումներին, այնուամենայնիվ Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլում մարզն արդեն ուներ համեմատարար բավարար զարգացած արդյունաբերություն ու գյուղատնտեսություն, որոնց առաջատար ճյուղերն էին՝ մետաքսի արդյունաբերությունը, շերամապահությունը, հացահատիկային մշակաբույսերի աճեցումը, անասնապահությունը, այգեգործությունը, խաղողի և թթի մշակումը, գինու, օղու և կոնյակի արտադրությունը, բանջարանաբուծությունը, բամբակի և կաուչուկի աճեցումը, մարզն ուներ 97.7% համատարած կոլեկտիվացված տնտեսություն, 98%-ով վերացված անգրագիտության, ստեղծված էր բավարար մակարդակի վրա դրված կրթական համակարգ, առողջապահական և մշակութային հիմնարկների ցանց: ԼՂԻՄ-ից Կարմիր բանակ զորակոչված ավելի քան 1000 ռազմիկներ ակտիվորեն մասնակցեցին Խորհրդա-ֆիննական պատերազմին, որտեղ նրանցից 3-ը դարձան Խորհրդային Միության հերոսներ, երբ որ այդ պատերազմում ադրբեջանցիները հերոսներ չունեցան: Այդ ամենը հուսալի նախադրյալներ ստեղծեցին պատրաստ դիմակայել, ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմը, այնպես էլ այդ արհավիրքի բաղկացուցիչ մասը կազմող Խորհրդային Միության Հայրենական մեծ պատերազմը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻԶԲԸ. ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

1. ՌԱԶՄԱՄՈԲԻԼԻԶԱՑԻՈՆ ԵՎ ՌԱԶՄԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՐԶՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրը՝ 1941 թ. հունիսի 22-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը հրամանագիր ընդունեց՝ «Զինապարտների մոբիլիզացիայի մասին», որի համաձայն Կարմիր բանակի շարքերն էին զորակոչվում 1905-1918 թթ. ծնված զինապարտները[1]: Հաջորդ օրը, ինչպես Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, լայնածավալ աշխատանքներ սկսվեցին համընդհանուր զորահավաքի կազմակերպման ուղղությամբ: Բացի պարտադիր զորահավաքով ռազմաճակատ մեկնողներից, մեծ թիվ էին կազմում նաև կամավորները: Կարճ ժամանակամիջոցում մարզում հաջողությամբ կատարվեցին և գերակատարվեցին զորահավաքի պլանները: Խոսելով այդ մասին ԼՂԻՄ զինվորական կոմիսար, գնդապետ Կիրիլովը մարզկոմի 11-րդ գումարման 5-րդ պլենումի 1941 թ. նոյեմբերի 26-ի նիստում նշել է. «Մարզում այդ աշխատանքները քաղաքական և գործնական տեսանկյունից ընթացել են հաջողությամբ: Մենք լրիվ և ժամանակին կատարել ենք նախատեսված բոլոր կարգագրերը: Մենք Կարմիր բանակին տվել ենք բավականաչափ քանակության մարդկային միջոցներ, ձիեր, ավտոմեքենաներ և այլ անհրաժեշտ գույք: Մենք ընթացիկ տարում ժամանակին և ամբողջովին կատարեցինք զորակոչային գործընթացը և բանակը համալրեցինք ֆիզիկապես առողջ և քաղաքականա-

[1] "Правда", 23 июня 1941 г. (հարկ ենք համարում նշել, որ պատերազմի առաջին տարում բանակ զորակոչվեցին նաև 1890-1904 թթ. ծնվածները, իսկ հետագա 1942-1945 թթ.՝ նաև 1919-1926 թթ. ծնված զինակոչիկները):

պես պատրաստված երիտասարդ զինակոչիկներով, որոնց 95 տոկոսը հանձնել էր ֆիզիկական, հրաձգային, հակաքիմիական պաշտպանության պատրաստության նորմաները և դարձել կրծքանշանակիրներ: Զինակոչիկների 1,2 տոկոսը կուսակցականներ էին, 89,90 տոկոսը՝ կոմերիտականներ, որոնց 21,5 տոկոսը ուներ բարձրագույն և միջնակարգ կրթություն: Մեր մարզը զինակոչիկների ֆիզիկական առողջության տեսակետից հանրապետությունում ունեցել է բացառիկ հաջողություն: մեր զինակոչիկների ընդհանուր քանակից միայն 0,3 տոկոսն է եղել բանակում ծառայելու համար ֆիզիկապես անպիտան»[2]:

Հարկ ենք համարում նշել, որ չնայած Հայրենական պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայի ու նրա ավանդական դաշնակից Թուրքիայի զորքերը ոտք չդրեցին Արցախի հողի վրա, այնուամենայնիվ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունն օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, զորահավաքի և զորակոչերի անվան տակ քողարկված 1941-1945 թթ. բնակչության տոկոսային հարաբերությամբ ռազմաճակատ ուղարկեց 5 անգամ ավելի շատ արցախահայեր, քան այդ տարածքում ապրող ադրբեջանցիներին: Ընդհանուր առմամբ 1941-1945 թթ. Կարմիր բանակի շարքերը զորակոչվեց ավելի քան 45000 հայ, որը կազմում էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության 1/3 մասը[3]: Նշենք, որ ըստ 1939 թ. մարդահամարի տվյալների մարզում բնակվում էր 150800 մարդ, որից հայեր էին՝ 132800-ը, այսինքն հայերը կազմում էին ԼՂԻՄ-ի բնակչության 88,1%, մնացածը՝ ադրբեջանցիներ, ռուսներ և հույներ էին[4]: Համանման թվական տվյալներ են բերված ԼՂԻՄ-ի պատմաերկրագիտական թանգարանի նախկին տնօրեն Շահեն Մկրտչյանի աշխատություններում: Նրա տվյալների համաձայն 1941-1945 թթ. մարզից բանակ է զորակոչվել 45056 արցախահայ, որը կազմում էր ԼՂԻՄ-ի հայ բնակչության 30%-ը: Ռազմաճակատում զոհվածների թիվը կազմել է 22000, որը կազմում է

---

[2] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 60.
[3] **Հրանտ Աբրահամյան**, Արցախյան գոյամարտ, էջ 68:
[4] Нагорный Карабах. Историческая справка, с. 47.

բանակ զորակոչվածների 48,8%-ը: Ըստ նույն աղբյուրի պատերազմի տարիներին մարզից բանակ է զորակոչվել 1850 հայուհի[5]:

Ըստ պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի տվյալների ԼՂԻՄ-ից Կարմիր բանակի շարքեր զորակոչվածներից 3334 հայ համալրեց Ստեփանակերտում: 1941թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին կազմավորված ադրբեջանական 402-րդ հրաձգային դիվիզիայի շարքերը. տոկոսային հարաբերությամբ հայերը կազմում էին դիվիզիայի 11224 մարդուց բաղկացած անձնակազմի 30%-ը, վրացիները՝ նույնպես 30%-ը, ադրբեջանցիները՝ 20%-ը, ռուսները՝ 14%-ը, 6%-ը՝ ուկրաինացիներ, բելոռուսներ և այլն[6]: Հետաքրքիր է, որ 1990 թ. Բաքվում «Գիտություն» հրատարակչության կողմից հրատարակված «Ադրբեջանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» գրքում խոսելով 402-րդ դիզվիզիայի մասին, նրա հեղինակները խեղաթյուրել և նենգափոխել են արխիվային իրական փաստերը՝ նշելով, որ դիվիզիայի անձնակազմը հիմնականում համալրված էր ադրբեջանցիներից[7]: Այնինչ, իրականում ճիշտ հակառակն է, ադրբեջանցիները կազմել են միայն դիվիզիայի 20%-ը: Կ. Ա. Հարությունյանը արխիվային փաստերը վերցրել է ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի (Մոսկվայի մարզ ք. Պոդոլսկ) 56-րդ ֆոնդի (Կարմիր բանակի զորքերի կազմավորման և համալրման գլխավոր վարչություն) 12214 ցուցակի 993 գործի 118 թերթի աղյուսակից, որտեղ տրված է 402-րդ հրաձգային դիվիզիայի ազգային կազմը. հայեր՝ 3334 մարդ, վրացիներ՝ 3323, ադրբեջանցիներ՝ 2208, ռուսներ՝ 1675, այլազգիներ՝ 684[8]: Ինչպես ասում են, մեկնաբանությունները ավելորդ են:

ԼՂԻՄ-ից զորակոչված հայերը համալրվեցին նաև Եվլախում կազմավորված 400-րդ (1746 հայ), Գանձակում կազմավոր-

---

[5] **Շահեն Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, ուղեցույց, էջ 72:

[6] **Климент Арутюнян**. Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), с. 45-46.

[7] **М. Абасов, А. Гритченко, Р. Зейналов**, Азербайджан в годы Великой Отечественной войны, с. 26-27.

[8] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 56, ց. 12214, գ. 993, թ. 128 (ցիտվում է Կ. Ա. Հարությունյանի վերոհիշյալ գրքի 46 էջում տպագրված աղյուսակից):

ված 398-րդ (1925 հայ) և Ուջարա երկաթուղային ավանում կազմակերպված 416-րդ (1419 հայ) ադրբեջանական հրաձգային դիվիզիաների շարքերը: Արցախահայերը զգալի թիվ էին կազմում նաև հայկական 76-րդ, 89-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ հրաձգային և այլ դիվիզիաների շարքերում:

Արցախի անվանի գրող, լրագրող և հրապարակախոս Լեոնիդ Հուրունցը անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ից զանգվածաբար գործող բանակ զորակոչված հայերի թվաքանակին և ռազմաճակատում նրանց տված կորուստներին, դրանք համեմատելով ԽՍՀՄ-ից ու Գերմանիայից բանակ զորակոչվածների ու կրած կորուստների հետ, գալիս է այն եզրակացության, որ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, ԼՂԻՄ-ի հայ բնակչության դեմ կիրառել է պլանավորված հայաթափության՝ ցեղասպանության քաղաքականություն ռազմաճակատ ուղարկելով 45400 հայ, որը կազմել է մարզի 132800 հայ բնակչության ավելի քան 30%-ը, որոնցից զոհվել են 22000-ը, այսինքն՝ 15%-ը[9]: Մինչդեռ, ըստ բանակի գեներալ Ս. Մ. Շտեմենկոյի, որը պատերազմի տարիներին եղել է Կարմիր բանակի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալը, 1941-1945 թթ. բանակի ամենաբարձր թվաքանակը եղել է 11 միլիոնից մի փոքր ավելի, որը կազմել է ԽՍՀՄ 194 միլիոն բնակչության 6%-ը, իսկ բանակի կորուստները՝ զորակոչվածների 3%-ը[10]: Հիշենք, որ Օսմանյան Թուրքիայի կառավարությունը Առաջին համաշխարհային պատերազմիտարիներին Արևմտահայաստանի բնիկ հայ բնակչության նկատմամբ կիրառել էր ցեղասպանության նման քաղաքականություն, որին զոհ էր գնացել ավելի քան 1.5 միլիոն հայ, շուրջ միլիոն հայ էլ եղեռնից մազապուրծ սփռվել էր աշխարհով մեկ, իսկ ամբողջ Արևմտահայաստանը զրկվել էր իր բնիկ բնակչությունից՝ հայերից: Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը ինչպես տեսնում եք, լավ էր սերտել իր ավագ եղբոր դասերը՝ ցեղասպանության քաղաքականություն կիրառելով նաև ԼՂԻՄ-ում:

---

[9] **Леонид Гурунц**. Наедине с собой, с. 84-85.

[10] **Ս. Մ. Շտեմենկո**, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք 2-րդ, էջ 651:

Չնայած այդ ամենին, արցախահայերը մեծ զոհողությունների գնով, ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում, պատվով կատարեցին Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության սրբազան պարտքը, քանի որ նրանք լավ էին գիտակցում մի բան, որ եթե այդ պատերազմում հաղթանակի ֆաշիստական Գերմանիան, ապա նրա դաշնակից Թուրքիան, որ Խորհրդային սահմաններին էր կենտրոնացրել 26 սպառազեն դիվիզիա, կներխուժեր Հայաստան, ապա և ԼՂԻՄ և իսպառ կոչնչացներ հայերին:

* * *

Ռազմամոբիլիզացիոն միջոցառումներին զուգընթաց մարզում սկսեցին իրականացվել ռազմապաշտպանական աշխատանքներ, որոնց հիմնական նպատակն էր երկրամասը վերածել անառիկ ամրոցի, թշնամու օդային և եթե հարկ լինի, նաև ցամաքային հարձակումները ետ մղելու համար: Համաձայն Անդրկովկասյան զինվորական օկրուգի ռազմական խորհրդի 1941 թ. հունիսի 25-ի՝ «Պարաշյուտային դեսանտների դեմ պայքար կազմակերպելու միջոցառումների մասին» որոշման, ինչպես Անդրկովկասի բոլոր հանրապետությունները, այնպես էլ ԼՂԻՄ-ում ներքին գործերի ժողկոմատի համակարգում սկսեցին կազմավորվել հակառակորդի դիվերսանտ պարաշյուտիստների ոչնչացման 5 կործանիչ գումարտակ (յուրաքանչյուր շրջանում մեկական), որտեղ ընդգրկված էին ավելի քան 500 մարդ[11]: Կործանիչ գումարտակների նպատակը՝ դիվերսանտների, դասալիքների, թշնամու օդային դեսանտների, ինչպես նաև խուճապ սերմանողների ու պրովակատորների դեմ պայքարելն էր: Կործանիչ գումարտակները պատրաստվում էին թշնամու դեմ կռվելու: Մշակվեց ապագա պարտիզանական ջոկատների տեղաբաշխման պլան, համաձայն որի, եթե թշնամուն հաջողվեր զավթել ԼՂԻՄ-ը, ապա յուրաքանչյուր շրջանում նրա դեմ պետք է պայքարեր համապատասխան պարտիզանական ջոկատը: Լեռնային Ղարաբաղի կործանիչ գումարտակները յուրացրեցին տեղում ձեռքի նռնակների, դյուրավառ հեղուկներով լի շշերի, զանազան պայթուցիչ նյութե-

[11] РГАСПИ, ф. 17, оп. 43, д. 31, л. 62.

րի պատրաստման ձևը: Գումարտակները մշտապես գտնվում էին մարզային կուսակցական և պետական մարմինների ուշադրության կենտրոնում, ստանում անհրաժեշտ օգնություն: Պատահական չէր, որ մարզի կործանիչ գումարտակները հանդիսանում էին հանրապետության ամենից լավ պատրաստված մարտական միավորներից մեկը: Բացի իրենց անմիջական պարտականություններից, կործանիչ գումարտակները իրենց հերթին մեծ օգնություն ցույց տվեցին մարզի կուսակցական կազմակերպություններին ու խորհրդային իշխանության մարմիններին՝ կոլտնտեսությունների, սովխոզների հանրային սեփականությունը պաշտպանելու, արդյունաբերական ձեռնարկությունները պահպանելու, ինչպես նաև մարզի բնակավայրերում կարգ ու կանոն հսկելու գործում: Մարզի բոլոր քաղաքներում և բնակավայրերում տեղանքը լավ իմացող բնակիչներից ստեղծվեցին 3-5 հոգուց բաղկացած դիտորդ խմբեր, որոնք գործում էին շուրջօրյա: Նրանք գիշեր-ցերեկ հսկում էին՝ ջրմուղը, կապը, մետաքսի կոմբինատի ավանը, կահույքի ֆաբրիկան, հացի ու գինու, սպիրտի ձեռնարկությունները և այլ կարևոր օբյեկտներ[12]: Միաժամանակ մարզի բոլոր շրջաններում սկսվեցին կազմակերպվել ժողովրդական աշխարհազորի և հակառակորդի տանկեր կործանողների ջոկատներ: կարճ ժամանակամիջոցում մարզի բոլոր քաղաքներում ու գյուղերում կազմակերպվեցին ժողովրդական աշխարհազորի ջոկատներ: Ժողովրդական աշխարհազորի մարտիկները սովորում էին զենքի բանեցման, տանկերի ոչնչացման հակաքիմիական ու հակաօդային պաշտպանության, շարային ֆիզիկական և կրակային պատրաստության այբուբենը: Աշխարհազորը դարձավ Կարմիր բանակի համար պատրաստված կադրերի համալրման աղբյուր: Ըստ Հ. Լ. Շահրամանյանի 1941 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ԼՂԻՄ-ում գործում էին ժողովրդական աշխարհազորի 12 ջոկատ, որոնք իրենց շարքերում ունեին 12000 մարդ[13]:

ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի 1941 թ. սեպտեմբերի 17-ի՝ «ԽՍՀՄ քաղաքացիների համընդհանուր պարտադիր զինվորական ուսուցման մասին» որոշման համաձայն հոկ-

---

[12] Նույն տեղում, g. 22, գ. 44, թ. 88, գ. 52, թ. 110:
[13] Հ. Լ. Շահրամանյան, նշված աշխատությունը, էջ 18:

տեմբերի 1-ից ԽՍՀՄ արական սեռի 16-50 տարեկան բոլոր քաղաքացիները առանց արտադրությունից կտրվելու, պետք է անցնեին համընդհանուր պարտադիր զինվորական ուսուցում՝ 110-ժամյա ծրագրով: Ռազմական ուսուցման ծրագրում հատուկ տեղ էր տրվում շարային պատրաստության, հրացանի, ինքնաձիգի (ավտոմատի), գնդացրի, ատրճանակի, ականանետի և ձեռքի նռնակի գործածման, հակաքիմիական պաշտպանության, խրամատներ փորելու, քողարկման միջոցների, ինչպես նաև միայնակ մարտիկի ու ջոկի մարտավարական ուսուցման խնդիրներին[14]: Համաձայն այդ որոշման ԼՂԻՄ-ի 5 շրջկենտրոններում 1941 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին համընդհանուր պարտադիր զինվորական ուսուցման մեջ ընդգրկվեց ավելի քան 5000 մարդ: Դրա հետ միաժամանակ զինվորական պարտադիր ուսուցում էր տարվում նաև մարզի բոլոր դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում: Համընդհանուր պարտադիր զինվորական ուսուցման անցկացման և ժողովրդական աշխարհազորի ջոկատների վարժեցման գործընթացին մեծ օգնություն էին ցույց տալիս մարզային և շրջանային զինկոմիսարները, ինչպես նաև Հյուսիսային Կովկասից Ստեփանակերտ էվակուացված հետիակային ուսումնարանի հրամանատարությունը[15]:

Պատերազմի առաջին ամիսներին մարզում ռազմապաշտպանական աշխատանքների բնագավառում հատկապես մեծ գործ կատարեց մարզային Պաշըավիքիմի (հետագայում՝ ԴՕՍԱԱՖ, այժմ Մարզապաշտպանական ընկերություն) կազմակերպությունը (նախագահ՝ Գ. Ծատուրյան): Միայն հակաքիմիական պաշտպանության ուսուցման մեջ ընդգրկված էին 16-60 տարեկան 60560 մարդ: Բացի դրանից կազմակերպության հատուկ խմբակներում 1941 թ. հուլիս-նոյեմբեր ամիսներին պատրաստվեցին՝ 175 կապավոր, 52 հեռագրիչ, 53 ավտովարորդ, 40 հեծանվորդ, 52 մոտոցիկլիստ, 26 տրակտորիստ[16]: Այդ նույն ժամանակամիջոցում միայն «Կարմիր

---

[14] КПСС о Вооруженных Силах Советского Союза. Документы 1917-1968, с. 309-310.
[15] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 55.
[16] Նույն տեղում, թ. 55:

խաչի» կազմակերպությունը պատրաստեց 180 բուժքույր: Հարկ է նշել, որ բանակի համար բժշկական հիմնական կադրեր պատրաստվում էին բժշկական տեխնիկումի և մարզի առողջապահության բաժնին կից ստեղծված բժշկական դասընթացներում: Ըստ արխիվային փաստերի միայն 1942 թ. ԼՂԻՄ-ից ռազմաճակատ ուղարկվեց 253 բուժքույր, 1907 սանիրահանգիչ, 147 սանիտար, որոնք ծառայության անցան հոսպիտալներում[17]: Մարզի բժիշկները պարբերաբար բժշկական տարբեր թեմաներով զրույցներ էին անցկացնում և զեկուցումներ կարդում բնակչության համար, սանիտարական կանխարգելիչ աշխատանքներ տանում ձեռնարկություններում, հիմնարկներում, ուսումնական հաստատություններում և գյուղում:

Ռազմապաշտպանական աշխատանքների մեջ կարևոր տեղ էր գրավում նաև ռմբապաստարանների ու գազապաստարանների կառուցման կամ այդ նպատակով շենքերի նկուղների ու քարայրների հարմարեցման գործընթացը: Մինչև 1941 թ. նոյեմբերի 6-ը միայն Ստեփանակերտում ստեղծվեց 400 գազապաստարան[18]: Շրջկենտրոններում ու գյուղերում այդ նպատակին հարմարեցվեցին բազմաթիվ նկուղներ, հողափոր խանդակներ, նույնիսկ քարայրներ: Հակաօդային պաշտպանությունը Ստեփանակերտում և շրջկենտրոններում բարձր հիմքերի վրա պահելու նպատակով ստեղծվեցին տեղական հակաօդային պաշտպանության շտաբներ, որոնց կից սկսեցին գործել ինքնապաշտպանական խմբեր: Այդ խմբերում հիմնականում ընդգրկված էին կանայք և ծերունիները, որոնք անցել էին համապատասխան կարճատև դասընթացներ: Այդ խմբերը գիշերները հսկում էին լուսաքողարկման կանոնների կատարման ընթացքը, բնակչության մեջ տանում համապատասխան բացատրական աշխատանքներ: Հակաօդային պաշտպանության գործը բավարար հիմքերի վրա դնելու նպատակով մարզի բոլոր բնակավայրերում ավելացվեցին ռադիոկետերի թիվը: Պատերազմի տարիներին ռադիոն մեծ դեր խաղաց մարզի բնակչության կյանքում: Այն աշխատում էր անխափան, գիշեր-ցերեկ, մարդկանց հասցնելով, ինչպես Սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները ռազմաճակատում տի-

---

[17] Նույն տեղում, թ. 52, թ. 84:
[18] Նույն տեղում, թ. 44, թ. 41:

րող դրության մասին, այնպես էլ զանազան բնույթի անհրաժեշտ հաղորդումներ ու ցուցումներ՝ ռազմապաշտպանական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Հարկ ենք համարում նշել, որ պատերազմի առաջին օրերից, երբ ռազմաճակատում դրությունը շատ ծանր էր և Կարմիր բանակը ստիպված էր նահանջել, բնակչությունից առգրավվեցին նրանց մոտ գտնվող ռադիոընդունիչները: Սակայն երբ ռազմաճակատում դրությունը կայունացավ և Կարմիր բանակը սկսեց լայնածավալ հարձակողական գործողություններ, այդ ժամանակ հավաքված ռադիոընդունիչները վերադարձվեցին իրենց տերերին:

Ռազմապաշտպանական աշխատանքների մեջ կարևոր ուշադրություն դարձվեց նաև մարզային ու տեղական նշանակություն ունեցող ճանապարհների վերանորոգման և դրանք մշտապես բանուկ պահելու գործի վրա: Այդ աշխատանքները հիմնականում իրագործում էր մարզային ճանբաժինը (պետ՝ Կարապետյան), որը շրջաններում ուներ իր ենթաբաժինները: Այսպես օրինակ, 1941 թ. հոկտեմբերի 15-ին ԼՂԻՄ մարզկոմը իր թիվ 103 որոշմամբ պարտավորեցնում էր Մարտակերտի շրջանի ճանբաժնին (պետ՝ Գրիգորյան) մինչև նոյեմբերի 1-ը կարգի բերել Մարտակերտ-Քելբաջար (այժմ՝ Քարավաճար) 60 կմ երկարությամբ ճանապարհը... Միաժամանակ պետք է հիմնովին վերանորոգման ենթարկվեր Թարթառ-Մարտակերտ ճանապարհի 15 կմ երկարության տեղամասը: Շրջանի ճանբաժնի առջև խնդիր էր դրված նաև կամուրջներ կառուցել Թարթառ և Վաղուհաս գետերի վրա: Ստեփանակերտի շրջանի ճանբաժինը (պետ՝ Առաքելյան) մինչև նոյեմբերի 5-ը պետք է ամբողջովին կարգի բերեր Ստեփանակերտ-Խանաբադ 3 կմ երկարության ճանապարհը, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ իրագործեր Ստեփանակերտ-Մարտունի 13 կմ երկարության ճանապարհի վրա: Մարտունու շրջանի ճանբաժինը (պետ՝ Պետրոսյան) մինչև դեկտեմբերի 15-ը պետք է ավարտեր Մարտունի-Ստեփանակերտ, իսկ մինչև տարվա վերջը՝ Մարտունի-Կարմիր շուկա ճանապարհների վերանորոգման աշխատանքները: Հադրութի շրջանի ճանբաժինը (պետ՝ Մինասյան) մինչև 1941 թ. նոյեմբերի 5-ը պետք է ընթացիկ վերանորոգում կատարեր Հադրութ-Գյուզլակ 9 կմ երկարության ճա-

նապարհի վրա: Նշված աշխատանքները իրագործելու մեջ բացի ճանբաժինների մասնագետներից ու բանվորներից թույլատրված էր օգտագործել գյուղական և քաղաքային բնակչության աշխատուժը, ինչպես նաև հիմնարկ-ձեռնարկությունների տրամադրության տակ գտնվող բեռնատար ավտոտրանսպորտը, կոլտնտեսություններին պատկանող գրաստային միջոցները, ինչպես նաև մեքենատրակտորային կայանների տրակտորներն ու քարշակները[19]:

Չնայած բազմաթիվ դժվարությունների (աշխատանքները կատարվում էին հիմնականում ձեռքի ուժով կլիմայական անբարենպաստ պայմաններում), մինչև 1941 թ. վերջը ԼՂԻՄ-ի ճանապարհաշինարարները պատվով կատարեցին իրենց առջև դրված պատասխանատու խնդիրը՝ դրանով իսկ մեծ չափով նպաստելով ֆաշիստական զավթիչների դեմ հաղթանակը կռելու գործին: Առաջ անցնելով նշենք, որ պատերազմական ողջ տարիների ընթացքում մարզի ճանապարհաշինարարների հերոսական աշխատանքի շնորհիվ մարզի ռազմավարական նշանակություն ունեցող բոլոր ճանապարհներն ու կամուրջները մնացին սարքին վիճակում, որը հնարավորություն տվեց իրականացնել անխափան երթևեկություն:

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատանքներին զուգընթաց, մարզում կարևոր միջոցառումներ իրագործվեցին արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու ուղղությամբ: Նախ անհրաժեշտ էր ամբողջ արտադրությունը ենթարկել ռազմաճակատի պահանջներին, կազմակերպել ռազմական արտադրանքի թողարկում, այդ նպատակով մոբիլիզացնել տեղական բոլոր միջոցները, երկրորդ՝ մեծապես ավելացնել գործող ձեռնարկությունների կարողությունները, կառուցել նոր արտադրամասեր զինելով դրանք նոր սարքավորումներով, ստեղծել նոր ձեռնարկություններ, հիմք դնել նոր արտադրության, չորրորդ՝ արդյունաբե-

[19] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 52, л. 224-225.

րական ձեռնարկությունների գործունեությունը հարմարեցնել պատերազմական պահանջներին, հինգերորդ՝ ստեղծել արտադրական նոր ձեռնարկություններ, որոնք պետք է հանրապետության ռազմաարդյունաբերական գործարանների ու ձեռնարկությունների անխափան աշխատանքն ապահովեին ռազմավարական նշանակություն ունեցող արտադրանքով: Սակայն այս ամենը կապված էր մի շարք օբյեկտիվ դժվարությունների հաղթահարման հետ: Ամենից առաջ զորահավաքի հետևանքով ռազմաճակատ էին մեկնել շուրջ 45000 բանվոր, ծառայողներ և այլ աշխատողներ, որոնց ճնշող մեծամասնությունն արտադրության մեջ փորձ, հմտություն ու որակավորում ձեռք բերած կադրեր էին: Վերջիններիս բացակայությունը խիստ ծանր ազդեց արտադրության վրա[20]: Երկրորդ՝ ԼՂԻՄ-ի արդյունաբերվել ԼՂԻՄ-ի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը խախտվել էր նաև այն պատճառով, որ գերմանաֆաշիստական զորքերին հաջողվել էր պատերազմի առաջին ամիսներին զավթել Ուկրաինայի մեծ մասը, Բելոռուսիան, Մոլդովան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, ՌՍՖԽՀ հյուսիսարևմտյան և կենտրոնական մի շարք մարզեր, որտեղ ապրում էր ԽՍՀՄ բնակչության 45 տոկոսը: Այստեղ արտադրվում էին ածխի՝ 69, չուգունի՝ 68, պողպատի՝ 58, ալյումինի՝ 60 տոկոսը[21]. դրանով իսկ խափանվում էր, ինչպես Անդրկովկասի, այնպես էլ ԼՂԻՄ-ի արդյունաբերության մատակարարումը: Արդյունաբերությունը ռազմաճակատի պահանջներին համապատասխան կազմակերպելու հիմնահարցը հաջող լուծելու նպատակով նախ և առաջ հարկավոր էր լուծել արտադրական ձեռնարկությունները կանոնավոր բանվորական ուժով ապահովելու հարցը: Մարզի առջև ծառացած խիստ պատասխանատու խնդիրը՝ ապահովել ոչ միայն գոյություն ունեցող ձեռնարկությունների կանոնավոր աշխատանքը, այլև գործի դնել նոր հզորություններ, պահանջում էր զգալի չափով ավելացնել բանվորական ուժը: Ռազմական բնույթի արտադրանքի թողարկման, ինչպես նաև նոր ձեռնար-

---

[20] **Климент Арутюнян**. Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), с. 12

[21] История Коммунистической партии Советского Союза, т. 5, с. 268.

կությունների կազմակերպման համար պահանջվում էր բարձրացնել բանվորների որակավորումը, անհրաժեշտ էին նոր մասնագետ կադրեր, նոր ուժեր, որոնք ի վիճակի կլինեին ապահովել նոր օբյեկտների կառուցումն ու դրանց շահագործումը: Ինչպես այս, այնպես էլ արդյունաբերության ռազմական վերակառուցման հետ կապված մնացած հարցերի լուծումը դարձավ ԼՂԻՄ-ի մարզկոմի և մարզգործկոմի առաջնահերթ խնդիրը: Ելնելով ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թ. հունիսի 29-ի հանրահայտ հրահանգի դրույթներից հուլիսի 30-ին ԼՂԻՄ-ի մարզկոմն ու մարզգործկոմը միջոցառումներ մշակեցին այդ ուղղությամբ: Վերանայվեցին պատերազմից առաջ հաստատված 1941 թ. երրորդ եռամսյակի համար մարզի ժողովրդատնտեսական մոբիլիզացիոն պլանները, սահմանվեցին մարզի արդյունաբերության խնդիրները, արտադրանքի ծավալները: ԽՍՀՄ Ժողկոմխորհը 1941 թ. օգոստոսի 28-ին հատուկ որոշում ընդունեց չորրորդ եռամսյակի երկրի ժողովրդատնտեսական պլանի մասին: Ելնելով դրանից՝ մարզի իշխանությունները քննեցին և որոշակիացրին մարզի 1941 թ. չորրորդ եռամսյակի ժողովրդական տնտեսության խնդիրները, որոնց մեջ կարևոր տեղ էր հատկացված ռազմական արտադրանք թողարկելու հարցերին[22]:

Ինչպես հայտնի է, ԼՂԻՄ-ի մետաքսի արդյունաբերության ձեռնարկությունները մինչև պատերազմը արտադրում էին հիմնականում մետաքսի սովորական թել: Մարզի իշխանությունների առջև խնդիր դրվեց դրանց աշխատանքը հարմարեցնել պարաշյուտի կտոր արտադրելու համար: Դա պահանջում էր արտադրության տեխնոլոգիական զգալի վերակառուցում: Ամենից առաջ հարկավոր էր կտրուկ բարձրացնել թողարկվող կտորի որակն այնպես, որ հնարավոր լիներ օգտագործել պարաշյուտների արտադրության համար: Շուտով Ստեփանակերտի 26 կոմիսարների անվան մետաքսի կոմբինատը սկսեց թողարկել բարձր որակի մետաքսաթել: Պետք էր ամրապնդել այդ հաջողությունը և ավելացնել արտադրանքի թողարկումը: Կոմբինատի կոլեկտիվը ջանք չէր խնայում կատարելու հայրենիքի պատվերները: Նրանք իրենց անձնվեր աշխատանքով

---

[22] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 52, л. 79.

օրինակ էին ծառայում երիտասարդ, նորեկ մետաքսագործների համար, որոնք փոխարինելու էին եկել ռազմաճակատ մեկնած իրենց հայրերին, եղբայրներին ու զավակներին: Այսպես, օրինակ, գործման արտադրամասի հերթափոխի վարպետ Վաղարշակ Հովսեփյանը ինքնուրույն սպասարկում էր 20 դազգահ՝ գերակատարելով առաջադրանքը մի քանի անգամ: Նրանից հետ չէին մնում Զյումբրուդ Դանիելյանը, Գյուլնազար Աղաբաբյանը, Քնարիկ Գասպարյանը և ուրիշներ: Կոմբինատը շուտով անցավ երկհերթ աշխատանքի: Հումքի, վառելանյութի, բանվորական կադրերով բավարարման խնդիրները մշտապես գտնվում էին, ինչպես մարզային, այնպես էլ Ստեփանակերտի շրջանային կուսակցական և խորհրդային մարմինների ուշադրության կենտրոնում:

Շուտով Ղարաբաղի մետաքսի կոմբինատի առջև ռազմական կարևորության նոր խնդիր դրվեց. արտադրել նաև վիրահատության համար անհրաժեշտ մետաքսաթել, ավիացիոն արդյունաբերության համար՝ մեկուսիչ ժապավեն, հրետանու համար՝ հատուկ մետաքսի կտոր[23]: Սրանք վերոհիշյալ կոմբինատի ձեռնարկությունների համար նոր արտադրատեսակներ էին: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ղարաբաղի մետաքսագործների արտադրանքը ստացավ բարձր գնահատական: Շնորհիվ նրանց հերոսական աշխատանքի՝ ոչ միայն կարճ ժամանակահատվածում յուրացվեց ռազմական նշանակություն ունեցող արտադրանքների թողարկումը, բարձրացվեց թողարկվող ապրանքի որակը, այլև 1941 թ. համար առաջադրված պլանը կատարվեց 120.6 տոկոսով[24]:

Իրենց աշխատանքը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցեցին նաև ԼՂԻՄ-ի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները: Ինչպես արդեն նշել ենք մեր մենագրության առաջին գլխում, մարզի տեղական արդյունաբերությունը ձևավորվել էր հիմնականում պատերազմին նախորդող տասնամյակում: Այն ուներ շուրջ 40 ձեռնարկություն, որոնք արտադրում էին շինանյութ և լայն սպառման ապրանքներ: Յուրացնելով նոր արտադրատեսակների արտադրությունը, կատարելով կա-

---

[23] Նույն տեղում, գ. 53, թ. 61:
[24] Հրանտ Շահրամանյան, Նշված աշխատությունը, էջ 6:

ռավարական պատվերները՝ ԼՂԻՄ-ի տեղական արդյունաբերության ձեռնարկությունները պատերազմի առաջին իսկ ամիսներին սկսեցին իսլանդական շպատի արդյունահանումը, յուրացրին Մ-50 ականանետների ականների համար արկղերի, գինու, օղու համար մեծ և փոքր տակառների պատրաստման գործը, կահույքի ձեռնարկություններում իրացվեց ավիացիայի համար կաղնու ամուր ատաղձի և ֆաներայի արտադրությունը, սկսվեց ռազմական կարիքների համար սայլերի, ձիաթամբերի և հեծելասարքերի պատրաստումը: 1941 թ. վերջերին և 1941 թ. սկզբներին Ստեփանակերտում բացվեցին առանձին սայլաշինական արհեստանոց, լուցկու, կաշեմշակման, օճառի, գորգագործական փոքր գործարաններ և այլն[25]: Շուշիի և Մարտակերտի կաշեգործարաններն ամբողջովին վերակառուցվեցին՝ անցնելով Կարմիր բանակի համար անհրաժեշտ կաշվի հումքի արտադրության[26]: Ստեփանակերտի մեխանիկական գործարանում կազմակերպվեց ձուլման արտադրամաս, որը օրական տալիս էր 1 տոննա պղնձի և 3 տոննա չուգունի համաձուլվածք: Տարեվերջին սկսեցին օրական ձուլել 3 տոննա պղնձի ու 10 տոննա չուգունի համաձուլվածք[27]: Կազմակերպվեց նաև ավտոնորոգման արտադրամաս, որը հաջողությամբ էր կատարում ինչպես մարզի տարածքում տեղակայված զորամասերի, այնպես էլ ժողովրդական տնտեսության ավտոպարկերի մեքենաների և նեղգիծ երկաթուղու վերանորոգման աշխատանքները: Գործարանում յուրացվեց նաև գյուղատնտեսական տեխնիկայի (տրակտորների, կոմբայնների, կալսիչների, շարքացանների, քարշակների, գութանների), մեխանիկական ջրաղացների համար պահեստամասերի արտադրությունը, ընդլայնվեց լայն սպառման ապրանքների արտադրությունն ու տեսականին:

Մարզկոմի բյորոն 1941 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով ԼՂԻՄ-ի տեղական արտադրության վարչության առջև խնդիր դրեց ավիացիոն արդյունաբերության կարիքների համար մարզում ավելացնել կաղնու, հացենու, հաճարի, ճապկու կարծր փայտանյութի

---

[25] «Սովետական Ղարաբաղ», 23 հունիսի 1945:
[26] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[27] РГАСПИ, ф. 17, оп. 32, д. 53, л. 60.

արտադրությունը: Եթե 1941 թ. համար պլանով նախատեսված էր մթերել 500 մ^3 փայտանյութ, ապա 1942 թ. համար՝ 10000 մ^3 փայտանյութ[28]: Նույն որոշմամբ հանձնարարվեց տեղարդվարչության պետ Միրզոյանին ավելացնել Հադրութի շրջանի Ծակուռի գյուղի մոտ գտնվող իսլանդական շպատի արտադրությունը, որը խիստ անհրաժեշտ էր հրետանային արդյունաբերության համար: Միաժամանակ խնդիր դրվեց տնայնագործական եղանակով սկսել արճճի հանույթը Մարտակերտի շրջանի Մեհմանա գյուղի մոտ գտնվող հանքից[29]: Չգիտես ինչու այդ կարևոր մետաղական օգտակար հանածոն բացակայում է 2009 թ. Երևանում «Գեոդեզիայի ու քարտեզագրության կենտրոնի» կողմից հրատարակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլասի 18-րդ էջում տպագրված «Օգտակար հանածոներ» քարտեզում:

Կարճ ժամանակահատվածում իր աշխատանքը վերակառուցեց նաև Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան: Ռազմաճակատի համար Մ-50 ականանետների ականների համար արկղների, ձիասայլերի, ավիացիոն արդյունաբերության համար պինդ փայտանյութի արատադրության յուրացման հետ ֆաբրիկան հատուկ ուշադրություն դարձրեց նաև մարզի բնակչության համար լայն սպառման ապրանքների արտադրությանը: Թեև այդ ձեռնարկություններից պատերազմի առաջին օրերին ռազմաճակատ էր մեկնել 67 մարդ, այնուամենայնիվ, ֆաբրիկան ոչ մի օր պարապուրդ չտվեց: Բանվորների պակասը լրացվեց թոշակառուների, կանանց և պատանիների հաշվին, որոնք, յուրացնելով ռազմաճակատում մարտնչող իրենց հարազատների մասնագիտությունը, դարձան արժանի փոխարինողներ: Նրանք, չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին (օրական տրվում էր 200-400 գրամ հաց), ոչ միայն կատարում էին պետական պլանները, այլև գերակատարում այն: Օրինակ, թոշակառու վարպետ Մովսես Գրիգորյանը, որի որդին կռվում էր ռազմաճակատում, իր օրական պլանը կատարում էր 300 տոկոսով, իսկ նրա գործընկեր, դրածյալ թոշակառու, Մադաթ Վարունցը՝ 250 տոկոսով: Դրա հետ մեկտեղ

---

[28] Նույն տեղում, թ. 61:
[29] Նույն տեղում, գ. 44, թ. 47:

նրանք մեծ ուշադրություն էին դարձնում նոր կադրերի աճեցմանը: Ֆաբրիկայի բանվորները նույնպես անցել էին երկհերթ ու 12-ժամյա ռեժիմի: Նրանց պետական պլանները կախված էին նաև փայտանյութի հումքի ստացումից: Հումք մատակարարող Բալուջայի և Բարդայի սղոցարանների կոլեկտիվները, աշխատելով օրինիբուն, եղանակային անբարենպաստ, տարրական հարմարություններից զուրկ պայմաններում, շնորհիվ իրենց հերոսական աշխատանքի, ժամանակին ու որակյալ փայտանյութ էին մատակարարում կահույքի ֆաբրիկային:

Երկրի բուժհիմնարկները, զինվորական հոսպիտալները, ռազմական տեխնիկան խիստ կարիք ունեին որակյալ սպիրտի: Վիրավոր և հիվանդ զինվորների բուժման համար հարկավոր էին վիտամիններով հարուստ մրգեր, հատապտուղներ ու խոտաբույսեր: Ղարաբաղիգինտրեստի ձեռնարկությունները արագորեն յուրացրին բարձրորակ սպիրտի թորման տեխնոլոգիա, ընդլայնեցին ընտիր չամիչի, քիշմիշի, խաղողի հյութի, դոշաբի արտադրությունը և այլն:

Իր աշխատանքները պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցեցին նաև մարզի արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ տարում արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունները զգալի չափով ավելացրին վայրի հատապտուղների ու բանջարեղենի մթերումները: Եթե 1941 թ. նախատեսված էր մթերել 45.5 տոննա բանջարեղեն, ապա տարեվերջին մթերվեց 318.6 տոննա, 8.1 տոննա վայրի հատապտղի փոխարեն՝ 62 տոննա[30]: Դա հնարավորություն տվեց Ղարաբաղի արհեստագործական կոոպերացիայի միությանը ամբողջովին համապատասխան հումքով ապահովելու իր ենթակայության սննդի արդյունաբերության ձեռնարկությունները: Պատերազմի առաջին տարում թեթև արդյունաբերության ձեռնարկությունները յուրացրեցին բանակի կարիքների համար բամբակե բաճկոնների ու տաբատների, ականջակալների, գլխարկների, բրդյա գուլպաների ու ձեռնոցների, մարզի բնակչության կարիքների համար՝ լայն սպառման ապրանքների արտադ-

[30] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 61.

ությունը: Արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկություններ-ը կարճ ժամանակամիջոցում կարողացան յուրացնել նաև նախկի-նում մարզ ներմուծվող ապրանքների արտադրությունը: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի "Вкуструд" արտելը 1941 թ. վերջերին բացեց "C" վիտամինի թողարկման արտադրամաս, որն աշխատում էր մարզի հանդերում աճող մասուրի և տանդուռի հումքի մշակման հիման վրա[31]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1941 թ. հունիսի 26-ին հրամանագիր ընդունեց «Պատերազմի ժամանակ բանվորների ու ծառայողների աշխատանքային ժամանակի ռեժիմի մասին», ըստ որի՝ բանվորների ու ծառայողների համար սահման-վում էր մեկից մինչև երեք ժամ տևողությամբ պարտադիր արտա-ժամյա աշխատանք, վերացվում էին հերթական արձակուրդները՝ փոխարինելով դրանք չօգտագործված արձակուրդի համար դրա-մական փոխհատուցմամբ[32]: Այդ որոշումը կիրառվեց նաև ԼՂԻՄ-ում բանվորների ու ծառայողների աշխատաժամը 8 ժամից հասցվեց մինչև 11-12 ժամի, արտադրական ձեռնարկություններն անցան երկհերթ աշխատանքային ռեժիմի: Հրամանագրի կիրառումը հնա-րավորություն տվեց առանց բանվորների թվի ավելացման ձեռնար-կությունների արտադրական կարողությունները բարձրացնել մեկ երրորդով:

Պատերազմի պայմաններում ձեռնտու չէր ծառայողական հիմնարկներում պահել ուռճացված հաստիքներ: Հաստիքների կրճատման հետևանքով աշխատանքից ազատվածները ուղարկվե-ցին արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելու: Դրա շնորհիվ հատկապես ավելացավ մետքասարդյունաբերության աշ-խատողների թվաքանակը[33]: Աշխատանքային հարուստ փորձ ունե-ցող բանվորուհիները նորեկներին սեղմ ժամկետում սովորեցնում էին իրենց արհեստը:

Կադրերի պատրաստման խնդիրը ծառացել էր նաև մարզի տեղական արդյունաբերական ձեռնարկությունների առջև: Այստեղ

---

[31] Նույն տեղում:
[32] "Правда", 27 июня 1941, «Սովետական Հայաստան», 28 հունիսի 1941:
[33] ԼՂՀ ՊԱ, ֆ. 18, գ. 71, թ. 15:

նոր աշխատողների համար կադրերի ուսուցման հարցը լուծվեց կանանց ու պատանիների հաշվին: Օրինակ՝ Ստեփանակերտի մեխանիկական արհեստանոցում արդեն 1941 թ. վերջերին սովորում էին 42, փայտամշակման ձեռնարկությունում՝ 62, Շուշիի գուլպատրիկոտաժի ֆաբրիկայում՝ 49 աշակերտ և այլն: Նրանց մեծ մասը կանայք էին. ռազմաճակատ մեկնած ամուսնուն փոխարինող մետաքսագործ Մանյա Սարգսյանը կարճ ժամանակում ոչ միայն տիրապետեց նոր մասնագիտությանը և պլանները կատարեց 190 տոկոսով, այլև աճեցրեց 10 որակյալ բանվորուհի: Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի աշխատողները, որոնք հիմնականում պատանիներ էին, պատերազմի առաջին ամիսներին յուրացրեցին տակառագործի արհեստը և տարեվերջին սկսեցին պատրաստել մեծ ու փոքր չափսերի տակառներ, որոնք խիստ անհրաժեշտ էին հատկապես օղու թորման արտադրության մեջ: Կարմիր շուկայի սայլագործական արհեստանոցի կոլեկտիվը նույնպես համալրվեց պատանիների հաշվին[34]:

Այս գործընթացին հիմնականում խոչընդոտում էր տրանսպորտի անբավարար քանակությունը. դրանց զգալի մասը պատերազմի առաջին օրերին մոբիլիզացվել և ուղարկվել էր գործող բանակ: Շնորհիվ ձեռք առնված միջոցառումների՝ կարճ ժամանակահատվածում կարգի բերվեց պատերազմից առաջ կառուցված Ստեփանակերտ-Եվլախ նեղգիծ երկաթուղին: Այն աշխատեց իր ողջ կարողություններին համապատասխան: Ինչ վերաբերում է շրջկենտրոններից Ստեփանակերտի կայարան փոխադրումներին, ապա այն հիմնականում կատարվում էր ձիաքարշ տրանսպորտի՝ սայլերի միջոցով:

Մարզի արդյունաբերությունը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու խնդրի կատարումը պահանջում էր բոլոր ուժերի ու հնարավորությունների առավելագույն լարում: Որակյալ բանվորական ձեռքի, վառելանյութի, էլեկտաէներգիայի և անհրաժեշտ հումքի պակասությունը ստեղծել էր ծայրահեղ լարված վիճակ արդյունաբերության մի շարք տեղամասերում:

---

[34] «Սովետական Ղարաբաղ», 28 նոյեմբերի 1941:

Հարկ էր ուղղակի ընթացքից գտնել և սովորեցնել նոր կադրերի, յուրացնել նոր տիպի հումքի մշակումը, կարճ ժամանակամիջոցում տիրապետել ստացման տեխնոլոգիային, փնտրել-գտնել մի շարք պակասուրդային ապրանքների հումքի փոխարինիչներ:

Շնորհիվ ԼՂԻՄ-ի կուսակցական, պետական իշխանության մարմինների ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների և բանվոր դասակարգի հերոսական աշխատանքի մինչև պատերազմական առաջին տարվա վերջը համարյա ամբողջովին ավարտվեց մարզի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու գործընթացը, որը հնարավորություն տվեց ռազմաճակատի կարիքների համար յուրացնել ու թողարկել նոր արտադրատեսակներ, պատվով կատարել «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ՝ հաղթանակի համար» պատերազմական տարիների նշանաբանը:

Սակայն ամեն ինչ չէ, որ ընթանում էր առանց խոչընդոտների: Հաճախակի նման խոչընդոտներ մարզի ղեկավարության համար ստեղծում էին Խորհրդային Ադրբեջանի պետական և կուսակցական պաշտոնյաները: Այսպես, օրինակ, ԼՂԻՄ-ի մարզկոմի քարտուղար Բ. Մանուկյանը ելույթ ունենալով մարզկոմի 5-րդ պլենումի 11-րդ գումարման 1941 թ. նոյեմբերի 26-ի նիստում, անդրադառնալով պատերազմի առաջին տարվա 5 ամիսների ընթացքում մարզի ժողովրդական տնտեսության վերակառուցման և ռազմաճակատին ցույց տված օգնության մասին, միաժամանակ նշել է, որ այն ավելի բարձր մակարդակով կընթանար, եթե չլինեին Բաքվի որոշ չինովնիկների բացահայտ թշնամական վերաբերմունքը: «Խորհրդային Ադրբեջանի որոշ ժողկոմատների ղեկավար աշխատողներ մարզին գործնական օգնություն ցույց տալու փոխարեն, խաբում են մեզ սին խոստումներով և վնասում պետական գործին,- նշել է Բ. Մանուկյանը: Այսպես, օրինակ, Ղարաբաղի մետաքսարդյունաբերության նավթային վառելանյութով աշխատող շարժիչների 27 օրվա անխափան աշխատանքի համար անհարժեշտ է 9 տոննա կերոսին, մինչդեռ Ադրբեջանի մատակարարման ժողկոմատը (Օրուջև, Բաբաև) մեզ տալիս է 2 տոննա, որը կարող է ապահովել միայն 6 օրվա աշխատանք: Մեկ օրինակ ևս: Ադրբեջանի արդյունաբերության խորհրդի

նախագահ Կասումովը մարզի առջև խնդիր է դրել պատրաստել մեծ քանակությամբ երկաթե պայտեր, որի համար անհրաժեշտ է 10 տոննա երկաթ: Մինչդեռ երկու ամիս առաջ, այդ նույն ընկերոջ կարգադրությամբ մարզից 7-8 տոննա մետաղ է տարվել հանրապետության տարբեր ձեռնարկությունների կարիքները հոգալու համար: Երբ այդ մասին մենք հայտնեցինք նախարարություն, մեզ 10 տոննայի փոխարեն ուղարկեցին միայն 1 տոննա մետաղ... Դեռ ավելին, երբ մարզում համապատասխան ձեռնարկությունների նախաձեռնությամբ տեղական հումքի բազայի հիման վրա ձեռնամուխ են լինում ռազմաճակատի համար նոր տեսակի արտադրանքի թողարկմանը, ես նկատի ունեմ ձիաթամբերի ու խամուտների արտադրությունը, ապա մատակարարման ժողկոմատը ոչ միայն չի խրախուսում մեր այդ նախաձեռնությունը, այլ ամեն կերպ սկսում է խոչընդոտել դրան, մեղադրել արտադրական ձեռնարկությունների ղեկավարներին, որ այդ գործը կատարել են առանց իրենց կարգադրության»[35]:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՑՈՒՄԸ

Պատերազմի առաջին ամիսներին գերմանաֆաշիստական զորքերին հաջողվեց սրընթաց հարձակումով զավթել Ուկրաինան, Բելոռուսիան, Մոլդովան, Մերձբալթյան խորհրդային հանրապետությունները և Ռուսաստանի արևմտյան, կենտրոնական, հարավային շրջանների զգալի մասը, որոնք պատերազմի նախօրյակին տալիս էին երկրի հացահատիկի համախառն արտադրանքի 38 տոկոսը և շաքարի արտադրության 84 տոկոսը: Այդ տարածքներում էր գտնվում երկրի խոշոր եղջերավոր անասունների 38 տոկոսը և խոզերի գլխաքանակի 60 տոկոսը[36]: Ուստի Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը երկրի՝ թշնամու կողմից չզավթված հանրապետությունների առջև առաջ-

---

[35] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 64-67.

[36] Великая Отечественная война Советского Союза 1941-1945. Краткая история (издание второе, исправленное и дополненное), с. 106.

նահերթ խնդիր դրեցին այդ շրջանների գյուղատնտեսական աշխատանքները վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան, որպեսզի լրացվի պետությանը անհրաժեշտ հացի, մսի, յուղի, մնացած անհրաժեշտ սննդամթերքի պահանջը: Ելնելով կուսակցության և խորհրդային իշխանության որոշումներից, ԼՂԻՄ-ի մարզային մարմինները նույնպես ձեռնամուխ եղան պետության համար այդ կարևորագույն խնդրի իրականացմանը:

Հարկ է նշել, որ այնքան էլ հեշտ չէր կատարել այդ խնդիրը, քանի որ պատերազմը սկսվելու հենց առաջին օրերին ԼՂԻՄ-ում իրականացված համատարած զորահավաքի հետևանքով Կարմիր բանակի շարքերն էին զորակոչվել ավելի քան 45000 արցախահայեր, որոնց 30000-ը համարվում էին գյուղի աշխատավորներ: Դրա հետևանքով խիստ կրճատվել էր վերջիններիս թիվը և վտանգի տակ էր դրված սկսված խոտհարքի ու հնձի աշխատանքները: Ամենից առաջ մարզի կուսակցական և պետական իշխանությունները լծվեցին գյուղատնտեսական բնագավառի կադրերի պակասը լրացնելու գործընթացին: Շնորհիվ ձեռնարկված միջոցներին կարճ ժամանակընթացքում ռազմաճակատ զորակոչված իրենց ամուսիններին, որդիներին ու հայրերին փոխարինեցին կանայք, պատանիներն ու մեծահասակները: Համար առաջին խնդիրը բերքահավաքի անկորուստ կազմակերպումն էր: Ռազմաճակատ մեկնած մեխանիզատորների (կոմբայնավարներ, տրակտորիստներ, կալսիչների վրա աշխատողներ և այլն) կադրեր պատրաստելու նպատակով 1941 թ. հունիսիս 25-ին Լեռնային Ղարաբաղի մարզկոմը որոշում ընդունեց՝ Մարտակերտի, Ստեփանակերտի ու Մարտունու մեքենատրակտորային կայաններում բացել տրակտորիստների պատրաստման դասընթացներ, որտեղ պետք է ընդգրկվեր 100 կին: Կին մեխանիզատորների պատրաստման դասընթացները մեծ դեր խաղացին 1941 թ. հացահատիկային բերքը հավաքելու ժամանակ գյուղատեխնիկայի օգտագործման գործում: Հնձի օրերին, շատ կանայք, որ մինչ այդ երբեք իրենց ձեռքը մանգաղ չէին վերցրել, դուրս եկան ցորենի ու գարու արտեր ու մեծահասակների հետ աշխատեցին օրնիբուն: Այսպես, օրինակ, Մարտունու շրջանի Գիշի գյուղի Կարլ Մարքսի անվան կոլտնտեսությունում պատերազմի առաջին օրերին

35 կին մանգաղը ձեռքներին դուրս եկան հնձի: Նրանք շուտով տիրապետեցին իրենց գործին և օրվա պլանները սկսեցին կատարել 130-140 տոկոսով: Նրանց օրինակին հետևեցին նաև Ստեփանակերտի շրջանի Հարավ գյուղի Ֆիոլետովի անվան կոլտնտեսության 60 կին: Իրենց մայրերին ընդօրինակեցին նաև գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցի 40 աշակերտ, որոնք ընդգրկվեցին հասկահավաքի աշխատանքների մեջ: Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղի «Կոմունար» կոլտնտեսության արտերում հունիսի 23-ից սկսած ամենօր բերքահավաքի աշխատանքներին մասնակցում էին 210 կոլտնտեսուհի և կոլտնտեսական, 150 պիոներ[37]: Խոսելով բերքահավաքի մեջ ներգրավված կանանց աշխատանքի մասին Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի կոլտնտեսության նախագահ Ի. Հարությունյանը նշել է. «Մեր կոլտնտեսուհիները տղամարդկանց հետ պայքարում են բերքահավաքն անկորուստ հավաքելու համար: Այսօր նրանք պատրաստ են կրկնապատկելու իրենց ուժն ու եռանդը հայրենիքին էլ ավելի հաց ու միս հանձնելու համար, մեր գործող բանակի շարքերը անցնող տղամարդկանց փոխարինելու համար»[38]: Բերքահավաքը կազմակերպված և անկորուստ հավաքելը պատերազմի առաջին ամիսներին համարվում էր առաջնահերթ խնդիր, որի համար մարզային և շրջանային կուսակցական ու պետական մարմինները անում էին ամեն ինչ, որպեսզի ժամանակին և անկորուստ ավարտեն այն: Պատերազմական առաջին տարվա բերքահավաքի մասին 1941 թ. օգոստոսի 7-ին "Правда" թերթը իր առաջնորդող հոդվածում նշել է. «Պատերազմի ժամանակ պահանջվում է բացառիկ խնայողություն: Թանկ է աճեցված ու հավաքված հացահատիկի յուրաքանչյուր գրամը: Որքան ավելի շատ լինեն հացահատիկն ու այլ մթերքները, այնքան ավելի շատ պարենային ռեսուրսներ ու ռեզերվներ կունենա Սովետական երկիրը: Հիշելով այդ, կոլտնտեսականները խնամքով հավաքում են բերքը, աշխատելով դաշտում չթողնել չհնձված ոչ մի հասկ, գետին ընկած ոչ մի հատիկ: Բերքահավաքի

---

[37] «Սովետական Ղարաբաղ», 28 հունիսի 1941, 5 հուլիսի 1941:
[38] «Սովետական Ղարաբաղ», 25 հունիսի 1941:

ժամանակ կորուստներ թույլ տալը, մանավանդ այժմ, պատերազմի օրերին, հանցագործություն է»[39]:

ԼՂԻՄ կուսակցական կազմակերպության 11-րդ գումարման 5-րդ պլենումում, որը տեղի ունեցավ 1941 թ. նոյեմբերի 26-ին, մարզգործկոմի նախագահի տեղակալ Միսաք Բալայանը, խոսելով պատերազմի առաջին 6 ամիսների ընթացքում մարզում կատարված գյուղատնտեսական աշխատանքների մասին, նշել է. «Մարզում կատարվել է 60709 հեկտար աշնանացան, որը 11709 հեկտարով ավել է նախորդ տարվանից... Կոլտնտեսությունները ժամանակին կատարել են դրամական միջոցների մոբիլիզացման, հացամթերման, մսի, կաթի, անասնակերի, բրդի, կաշվի հանձնման պլանները: Ժամանակից շուտ գերակատարվել են սպիրտի, խաղողի, շերամի կոկոնի մթերման, ճանապարհաշինարարական աշխատանքների պլանները: Չնայած համընդհանուր զորահավաքի հետևանքով ռազմաճակատ էր մեկնել գյուղի աշխատունակ բնակչության զգալի մասը, բերքահավաքի և աշնանացանի ժամանակ աշխատանքի դուրս եկան ավելի շատ մարդիկ՝ շնորհիվ կանանց, մեծահասակների ու պատանիների: Այսպես, օրինակ, եթե 1940 թ. հունիսի 10-20-ը միջին հաշվով Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի Էնգելսի անվան կոլտնտեսության դաշտերում աշխատել են 311 մարդ, ապա 1941 թ. հուլիսի 1-10 ամեն օր դաշտ է դուրս գալիս 459 մարդ: Եթե Մարտունու շրջանի «Պրավդա» կոլտնտեսությունում 1940 թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ աշխօրերի մինիմումը կատարել էր աշխատունակ կոլտնտեսականների 42 տոկոսը, ապա 1941 թ. հոկտեմբերի դրությամբ աշխօրերի մինիմումը չէր կատարել ընդամենը 3 մարդ[40]:

Հիշելով պատերազմի առաջին տարվա բերքահավաքի օրերը, այնժամ Մարտունու շրջանի Նորշեն գյուղի դպրոցի աշակերտ, այժմ տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ռուսաստանում «Հայաստան» բարեգործական հիմնադրամի գլխավոր տնօրեն Հրանտ Ռուբենի Պողոսյանը նշում է. «Խորհրդային Միության վրա ֆաշիստական

---

[39] "Правда", 7 августа 1941.
[40] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 73.

Գերմանիայի հարձակման մասին ռադիոյով Լևիտանի հաղորդման հաջորդ օրը գյուղում 16-65 տարեկան ոչ մի տղամարդ չմնաց, քանի որ համընդհանուր զորահավաքի հետևանքով նրանց բոլորին զորակոչեցին Կարմիր բանակի շարքերը: Դաժան պայմաններ էր տիրում ոչ միայն ռազմաճակատում, այլև թիկունքում: Պատերազմի սկզբին ես արդեն փոխադրվել էի երկրորդ դասարան: Ես հիշում եմ, որ ինչպես մինչև ժամը 12-ը սովորում էինք դպրոցում, իսկ հետո մինչև ուշ երեկո աշխատում կոլտնտեսության դաշտերում: Ամռան ընթացքում մենք աշխատում էինք 16-18 ժամ և ուղղակի գիշերում դաշտում»[41]: Իսկ Մարտունու շրջանի Քերթ գյուղի դպրոցի նախկին աշակերտ, այժմ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Բարսեղի Աբրահամյանը հիշում է, որ ինչպես պատերազմի առաջին տարին, այնպես էլ հետագայում, ինչպես են դպրոցի աշակերտներով մասնակցել հասկահավաքի, խոտի և թթի հավաքի աշխատանքներին, որի համար ինքը հետպատերազմյան տարիներին (1947 թ.), պարգևատրվել է «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալով[42]: Բերքահավաքի աշխատանքներին զանգվածաբար մասնակցել են մարզի բոլոր շրջանների դպրոցականներն ու ուսուցիչները: Այդ աշխատանքների մեջ են ընդգրկվել նաև Ստեփանակերտի, Շուշիի և շրջկենտրոնների ինչպես ժողովրդական կրթության, այնպես էլ ժողովրդական տնտեսության բնագավառի ձեռնարկությունների աշխատողները: Դա հնարավորություն տվեց հացահատիկի բերքահավաքը կատարել ժամանակին և անկորուստ:

Բերքահավաքի աշխատանքներն ավարտելուց հետո մարզի կուսակցական և պետական մարմինների առջև ծառացավ հաջորդ կարևոր խնդիրը. ժամանակին սկսել և ավարտել աշնանացանի աշխատանքները: Այդ նպատակով Լեռնային Ղարաբաղի մարզկոմը 1941 թ. օգոստոսի 28-ին ընդունեց համապատասխան որոշում, որի համաձայն բոլոր կոլտնտեսություններն ու սովխոզները պետք է

---

[41] **Климент Арутюнян**, Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войны Советского Союза (1941-1945), с. 6.

[42] **Հրանտ Աբրահամյան**, Քերթ, էջ 59:

ապահովվեին համապատասխան սերմացուով, մեքենատրակտորային կայանները պետք է ավարտեին գյուղատեխնիկայի, ամենից առաջ տրակտորների նորոգման աշխատանքները, գյուղերում պետք է մեծ ուշադրություն դարձնեին լծկան անասունների խնամքին: Միաժամանակ մարզկոմը պահանջում էր բարձրացնել աշնանացան վարի ու ցանքի որակը և ամբողջ աշխատանքները ավարտել մինչև 1941 թ. հոկտեմբերի 25-ը[43]: Քանի որ մաճկալների մեծ մասը, որոնք հիմնականում տղամարդիկ էին և մեկնել էին ռազմաճակատ, հարկավոր էր նրանց փոխարինել կանանցով: Ղարաբաղի կոլտնտեսուհիները, որոնք մինչ այդ գութան ու արոր չէին բանացրել, հաջողությամբ յուրացրեցին մաճկալի աշխատանքը:

Վար անող կանանց շարժման նախաձեռնողը հանդիսացավ Ստեփանակերտի Բալուջա գյուղի 26 կոմիսարների անվան կոլտնտեսության կոլտնտեսուհի Էսթեր Հովակիմյանը: Նրա օրինակին հետևեց նույն շրջանի Խանաբադ գյուղի Նելսոն Ստեփանյանի անվան կոլտնտեսության կոլտնտեսուհի Գյուլխաս Մակարյանը: Շուտով գյուղերի դաշտերում հայտնվեցին հարյուրավոր կին մաճկալներ: Վարը կատարվում էր հիմնականում գութանի, արորի և գյուղատնտեսական այլ գործիքների միջոցով: Քարշող հիմնական ուժը եզներն էին, ինչպես նաև տրակտորները, որոնց թիվը մարզում շատ քիչ էր, քանի որ ռազմաճակատի կարիքների համար օգտագործելու պատրվակի տակ Ադրբեջանի պետական համապատասխան մարմինները դրանց մի զգալի մասը ուղարկել էր ադրբեջանական գյուղեր: Չնայած առաջացած դժվարություններին, աշնանացանի աշխատանքներն ավարտվեցին լրիվ և ժամանակին: Ինչպես ԽՍՀՄ չզավթված տարածքներում, այնպես էլ ԼՂԻՄ-ում ընդարձակվեցին հացահատիկի աճեցման համար հատկացվող հողատարածքները: Այսպես, օրինակ, 1941 թ. աշնանը մարզում այդ նպատակով պլանից ավելի հերկվեց 8238 հեկտար[44]:

Մարտունու շրջանի Ննգի գյուղի կոլտնտեսուհի Հովսեփյանը, որը երկու որդի ճանապարհելով ռազմաճակատ, հաջորդ օրը դաշտում միացավ իր մաճկալ ընկերուհիներին և պլանը կատարեց

---

[43] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 57-58.
[44] Նույն տեղում, թ. 59-60:

150 տոկոսով: «Չնայած այս աշխատանքը տղամարդու գործ է,- հայտարարեց նա,- բայց մեզ դժվարությունները չեն վախեցնում և մենք տիրապետում ենք նաև այդ գործին»[45]:

Աշնանացանի հարցը մշտապես գտնվում էր շրջանային կուսակցական կոմիտեների և սկզբնական կուսակցական կազմակերպությունների քննության առարկա: Նրանք ամեն ինչ արեցին, որպեսզի իրենց շրջաններում այդ կարևոր գործը կատարվի ժամանակին և որակով:

Ռազմաճակատում տիրող ծանր դրությունը պահանջում էր նորանոր համալրումներ: Մարզի գյուղատնտեսության մեջ աշխատող համարյա բոլոր տղամարդիկ մեկնեցին գործող բանակ: Հարկավոր էր շտապ կադրեր պատրաստել նրանց փոխարինելու համար: Այդ նպատակով բացվեցին կարճատև դասընթացներ, որտեղ մինչև 1941 թ. դեկտեմբերի վերջը պատրաստվեց 8 կոլտնտեսության նախագահ, 140 ֆերմայի վարիչ, 135 բրիգադավար, 140 օղակավար[46]:

Ամառային բերքահավաքի և աշնանացանի աշխատանքները պատերազմի պայմաններին համապատասխան վերակառուցելու, ռազմաճակատ մեկնած մասնագետ կադրերի փոխարինման հարցի լուծման հետ մեկտեղ, զգալի գործ արվեց նաև անասնապահության բնագավառի աշխատանքները վերակառուցելու ուղղությամբ: Այդ նպատակով ԼՂԻՄ-ի մարզկոմը հատուկ պլան մշակեց անասնահոտի գլխաքանակը ավելացնելու համար: Համաձայն այդ պլանի հարկավոր էր բնագավառի աշխատանքներն այնպես վերակառուցել, որ մինչև տարեվերջ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացվեր 9 տոկոսով, մանր եղջերավորինը՝ 19 տոկոսով, իսկ թռչուներինը՝ 98 տոկոսով: Հաշվի առնելով, որ անասնապահության զարգացման համար հարկավոր էր ստեղծել կերի կայուն բազա, ԼՂԻՄ մազկոմը 1941 թ. հուլիսի 14-ին քննարկեց անասնակերի ավելացման հարցը: Մարզի կոլտնտեսությունների առջև խնդիր դրվեց պատրաստել 865169 ցենտներ կերի կոշտ պաշար, 222333 ցենտներ հյութալի կերի պաշար, 17000 տոննա սիլոս:

---

[45] Նույն տեղում, թ. 61:
[46] Նույն տեղում:

Շնորհիվ գյուղի աշխատավորների անձնվեր աշխատանքի այդ պլանները կատարվեցին ժամանակին, որը հնարավորություն տվեց կատարել անասունների գլխաքանակի ավելացման պլանները: Այսպես, օրինակ, 1941 թ. պլանները խոշոր եղջերավոր անասունների գծով կատարվեց 106.3 տոկոսով, մանր եղջերավորներինը՝ 120.5 տոկոսով, խոզերինը՝ 105.5 տոկոսով[47]:

Պատերազմի առաջին տարվա ընթացքում բերքահավաքից ստացված եկամուտների և պետությանը հանձնված մթերքների մասին Բաքվում այն տարիներին հայերեն լեզվով հրատարակվող «Կոմունիստ» թերթում Ստեփանակերտի շրջանի Չանախչի գյուղի կոլտնտեսության նախագահ Ալեքսան Արզումանյանը գրում էր. «1941 թ. բերքահավաքը ավարտվել է առանց կորուստների: Հավաքվել և կալսվել է 35700 ցենտներ հացահատիկ, 20800 ցենտներ բանջարեղեն, այգիներից ստացվել է ավելի քան 100 ցենտներ զանազան մրգեղեն և 682 դեկալիտր օղի: Բացի այդ կոլտնտեսությունը կանխիկ դրամով 267581 ռուբլու եկամուտ է ստացել: Կատարել ու գերակատարել ենք պետական բոլոր տեսակի պլաններն ու առաջադրանքները: Հայրենիքի պաշտպանության ֆոնդին ենք հանձնել 10 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 50 կգ պանիր, 15 կգ յուղ: Գործող բանակ ենք ուղարկել 1000 կտոր տաք հագուստեղեն և զանազան տեսակի նվերներ... Կարմիր բանակի շարքերը գնացած իրենց որդիներին, ամուսիններին ու եղբայրներին փոխարինելու համար աշխատանքի դուրս եկան հայրերն ու մայրերը, քույրերն ու կանայք: Կոլտնտեսության դաշտերում մեծ նվիրվածությամբ են աշխատում 80-տարեկան Հարություն Առաքելյանը, 78 տարեկան Տիգրան Մնացականյանը, 85 տարեկան Զաքարյանը, որոնք պարտավորվել են աշխատել մինչև իրենց քաջարի որդիների հաղթական վերադարձը»[48]:

Ռազմաճակատի կարիքների համար հացից, կաթից, մսից բացի խիստ անհրաժեշտություն էր դարձել ծխախոտի մշակությունը, որը մինչ այդ չկար մարզում: Խնդիր դրվեց ծխախոտագործությամբ զբաղվել 1942 թ. սկզբներից: այդ ուղղությամբ կատարվեց

---

[47] РГАСПИ, ф. 17, оп. 43, д. 28, л. 31.
[48] «Կոմունիստ», 23 փետրվարի 1942:

զգալի աշխատանք, որի արդյունքը հստակ երևաց պատերազմի երկրորդ տարվա ամռանը: Մարզի աշխատավորները ռազմաճակատում կռվող մարտիկների համար աճեցրեցին բարձրորակ ծխախոտ՝ պետական պլանը կատարելով 150 տոկոսով[49]: Ծխախոտագործությունը հատկապես զարգացավ Մարտակերտի շրջանում: Քանի որ շաքարը ստացվում էր հիմնականում Ուկրաինայի այն շրջաններից, որոնք ժամանակավորապես հայտնվել էին գերմանա-ֆաշիստական զավթիչների լծի տակ, ապա դրա բացը լրացնելու նպատակով խնդիր դրվեց ԼՂԻՄ-ում զարգացնել մեղվապահությունը: Եթե նախկինում մեղվապահությամբ զբաղվում էին հատ ու կենտ անհատ-սիրողներ և կոլտնտեսությունները չէին զբաղվում մեղվապահությամբ, ապա հարց դրվեց մարզում ավելացնել մեղվաընտանիքների քանակը: Կոլտնտեսությունների առջև խնդիր դրվեց զբաղվել մեղվապահությամբ, պայքարել մեղրի բարձր բերքի համար, քանի որ այն ոչ միայն լրացնելու էր շաքարի պակասը, այլև բժշկական մեծ նշանակություն էր ունենալու Կարմիր բանակի վիրավոր մարտիկների ապաքինման գործում:

Հաջողությամբ լուծելով ծխախոտագործության և մեղվապահության զարգացման խնդիրները, դրանով իսկ մարզի գյուղատնտեսության աշխատավորներն իրենց արժանի ավանդը ներդրեցին Հայրենիքի պաշտպանության գործում:

Ռազմաճակատի պահանջներին համապատասխան իրենց աշխատանքները վերակառուցեցին նաև մարզի բամբակագործները, որոնց առջև խնդիր դրվեց ավելացնել բամբակի մշակման տարածքներն ու մթերման պլանները, ստանալ ավելի որարկյալ հումք, որի կարիքը շատ էր զգում Կարմիր բանակը: Բամբակի մշակումը հատկապես զարգացավ Մարտակերտի շրջանում: Առաջավորների շարքում էր շրջանի Մարալյան Սարով գյուղի կոլտնտեսությունը (նախագահ՝ Ա. Այվազյան), որը ժամանակին և պատվով կատարեց բամբակի հանձնման պլանը[50]:

Ինչպես նշեցինք մեր մենագրության առաջին գլխի երկրորդ ենթաբաժնում մարզն ուներ նաև բարձր հիմքերի վրա դրված

---

[49] «Սովետական Ղարաբաղ», 1 նոյեմբերի 1942:
[50] Նույն տեղում:

շերամապահություն, որի համար առկա էին բնական անհրաժեշտ պայմանները: Շերամապահությունը հանդիսանում էր ԼՂԻՄ-ի մետաքսի արդյունաբերության հումքի հիմնական բազան: Պատերազմը նոր խնդիրներ առաջ քաշեց շերամապահության բնագավառի աշխատողների առջև: Հարկավոր էր գտնել նոր միջոցներ, որը կբարձրացներ բոժոժի հանձնման պլանը: Եթե մինչև 1941 թ. տարվա մեջ իրականացվում էր շերամի որդի երկու կերակրում, որի շնորհիվ տարեկան հավաքվում էր կոկոնի երկու բերք, ապա շերամապահները անցան շերամիորդի 3 կերակրման, որը հնարավորություն տվեց բոժոժի հանձնման պլանը մարզում կատարել 110.5 տոկոսով[51]:

Մարզգործկոմի նախագահի տեղակալ Միսաք Բալայանը ելույթ ունենալով 1941 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ԼՂԻՄ կուսակցական կազմակերպության 11-րդ գումարման 5-րդ պլենումի նիստում, անդրադառնալով շերամապահության բնագավառում ձեռք բերված նվաճումներին, նշեց. «Մենք հնարավորություն ունենք բարձրացնել շերամի բերքը յուրաքանչյուր տուփից ստանալ 55 կգ բերք: Այսպես, օրինակ, Հադրութի շրջանը այս տարի միջին հաշվով յուրաքանչյուր տուփից ստացել է 56 կգ շերամի բերք: Առանձին կոլտնտեսություններ՝ Մարալյան-Սարով (կոլտնտեսության նախագահ՝ Այվազյան) ստացել է 81.8 կգ՝ պլանով նախատեսված 49 կգ-ի փոխարեն, Ծամձոր գյուղի «Հաղթանակ» կոլտնտեսությունը (նախագահ՝ Ադրբ. ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր Այվազյան) տվեց 71 կգ՝ պլանը կատարելով 146 տոկոսով»[52]:

Դա հնարավորություն տվեց ապահովել մարզի մետաքսի արդյունաբերությունը անհրաժեշտ հումքով: Ինչպես նշեցինք մեր մենագրության երրորդ գլխի առաջին ենթագլխում, մետաքսարդյունաբերությունը կարողացավ իր աշխատանքները նույնպես վերակառուցել պատերազմի պայմաններին համապատասխան և յուրացնել պարաշյուտի կտորի, վիրահատության մեջ օգտագործվող մետաքսաթելի, ավիացիոն արդյունաբերության համար մեկուսիչ ժապավենի, հրետանու համար հատուկ մետաքսի կտորի ար-

---

[51] «Սովետական Ղարաբաղ», 1 դեկտեմբերի 1941:
[52] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 73.

տադրությունը: Այդ ամենը ի շնորհիվ մարզի շերամապահների հերոսական աշխատանքի: Շերամապահությունը զգալի հաջողության հասավ՝ Մարտունու և Հադրութի շրջաններում: Այդ շրջաններում տարվա վերջում և 1942 թ. սկզբներին հատուկ ագրոնոմիական միջոցառումներ ձեռնարկեցին գալիք տարվա շերամի որդի կերակրման համար կերային լավագույն բազա ստեղծելուն: ԼՂԻՄ-ի շերամապահությամբ զբաղվող կոլտնտեսությունները շերամի որդի երրորդ կերակրումից ստացած բոժոժի հանձնման 1942 թ. պլանը ընդհանուր առմամբ կատարեցին 101.1 տոկոսով, իսկ Հադրութի շրջանի շերամապահները՝ 112 տոկոսով[53]:

Սույն գլխի նախորդ բաժնում արդեն նշեցինք, որ պատերազմական պայմաններին համապատասխան իրենց աշխատանքները վերակառուցեցին նաև Ղարաբաղի գինու տրեստի ձեռնարկությունները, որոնք արագորեն յուրացրեցին բարձրորակ սպիրտի թորման տեխնոլոգիան և ստացան բժշկական նպատակով օգտագործվող սպիրտ, որի կարիքը շատ էին զգում ռազմաճակատային հոսպիտալներում և երկրի բուժհիմնարկներում: Սպիրտը ստացվում էր հիմնականում խաղողից ու թթից, որի աճեցման համար Լեռնային Ղարաբաղում կային նպաստավոր պայմաններ: Թթի և խաղողի մշակմամբ Արցախում զբաղվում էին դեռևս պատմական ժամանակներից: Ռազմաճակատի կարիքները բավարարելու նպատակով մարզի այգեգործների առջև խնդիր դրվեց զարգացնել և ավելացնել այդ կարևոր մրգերի արտադրությունը: Լավագույն այգեգործները համարվում էին մեծահասակները, որոնք աշխատունակ այգեգործների բանակ մեկնելուց հետո, ավելի կրկնապատկված ուժով ու եռանդով կպան իրենց գործին: Շնորհիվ ձեռնարկված միջոցառումների, պատերազմի տարիներին զգալի չափով ավելացան թթենու և խաղողի այգիների տարածքները, բարելավվեցին մշակման ագրոտեխնիկական միջոցները, ստացվեցին նոր տեսակներ, որոնք նպաստեցին բերքատվության բարձրացմանը, հնարավորություն ստեղծեցին կատարել և գերակատարել պետական պլանները:

---

[53] «Կոմունիստ», 5 դեկտեմբերի 1942:

Այսպիսով, ամփոփելով մեր ուսումնասիրության երկրորդ գլխում քննարված հիմնահարցերը, գալիս ենք այն եզրակացության, որ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, ԼՂԻՄ-ի հայ բնակչության դեմ կիրառել է պլանավորված հայաթափության քաղաքականություն՝ ռազմաճակատ ուղարկելով 45000 հայ, որը կազմել է մարզի 132800 հայ բնակչության ավելի քան 30%-ը, որից զոհվել են 22000-ը, այսինքն՝ 15%-ը: համեմատելով Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին 194 միլիոն բնակչություն ունեցող ԽՍՀՄ-ից Կարմիր բանակի շարքերը զորակոչված 11 միլիոն ռազմիկների հետ, որը կազմել է բնակչության 6%-ը, իսկ բանակի կորուստները զորակոչվածների 3%-ը, ապա տեսնում ենք ԼՂԻՄ-ից զորակոչվածների ու ռազմաճակատում զոհվածների տոկոսային հսկայական տարբերությունը: Դա մեզ իրավունք է տալիս եզրակացնելու, որ պատերազմի տարիներին Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը ԼՂԻՄ-ի նկատմամբ կիրառել է ցեղասպանության քաղաքականություն: Ռազմամոբիլիզացիոն աշխատանքների հետ միաժամանակ մարզում իրականացվեց ռազմապաշտպանական միջոցառումներ, որոնց նպատակը հայկական երկրամասը հակառակորդի հավանական հարձակումից պաշտպանվելն էր: Շնորհիվ ԼՂԻՄ-ի կուսակցական և պետական մարմինների ձեռնարկած անհրաժեշտ միջոցների, հնարավոր եղավ կարճ ժամանակամիջոցում մարզի արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառների աշխատանքները վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան, որը հնարավորություն ստեղծեց թողարկել ռազմաճակատի կարիքների համար անհրաժեշտ արտադրանք և գյուղատնտեսական մթերքներ: Եվ այդ ամենը կատարվեց ռազմաճակատ մեկնած իրենց ամուսիններին, հայրերին, եղբայրներին ու որդիներին փոխարինած կանանց, մեծահասակների, հաշմանդամների ու պատանիների ամենաօրյա հերոսական աշխատանքի շնորհիվ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԼՂԻՄ-Ի ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Աշխարհի ոչ մի բանակ չի կարող հաղթել թշնամուն, եթե չունի ամուր թիկունք: Ամուր թիկունքը ոգևորում է մարտնչող բանակին, նրան մատակարարում սննդամթերք, զինամթերք, հագուստ և ամենից գլխավորը՝ մարդկային համալրումներ: Այդ ամենը ոչ միայն հզորացնում են բանակը, այլև նպաստում նրա բարոյահոգեբանական և մարտական ոգու բարձրացմանը: Թիկունքը ռազմաճակատին նաև տալիս է հաղթելու տրամադրություն և նպատակաուղղված գաղափարներ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռազմաճակատն ու թիկունքը ներկայացնում էին միասնական ու անբաժանելի մարտական ճամբար, որը պատրաստ էր հաղթահարել ցանկացած դժվարություններ՝ գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղվող պայքարում հաղթանակ տանելու ճանապարհին: Այս առումով էլ ԼՂԻՄ-ի աշխատավորությունը, որպես Խորհրդային Միության նման, հզոր երկրի մի մասնիկ, պատերազմի տարիներին ամեն ինչ արեց նենգ թշնամու դեմ հաղթանակ տանելու գործում: Մենագրության նախորդ գլխում մենք խոսեցինք ԼՂԻՄ-ի ժողովրդական տնտեսությունը պատերազմական պահանջներին համապատասխան վերակառուցելու մասին, այժմ ցույց տանք, թե ինչ ավանդ ներդրեց մարզի աշխատավորությունը՝ ըստ ժողովրդական տնտեսության բնագավառների:

* * *

Պատերազմի առաջին տարում պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցված արդյունաբերական

ձեռնարկությունները ոչ միայն պահպանեցին իրենց գոյությունը, այլև շնորհիվ ձեռնարկված մի շարք կարևոր միջոցառումների, յուրացրեցին բանակին անհրաժեշտ արտադրանքի թողարկումը: Դրա հետ մեկտեղ ստեղծվեց 14 նոր ձեռնարկություն: Դրանցից հիշատակության է արժանի Ստեփանակերտի մետաքսագործական ֆաբրիկայի երկրորդ մասնաշենքի շինարարությունը, որն ավարտվեց 1943 թվականին: Նոր ֆաբրիկան սարքավորված էր նորագույն հաստոցներով, որոնք հնարավորություն էին տալիս արտադրել ամուր, որակյալ մետաքսաթել և գործվածք[1]: Նույն 1943 թ. ապրիլին ավարտվեցին նաև Մատաղիսի հիդրոէլեկտրակայանի շինարարության աշխատանքները՝ Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի վրա: Դա զգալի չափով նպաստեց Մատաղիսի փայտամշակման արտադրության ձեռնարկությունների կարողությունների ընդլայնմանը, հնարավորություն տվեց մարզում ստեղծել նոր մեքենավերանորոգման, դարբնաձիասարքերի արհեստանոցներ, ջրաղացաքարերի արտադրամաս, պոմպակայան և այլն[2]: Բացի դրանից պատերազմի տարիներին մարզում կառուցվեցին՝ լուցկու, օճառի, կաշեմշակման գործարաններ, 7 խոշոր կոմբինատ, 6 մեքենաղաց, ռազմական տիպի սայլեր, ձիաթամբեր, ձիասարքեր, խամուտներ (ձիու վզին հագցվող լուծ) արտադրող նոր արհեստանոցներ[3]: Ստեփանակերտի մեխանիկական գործարանին կից ստեղծվեց ձուլման արտադրամաս, որը կարող էր օրական թողարկել 3 տոննա ձուլվածք: Նույն գործարանին կից ստեղծվեց ավտոմեքենաների վերանորոգման արտադրամաս, որտեղ կատարվում էին ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Ստեփանակերտի փայտամշակման ֆաբրիկայում բացվեց սայլերի երկաթակոտ անիվների ու կազակային հեծելազորի համար նոր տիպի հեծելաթամբերի պատրաստման արտադրամասեր: Նույն ֆաբրիկային կից բացվեց Ստեփանակերտում տեղաբաշխված Դաղստանի Բույնակսկի քաղաքից էվակուացված հետևակային զինվորական ուսումնարանի,

---

[1] **Ա. Բ. Զախարյան**, Լեռնային Ղարաբաղի մետաքսի արդյունաբերությունը, էջ 54-56:
[2] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 49.
[3] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:

402-րդ հրաձգային դիվիզիայի[4] զորամասերի և Հադրութի շրջանում տեղակայված սահմանապահ ուղեկալների տեխնիկայի ընթացիկ վերանորոգման համար անհրաժեշտ արտադրամաս: Վերոհիշյալ արտադրամասերում կատարվում էին նաև փայտամշակում և մետաղամշակում պահանջող պահեստամասերի ընթացիկ նորոգում, ինչպես նաև Ստեփանակերտ-Եվլախ նեղգիծ երկաթուղին բանուկ պահող մեխանիզացիայի վերանորոգման աշխատանքներ[5]:

Զգալի չափով ավելացան նաև Ստեփանակերտի սայլաշինական արտադրամասի կարողությունները: Նմանապես ավելացան նաև փայտամշակման ֆաբրիկայի այն արտադրամասերի կարողությունները, որոնք զբաղված էին սայլաշինության համար անհրաժեշտ պահեստամասերի և սննդարդյունաբերության համար զանազան չափերի փայտե տակառների թողարկմամբ: Մեծ չափով ավելացավ նաև Շուշի քաղաքի գուլպա-տրիկոտաժի արհեստանոցի արտադրողականությունը, որտեղ իրացվեց բրդյա տաք գուլպաների արտադրությունը[6]:

Չնայած արդյունաբերական շատ ձեռնարկություններից ռազմաճակատ էին մեկնել մեծ թվով որակյալ բանվորներ ու ինժեներատեխնիկական անձնակազմ, սակայն ձեռք առնված մի շարք միջոցառումների շնորհիվ նրանց տեղը լրացրել էին բանակ մեկնածների կանայք, հայրերը և պատանի զավակները: Թիկունքի աշխատավորները ամեն ինչ անում էին ժամանակին կատարել օրվա պլանները, ինչու չէ, նաև գերակատարել այն: Այսպես, օրինակ, Ղարաբաղմիության «Մետալիստ» արտելի 36 վարպետներից ռազմաճակատ էր մեկնել 16-ը: Սակայն արտելում ոչ մի րոպե աշխատանքը կանգ չառավ և ամենօրյա աշխատանքային պլանները ոչ միայն կատարվում, այլև գերակատարվում էին, շնորհիվ ռազմաճակատ մեկնածներին փոխարինման եկածների և արտելի մեծահասակ վարպետների հերոսական աշխատանքի: Ռազմաճակատում մարտնչող երեք որդու հայր Ա. Ավանեսյանը աշխատում էր 3-4 վարպետի փո-

---

[4] Դիվիզիան կազմավորվել է Ստեփանակերտում 1941 թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի վերջերը և այնտեղ մնացել մինչև 1942 թ. հոկտեմբերի սկիզբը, ապա ուղարկվել Իրան, այնուհետև Հյուսիսային Կովկաս:

[5] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 50.

[6] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 51.

խարեն և օրվա պլանները կատարում 250-300 տոկոսով: Ճակատայինների հայրեր Գ. Ղազարյանը և Ա. Իշխանյանը իրենց պլանները կատարում էին 150-180 տոկոսով: Մարտունու շրջկոմբինատի ալրաղացի վարպետ Դադայանը իր պլանները գերակատարում էր 343 տակոսով: Իրենց օրական պլանները գերակատարում էին նաև ճակատայինների մայրեր՝ Խնձրիստանի մետաքսաոլորման ֆաբրիկայի ստախանովական Ղումաշ Ալաջաջյանը 116.5 տոկոսով, Տողի մետաքսաոլորման ֆաբրիկայի բանվորուհի Մաշինկա Բեջանյանը՝ 130 տոկոսով, նրա գործընկերուհիներ Պուժի Ղուկասյանը և Ղուշի Ղարաշյանը՝ 129 տոկոսով: Ստեփանակերտի առևտրի բաժանմունքի կարի արհեստանոցի բանվորուհիներ՝ Ա. Հայրապետյանը և Ն. Սարգսյանը օրվա պլանները կատարում էին 130 տոկոսով, նրանց գործընկերուհի՝ Ս. Առաքելյանը՝ 140 տոկոսով[7]: «Մարտունու շրջարդկոմբինատի բանվորական կոլեկտիվը կրկնապատկելով իր ուժերը 1941 թ. հուլիս ամսվա պլանը կատարեց 215 տոկոսով, երկրին 13275 ռուբլու արտադրանք տալու փոխարեն, տալով 18581 ռուբլու արտադրանք: Կոմբինատի առանձին բանվորներ պլանների կատարման գործում ցուցաբերեցին արտակարգ նվիրվածություն և աչքի ընկան առաջադրանքի ռեկորդային ցուցանիշներով,- իր աշխատության մեջ նշում է պատմական գիտությունների թեկնածու Ռոնա Բալայանը,- Մեքենաղացի մեխանիկ Հակոբ Դանիելյանը հուլիս ամսում իր պլանը կատարեց 100 տոկոսով: Բարձր ցուցանիշների հասավ կոմբինատի բրուտագործական ցեխը (ցեխի վարիչ Սահակյան), որը հուլիս ամսվա պլանը կատարեց 205 տոկոսով: Ցեխի վարպետ Ամիրբար Սահակյանը, դարբնոցային ցեխի դարբին Սարուխան Հայրապետյանը և պայտառ Գերասիմ Դահրամանյանը պլանները հուլիս ամսում կատարեցին 200-260 տոկոսով»[8]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Միության բանվոր դասակարգը լայնորեն կիրառում էր ստախանովական շարժման և սոցիալիստական մրցության ավանդույթները և հասնում նորանոր աշխատանքային հաջողությունների: Սոցիալիս-

---

[7] **Հրանտ Աբրահամյան**, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Բ, 1924-1925, էջ 126-127:

[8] **Ռոնա Բալայան**, Մեծ փորձության սկիզբը, էջ 10-11:

տական մրցության շարժման մեծ վերելք էր տեղի ունենում հատկապես աշխատավորների համերաշխության միջազգային օրվա՝ մայիսի 1-ի, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության, խորհրդային սահմանադրության և Կարմիր բանակի տարեդարձների տոնակատարության նախօրյակներին: Ծայր առավ օրական պլանները 200 տոկոսով կատարողների շարժում, որը հնարավորություն էր տալիս այդ շարժման առաջավորներին տեխնոլոգիական նոր միջոցներ և սեփական ուժերի ռացիոնալ կիրառման շնորհիվ, առաջնորդվելով «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով, հասնել աշխատանքային նորանոր հաջողությունների: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի «Կոմսոմոլ» բազմաճյուղ արտելի վարպետ, երեք ճակատայինի հայր Արշակ Առաքելյանը, չնայած իր ալևոր հասակին մշտապես կատարում էր օրական երկու նորմա: Օրվա երկու պլան էին կատարում Մարո Հարությունյանը, Ելենա Մալոյանը, Հերսիկ Նալբանդյանը, որոնց ամուսինները կռվում էին ռազմաճակատում: Վերոհիշյալ արտելի գուլպայագործական արտադրամասը 1941 թ. հոկտեմբեր ամսվա պլանը կատարեց 152 տոկոսով: Իր կիսամյա պլանը հաջողությամբ գերակատարեց նաև Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան: Ատաղձագործ Գրիգոր Սարգսյանը, որի երկու որդիները գտնվում էին գործող բանակում, իր օրվա պլանները կատարում էր 200 տոկոսով: Նման պարտավորություն էր վերցրել նաև ֆաբրիկայի բանվորուհի Մանյա Սարգսյանը, որի ամուսինը մարտնչում էր ռազմաճակատում: Շուտով լայն ծավալ ընդունեց իրենց արտադրական պլանները 300-տոկոսով կատարողների շարժումը: Պատերազմի երկրորդ տարում 138 կոմերիտական բանվոր-բանվորուհիներ դարձան 2 և 3-հարյուրակայիններ, այսինքն իրենց արտադրական պլանները կատարում էին 200-300 տոկոսով:

Սոցիալիստական մրցության լայն ծավալումը հնարավորություն էր ստեղծում օրեցօր ավելի բարձրացնել ռազմաճակատի համար անհրաժեշտ արտադրանքի քանակը: Այսպես, օրինակ, Ղարմետաքսարդյունաբերության համակարգի ֆաբրիկաները 1944 թվականին՝ 1937 թ. համեմատությամբ համախառն արտադրանքն ավելացրին 1 միլիոն ռուբլով, Ղարգինտրեստի ձեռնարկություններ-

ը՝ 3 միլիոն ռուբլով: Պատերազմի տարիներին աճել էր նաև տեղական արդյունաբերության արտադրանքը, որը տեղական միջոցների բազայի վրա մեծաքանակ ու բազմազան արտադրանք էր մատակարարում երկրին[9]: Պատերազմական տարվա վերջում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները 9 տոկոսով ավելի արտադրանք էին տալիս՝ 1940 թ. համեմատությամբ:

* * *

Պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև ԼՂԻՄ-ի գյուղատնտեսության բնագավառի աշխատավորները: Ինչպես նշեցինք գյուղից ռազմաճակատ մեկնած իրենց ամուսինների, հայրերի ու որդիների փոխարեն կոլտնտեսությունների դաշտեր ու այգիներ աշխատանքի դուրս եկան կանայք, մեծահասակներն ու պատանիները: Պատերազմի տարիներին, շնորհիվ մարզի գյուղի աշխատավորների դժվարին, բայց հերոսական աշխատանքին, սովամահության որևէ դեպք չգրանցեց: Մարզի գյուղի աշխատավորները կարողանում էին ժամանակին ոչ միայն անկորուստ հավաքել բերքը և կատարել պետական մթերումների պլանները, այլև իրենց անձնական խնայողություններից նույնիսկ բաժին հանել Կարմիր բանակին, ճակատայիններին և մարզ էվակուացվածների ընտանիքներին և այլն, որոնց մասին կխոսենք մենագրության սույն գլխի հաջորդ բաժիններում: Շնորհիվ գյուղի աշխատավորների կատարած հերոսական աշխատանքի, պատերազմի տարիներին ոչ միայն պահպանվեց մարզի ցանքատարածությունների չափը, այլև այն ավելացվեց: Այսպես, օրինակ, եթե 1940 թ. մարզի ցանքատարածությունները կազմում էին 79700 հեկտար, ապա 1945 թ. այն հասավ 85700-ի, այսինքն ավելացավ 6000 հեկտարով, իսկ բանջարաբոստանային մշակաբույսերի տարածությունները ընդարձակվեցին 2591 հեկտարով[10]: Մարզում հիմնականում հացազգի մշակաբույսերից մշակվում էր՝ ցորեն, գարի, լոբազգի բույսեր (լոբի, սիսեռ, ոլոռ), կորեկ, եգիպտացորեն, վարսակ և այլն:

---

[9] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[10] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:

Տեխնիկական մշակաբույսերի համար հատկացված էր 2327 հեկտար ցանքատարածք, որտեղ ցանվում էր բամբակ՝ 1500, ծխախոտ՝ 200, դեղաբույսեր՝ 20, գվայուլա (կաուչուկակիր)՝ 507 և այլն՝ 100 հեկտար:

Բանջարաբոստանային մշակաբույսերի համար հատկացված էր 2250 հեկտար, որից կարտոֆիլի համար՝ 1500, բանջարեղենի՝ 650, այդ թվում կաղամբ՝ 220, սոխ և սխտոր՝ 210, բոստանային բույսերի համար՝ 100 հեկտար:

Կերաբույսերի համար հատկացված էր 2100 հեկտար, որից միամյա խոտաբույսեր՝ 750, բազմամյա խոտաբույսեր, այդ թվում՝ առվույտ՝ 100 և արմատապտուղներ՝ 550, սիլոսային բույսեր՝ 650 և այլ խոտաբույսեր՝ 50 հեկտար[11]:

Հացահատիկի բերքատվության բարձրացմանը նպաստում էր ոչ միայն ցանքատարածությունների ավելացումը, այլև բարձրորակ տեղական սերմացուի ստացումը: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի շրջանի Նորագյուղի «Նոր կյանք» և Մարտունու շրջանի Շեխեր գյուղի Կիրովի անվան կոլտնտեսությունները պատերազմի տարիներին մասնագիտացան մարզի կլիմայական պայմաններին հարմար տեսակավոր նոր սերմեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք տարեկան 2400 ցենտներից ավելի տեսակավոր սերմեր են մատակարարել մարզի կոլտնտեսություններին: Այդ տեսակավոր սերմերի բազայի վրա մարզի կոլտնտեսություններում ստեղծվեցին 215 սերմնաբուծական օղակներ, որոնք 1942 թ. ցանեցին 8792 հեկտար հողամաս: Դրա շնորհիվ արդեն 1943-1944 թթ. մարզի բոլոր կոլտնտեսությունները լիովին ապահովվեցին տեսակավոր սերմերով, որը հնարավորություն տվեց զգալի չափով ավելացնել բերքատվությունը[12]:

Ցանքատարածությունների համար նոր հողակտորների ավելացումը պահանջում էր քրտնաջան ու համառ աշխատանք: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղի կոլտնտեսության նախագահ Զաքարիա Առուատամյանի տվյալներով 1942-1943 թթ. կոլտնտեսության ցանքատարածություններն ըն-

---

[11] РГАСПИ, ф. 17, оп. 45, д. 18, л. 112.
[12] Նույն տեղում:

դարձակվել են շուրջ 80 հեկտարով: Այդ հողերը նվաճվել է համառ աշխատանքի շնորհիվ: Մեծ աշխատանք է կատարվել, մինչև որ այդ հողամասերը մաքրվել են քարերից ու մացառներից, մինչև որ աճեցվել է բարձր բերքը: 1943 թ. կոլտնտեսությունը 381 ցենտներ հացահատիկ, 934 ցենտներ մրգեղեն և 594 դույլ օղի ավելի է ստացել, քան 1942 թվականին: Մեծ ուշադրություն է դարձվել հացահատիկային մշակաբույսերի սերմացուի որակի լավացմանը: Տեսակավոր սերմեր ցանելով, ստացվել է ռեկորդային բերք: Այսպես, 7 հեկտար աշնան տեսակավոր սերմեր ցանելով ստացվել է 119 ցենտներ բերք, 7 հեկտար աշնան գարուց՝ 106 ցենտներ, 5 հեկտար վարսակից՝ 45 ցենտներ բերք և այլն[13]:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ինչպես արդեն նշեցինք մեր մենագրության նախորդ գլխում, մարզում արմատավորվեց տեխնիկական մի շարք նոր մշակաբույսերի մշակումը: Այսպես, օրինակ, 1942 թ. մարզում առաջին անգամ կատարվեց 38 հեկտար ծխախոտի ցանք, որը առատ բերք տվեց: 1944 թ. ծխախոտի ցանքը հասցվեց 145 հեկտարի, որը հնարավորություն տվեց ծխախոտամթերման պլանը կատարել 156 տոկոսով[14]: Մարտակերտի շրջանում 1944 մթերվեց 636 ցենտներ, Ստեփանակերտի շրջանում՝ 216, Մարտունու շրջանում՝ 175, Հադրութի շրջանում՝ 177 ցենտներ ծխախոտ[15]:

Ինչպես արդեն նշել ենք, պատերազմի տարիներին մարզում զարգացում ապրեց նաև բամբակի մշակումը: Այն հատկապես տարածված էր Մարտակերտի շրջանում: Այդ շրջանի Ի. Վ. Ստալինի անվան միլիոնատեր կոլտնտեսության Ն. Սանթուրյանի օղակը եթե 1942 թ. մեկ հեկտարից ստանում էր 11 ցենտներ բամբակ, ապա 1944 թ. աշնանը մեկ հեկտարից ստացավ 21 ցենտներ: Կոլտնտեսությունը բամբակմթերման պլանը կատարեց 200 տոկոսով[16]:

Ինչպես արդեն նշել ենք, պատերազմի տարիներին մարզում զարգացում ապրեց նաև մեղվապահությանը: Այսպես, օրինակ,

---

[13] «Կոմունիստ», 21 հունվարի 1944:
[14] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[15] РГАСПИ, ф. 17, оп. 44, д. 20, л. 4-6.
[16] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:

եթե ԼՂԻՄ-ում 1942 թ. եղել է 1000 մեղվաընտանիք, 1943 թ.՝ 6306, ապա 1944 թ. արդեն հաշվվում էր 7550 մեղվաընտանիք. 2350 մեղվաընտանիք կար Ստեփանակերտի, 1900-ը՝ Մարտակերտի, 1750-ը՝ Մարտունու, 1000-ը՝ Հադրութի և 550-ը՝ Շուշիի շրջաններում: Բացի կոլտնտեսություններից և առանձին կոլտնտեսականներից, մեղվապահությամբ զբաղվում էին մարզի անտառտնտեսության, սպառողական կոոպերացիայի միության, առբաժնի, լուսաբաժնի, Ղարմետաքսարդի, Ղարգինտրեստի, տեղարդ արդյունաբերության, սննդի կոմբինատի, Վանքլու գյուղի Շահումյանի անվան արտելի կոլեկտիվները և այլն: Փայտամշակման և տեղարդ կոմբինատներում մեղվապահների համար պատրաստվում էին համապատասխան գույք՝ 50-100 կգ տարողության տակառներ՝ պատրաստված լորենու փայտից, մեղվափեթակների արկղեր, դրանց մեջ տեղադրվող շրջանակներ՝ իրենց մետաղյա բարակ լարերով, մեղվապահի ցանցավոր դիմակներ, ծուխ արձակող փուքսեր, բացի այդ դրսից ներմուծվում էին մեղրազտիչներ, մեղրամոմ և անհրաժեշտ այլ գույք ու հանդերձանք[17]:

Պատերազմի տարիներին զգալի չափով զարգացավ նաև շերամապահությունը, որը հանդիսանում էր մետաքսարդյունաբերության հումքի հիմնական մատակարարը: Շնորհիվ մարզի շերամապահության բնագավառի աշխատողների հերոսական աշխատանքի մարզի մետաքսագործական ձեռնարկությունները ժամանակին ստանում էին պլանով նախատեսված հումք և կատարում ռազմաճակատի պատվերները: Նախորդ գլուխներում մենք նշել էինք, որ շերամապահության զարգացման համար մարզում կային բնական անհրաժեշտ պայմաններ, շերամորդի կերակրման համար անհրաժեշտ բազա՝ թթենու ծառաստաններ, հնուց ժառանգված մասնագիտական ավանդույթներ: Պատերազմի տարիներին շերամորդի նախկինում երկու անգամ կերակրման փոխարեն անցան երեք անգամ կերակրման, որը հնարավորություն տվեց տարեկան ոչ միայն երկու անգամ հավաքել կոկոնի բերք, այլև զգալի չափով բարձրացնել բոժոժի սերմի 1 տուփից ստացվող բերքի չափը, գերակատարել

[17] РГАСПИ, ф. 17, оп. 44, д. 19, л. 5; оп. 43, д. 30, л. 110.

պետական մթերումների պլանը: Շերամապահությամբ զբաղվում էին՝ Հադրութի, Մարտակերտի, Մարտունու, Ստեփանակերտի և Շուշիի շրջաններում: Շերամապահության ամենազարգացած շրջանները համարվում էին՝ Հադրութի և Մարտունու շրջանները, որտեղ գտնվում էին մարզի ամենաշատ թթենու այգիները: 1945 թ. դրությամբ Հադրութի շրջանը մշակում էր 890 տուփ բուժուժի սերմ, ամեն մի տուփից ստանում 49 ցենտներ կոկոնի բերք, ընդհանուրը՝ 437 ցենտներ:

Մարտակերտի շրջանը մշակում էր 808 տուփ բուժուժի սերմ, յուրաքանչյուր տուփի միջին բերքատվությունը կազմում էր 48 ցենտներ, ընդհանուրը՝ 387.8: Մարտունու շրջանը մշակում էր 495 տուփ բուժուժի սերմ, յուրաքանչյուր տուփի միջին բերքատվությունը կազմում էր 48.6 ցենտներ, ընդամենը՝ 240.6 ցենտներ: Ստեփանակերտի շրջանը մշակում էր 120 տուփ բուժուժի սերմ, յուրաքանչյուր տուփից ստանում 45.7 ցենտներ կոկոն, ընդհանուր բերքը՝ 155 ցենտներ: Շուշիի շրջանում մշակվում էր 2 տուփ բուժուժի սերմ, յուրաքանչյուր տուփից ստանում 48.6 ցենտներ և այլն: Ընդհանուր առմամբ 1945 թ. մարզում ստացվել էր 2350 ցենտներ կոկոն[18]: Համեմատության կարգով նշենք, որ 1939 թ. մարզի շերամապահները հանձնել էին 1203 ցենտներ շերամի կոկոն[19], այսինքն 1945 թ. մարզում 1939 թ. համեմատությամբ ավել էր հանձնվել 1153 ցենտներ կոկոն:

Մարզի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերից մեկը հանդիսանում էր անասնապահությունը: Պատերազմի տարիները բնութագրվում են կոլտնտեսություններում անասնապահության հետագա զարգացմամբ: Այդ տարիներին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը մարզում ավելացավ 11.1 տոկոսով, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 31.2 տոկոսով, զգալի աճեց նաև խոզերի ու ձիերի գլխաքանակը[20]: Այդ ամենը հնարավորություն տվեց ժամանակին կատարել պետությանը՝ մսի, կաթի, յուղի, բրդի, կաշվի մթերումների հանձնման պլանները: Մարզում կային

---

[18] РГАСПИ, ф. 17, оп. 45, д. 18, л. 67.
[19] Նույն տեղում, ց. 22, գ. 42, թ. 69:
[20] РГАСПИ, ф. 17, оп. 43, д. 28, л. 41.

շատ կոլտնտեսություններ, որտեղ անասնապահությամբ զբաղվում էին օրինակելի կերպով և ստանում լավ եկամուտ: Նրանք դրան հասնում էին կերի կայուն բազայի և ապահովագրական ֆոնդի ստեղծմամբ, անասնաբուժական, անասնաբուծական և տեխնիկական միջոցների լայն կիրառման շնորհիվ: Այսպես, օրինակ, 1942 թ. շնորհիվ անասնապահների եռանդուն աշխատանքի, մարզում կուտակվեց 105980 տոննա կոշտ կեր, 25000 տոննա հյութալի կեր: Մյուս տարին տհաճություններից խուսափելու նպատակով, անհրաժեշտ էր ստեղծել նաև կերի ապահովագրական ֆոնդ, կարգավորել խոտի դեզերի ստեղծման և պահպանման աշխատանքը, ապահովել ամեն տեսակ անասնաբուժատեխնիկական միջոցառումները, որպեսզի զերծ մնան անասունների անկման դեպքերից: Այսպես, օրինակ, Մարտունու շրջանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան կոլտնտեսությունն ուներ 4 անասնապահական ֆերմա, որոնք բոլորն էլ 1942 թ. կատարեցին իրենց պետական պլանները: Կոլտնտեսությունը մշտապես ավել էր կատարում անասնակերի պատրաստման պլանը, մշտապես ուներ խոտի ավելցուկ, որը հնարավորություն էր տալիս, ոչ միայն պահպանել անասնագլխաքանակը, այլև ժամանակին կատարել մսամթերումների հանձնման պետական պլանը: Այդպիսին էր նաև վիճակը Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ, Ստեփանակերտի շրջանի Խնածախ գյուղի կոլտնտեսություններում և այլն: Օրինակ, Խնածախ գյուղը կոլտնտեսությունը 1942 թ. համար նախատեսված խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի զարգացման պլանները կատարեց 112.8 տոկոսով, մանր եղջերավոր անասունների գլխաքանակինը՝ 124.9, խոզերինը՝ 271, ձիերինը՝ 101 տոկոսով[21]: Մոխրաթաղի կոլտնտեսությունում 1943 թ. միայն ոչխարների գլխաքանակը ավելացրին 152 տոկոսով, հասան այն բանին, որ յուրաքանչյուր ոչխարից ստացան 1.9 կգ. բուրդ և ժամանակին կատարեցին պետական մթերումների պլանները[22]:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվում մենք հայտնաբերե-

---

[21] «Սովետական Ղարաբաղ», 25 սեպտեմբերի 1942:
[22] «Սովետական Ղարաբաղ», 16 հունիսի 1943:

ցինք մի փաստաթուղթ, որը ստորագրված և վավերացված էր ԼՂԻՄ Մարտունու շրջանի շրջխորհրդի գործկոմի նախագահի կողմից: Այդ փաստաթղթում արժեքավոր տեղեկություններ կան 1941-1945 թթ. շրջանի գյուղատնտեսության վերաբերյալ և նշված է, թե պատերազմի տարիներին գյուղատնտեսական ինչ մթերքներ և ինչ չափով են հանձնվել պետությանը: Այսպես, նշված ժամանակաշրջանում պետությանը հանձնվել է՝ ցորեն՝ 75140 ցենտներ, միս՝ 14980 ցենտներ, կաթ՝ 1500 ցենտներ, բուրդ՝ 1050 ցենտներ, կարտոֆիլ՝ 9250 ցենտներ, պանիր՝ 260 ցենտներ, ձու՝ 1382000 հատ, բանջարեղեն՝ 6450 ցենտներ, շերամի կոկոն (բոժոժ)՝ 135 ցենտներ, սպիրտ՝ 7760585 գր, խաղող՝ 26430 ցենտներ, մեղր՝ 40 ցենտներ և ծխախոտ՝ 10 ցենտներ[23]:

Տարբեր արխիվներում կատարած մեր ուսումնասիրությունների ընթացքում մեզ չի հաջողվել նման ամփոփիչ տվյալներ հայտնաբերել ԼՂԻՄ-ի մյուս շրջանների վերաբերյալ, որպեսզի ցույց տանք, թե պատերազմի տարիներին մարզի մյուս 4 շրջանների գյուղատնտեսության աշխատողները ինչ են տվել պետությանը: Սակայն հիմք ընդունելով Մարտունու շրջանի տվյալները և միջին հաշվով այն տարածելով մյուս շրջանների վրա, կստանանք պատկառելի թվեր, որոնք ցույց կտան, թե ինչ ավանդ են ներդրել մարզի գյուղատնտեսության աշխատողները՝ պատերազմում տարած հաղթանակի գործում:

* * *

Այդ ամենի հետ միասին մարզի աշխատավորությունը պատերազմի տարիներին իր անձնական խնայողություններից մուծումներ էր կատարում երկրի պաշտպանության ֆոնդի, տանկային շարասյուների, ավիաէսկադրիլիաների կառուցման հաշվին, բանակի համար հավաքում տաք հագուստ, զանազան նվերներ և դրանք ուղարկում ռազմաճակատում մարտնչողներին, բաժանորդագրվում զանազան փոխառությունների և այլն:

---

[23] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 274, գ. 2, թ. 10:

Այսպես, օրինակ, դեռևս 1941 թ. ամռանը խորհրդային հայրենասեր մարդկանց նախաձեռնությամբ ստեղծվեց ԽՍՀՄ պաշտպանության ֆոնդ: Թերթերն ու ռադիոն ամեն օր հաղորդում էին այդ ֆոնդի համալրման մասին: Խորհրդային Միության, այդ թվում նաև ԼՂԻՄ-ի աշխատավորները ոչինչ չէին խնայում հայրենիքի պաշտպանության համար: Նրանք ֆոնդին նվիրում էին իրենց քրտինքով վաստակած դրամը, զարդերը, պետական փոխառության պարտատոմսերը և այլն: Գյուղի աշխատավորները պաշտպանության ֆոնդին էին տրամադրում նաև գյուղատնտեսական բազմապիսի մթերքներ: Ի նպաստ պաշտպանության ֆոնդի, մարզի բոլոր շրջաններում տեղի ունեցան բազմաթիվ միտինգներ, որտեղ կատարվում էին դրամահավաքներ, թանկարժեք զարդերի և իրերի, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների հավաք Կարմիր բանակի համար: Օրինակ, Ստեփանակերտի շրջանի Սղնախ գյուղում 1941 թ. օգոստոսի 11-ին տեղի ունեցած միտինգում կոլտնտեսուհի Ա. Մուսայելյանը հայտարարեց, «Այն բոլոր զարդերը ինչ ունենք, պետք է տանք պաշտպանության ֆոնդին: Դա մեր ազատության, մեր երկրի պաշտպանության ամրապնդման երաշխիքն է: Մեր քաջարի մարտիկները հանուն հայրենիքի մարտնչում են ռազմաճակատում: Մենք, թիկունքի աշխատողներս, ոչինչ չպետք է խնայենք հանուն մեր հայրենիքի պաշտպանության: Ես առաջարկում եմ մեր վաստակած յուրաքանչյուր աշխօրի եկամտի երկու տոկոսը հատկացնել պաշտպանության ֆոնդին»[24]: Միտինգի մասնակիցները միահամուռ պաշտպանեցին այդ առաջարկությունը:

Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Նոր կյանք» կոլտնտեսության կոլտնտեսականները օգոստոսի 10-ին տեղի ունեցած ժողովի ընթացքում երկրի պաշտպանության ֆոնդին հատկացրին 250 կգ յուղ, 1 տոննա պանիր, 5 տոննա բանջարեղեն և շատ այլ մթերքներ[25]:

Ստեփանակերտի շրջանի Նորագյուղի «Նոր ուղի» կոլտնտեսության կոլտնտեսականները մի շարք գյուղատնտեսական

---

[24] «Սովետական Ղարաբաղ», 13 օգոստոսի 1941:
[25] Նույն տեղում:

մթերքների հետ միասին, պաշտպանության ֆոնդին հանձնեցին 2.4 կգ արծաթ[26]:

Կամավոր նվիրատվությունների հոսքը օրեցօր գնալով ուժեղանում էր: Ամեն օր մարզային ռադիոն և «Սովետական Ղարաբաղ» թերթը հաղորդում էին նոր լուրեր խոշոր նվիրատվությունների մասին: Քաղաքների և գյուղերի բնակիչները պաշտպանության ֆոնդին էին տալիս իրենց անձնական զարդերը՝ մատանիներ, ականջօղեր, ապարանջաններ, շղթաներ, ժամացույցներ, մանյակներ և այլն: Դա հարկադրական զոհաբերություն չէր, այլ հայրենիքին նվիրվածության և սիրո արտահայտության ձևերից մեկը:

Միայն պատերազմի առաջին տարում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությունը երկրի պաշտպանության ֆոնդին հանձնեցին՝ 1.172 կգ ոսկի, 483.025 կգ արծաթ, 1410761 ռուբլի, 1580000 ռուբլու պետական փոխառության պարտատոմս, ինչպես նաև 668 ցենտներ միս, 22 ցենտներ յուղ, 39 տոննա ցորեն, 13 տոննա կարտոֆիլ և բազմաթիվ այլ գյուղատնտեսական մթերքներ[27]:

Իր անձնական զարդեղենը պաշտպանության ֆոնդին նվիրաբերելով, Ստեփանակերտի Մաքսիմ Գորկու անվան պետական թատրոնի դերասանուհի, հանրապետության ժողովրդական արտիստ Թամարա Մելքումյանը ասաց. «Ինձ համար Հայրենիքից թանկ ոչինչ չկա, այսօր ես պաշտպանության ֆոնդ եմ հանձնում իմ ոսկե և արծաթե զարդերը: Իսկ թե վաղը հարկ լինի, ես հայրենիքիս պաշտպանության համար կյանքս չեմ խնայի»[28]:

Մարտունու շրջանի Գյունե-Կալեր գյուղի կոլտնտեսուհի Նանագյուլ Գրիգորյանը, որի 5 տղաները մարտնչում էին ռազմաճակատում, պաշտպանության ֆոնդին տալով 600 գրամ արծաթ, ասաց. «Թող մեր նվիրած զարդերը վերածվեն հրանոթների արկերի և թափվեն իմ հայրենիքի թշնամիների գլխին»[29]: Նույն գյուղի բնա-

---

[26] Նույն տեղում:
[27] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 48.
[28] «Սովետական Ղարաբաղ», 6 նոյեմբերի 1941:
[29] Նույն տեղում:

կիչ Ե. Սարգսյանը ֆոնդին նվիրեց 500 գրամ արծաթ, 450 ռուբլի, մեկ ոչխար և երկու կոմպլեկտ սպիտակեղեն[30]:

Միայն մեկ օրվա ընթացքում Մարտունու շրջանի Գյունե-Կալեր գյուղի բնակիչները երկրի պաշտպանության ֆոնդին նվիրաբերեցին՝ 25 գրամ ոսկի, 26.8 կգ արծաթ, մի քանի հազար ռուբլի և զանազան գյուղմթերքներ[31]:

Մարտունու շրջանի ուսուցիչները շրջանային խորհրդակցության ժամանակ որոշեցին՝ մինչև պատերազմի ավարտը ամեն ամիս պաշտպանության ֆոնդին տալ իրենց երկու օրվա աշխատավարձը: Այդ խորհրդակցության ժամանակ նրանք հավաքեցին 8060 ռուբլի առձեռն և 32200 ռուբլու պետական փոխառության պարտատոմսեր: Հադրութի շրջանի 5 բազմազավակ մայրեր հայտարարեցին, որ մինչև պատերազմի ավարտը պաշտպանության ֆոնդին են նվիրում պետության կողմից իրենց տրվող բազմազավակության նպաստները[32]:

1941 թ. վերջերին երկրի գյուղի աշխատավորների պահանջով ստեղծվեց նաև Կարմիր բանակի հացի ֆոնդ: ԼՂԻՄ-ի մարզկոմի բյուրոն օգոստոսի 25-ին որոշում ընդունեց՝ Կարմիր բանակի հացի ֆոնդին նաև և գյուղատնտեսական այլ մթերքներ հանձնելու կարգի վերաբերյալ: Մարզում այդ գործը հատկապես ուժեղացավ 1942 թ., որի հետևանքով Կարմիր բանակի հացի ֆոնդին հանձնվեց 200000 փութ ցորեն[33]: Մարզի աշխատավորությունը քաջ գիտակցում էր, որ այդ զոհողությունը գնում է ռազմաճակատում նենգ թշնամու դեմ հերոսաբար մարտնչող իր որդիների, հայրերի, ամուսինների և եղբայրների սնման նպատակով: Հարկ է նշել, որ մինչև պատերազմի հաղթական ավարտը այդ գործընթացը շարունակվեց հաջողությամբ:

Հացի ֆոնդի հետ միասին ստեղծվեց նաև Կարմիր բանակի մսի ֆոնդ: Այդ գործընթացը նույնպես հաջողությամբ շարունակ-

---

[30] Նույն տեղում:
[31] «Սովետական Ղարաբաղ», 13 նոյեմբերի 1941:
[32] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 52-54.
[33] Նույն տեղում:

վեց մարզում: Օրինակ, միայն 1942 թ. ԼՂԻՄ-ի կոլտնտեսականները Կարմիր բանակի մսի ֆոնդին հանձնեցին 2467 ցենտներ միս[34]:

Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսականները լայնորեն արձագանքեցին նաև Կրասնոդարի երկրամասի Վեսելովսկու շրջանի Կրուպսկայայի անվան կոլտնտեսության աշխատավորների՝ երկրում պաշտպանական հեկտարներ ստեղծելու կոչին: Մարտունու շրջանի կոլտնտեսականները, բացի հիմնական, պլանով նախատեսված ցանքատարածքներից, պաշտպանության ֆոնդի համար ցանեցին 125 հեկտար, իսկ Մարտակերտի շրջանի կոլտնտեսականները՝ 160 հեկտար[35]: Մարզի գյուղի աշխատավորները մեծ սիրով խնամեցին այդ ցանքսերը և առանց կորոատների ժամանակին հավաքեցին բերքն ու հանձնեցին երկրի պաշտպանության ֆոնդին:

Ընդհանուր առմամբ, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատավորները երկրի պաշտպանության ֆոնդ են մուծել ավելի քան 42 միլիոն ռուբլի, ավելի քան 6 կգ ոսկի, 600 կգ արծաթ և մեծ քանակությամբ արժեքավոր իրեր: Ռազմաճակատ է ուղարկվել 22000 ծանրոց, 72 հազար հատ տաք հագուստ և այլն[36]:

* * *

Հայրենական մեծ պատերազմի առաջին տարվա ամռան վերջերին և աշնան սկզբներին, ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում, սկսվեց Կարմիր բանակի մարտիկների համար տաք հագուստի հավաքման կամպանիա: 1941 թ. օգոստոսի 25-ին ԼՂԻՄ-ի մարզկոմը այդ առթիվ հատուկ որոշում ընդունեց, որով հանձնարարվում էր շրջանային կոմիտեներին անհապաղ սկսել այդ հայրենանվեր աշխատանքը: Այդ որոշումով Ղարաբաղի արհեստագործական միության բոլոր արտելների առջև խնդիր դրվեց ներգրավվել կարմիրբանակայինների համար տաք հագուստ և սպիտակեղեն կարելու գործի մեջ և դրա համար

---

[34] Նույն տեղում:
[35] "Бакинский рабочий", 7, 15 мая 1942
[36] «Սովետական Ղարաբաղ», 8 մայիսի 1985:

հատկացվեց անհրաժեշտ հումք[37]: Շրջաններում ստեղծվեցին տաք հագուստի հավաքման հանձնաժողովներ, որոնք ղեկավարում էին այդ գործը: Հագուստի հավաքման գործը հատկապես լայն արձագանք գտավ մարզի կանանց շրջանում, որոնք եռանդում գործի կպան: Այսպես, օրինակ, Ստեփանակերտի տնային տնտեսուհիների միտինգում որոշում ընդունվեց հայրենասիրական մեծ նշանակություն ունեցող այդ գործի մեջ ընդգրկել մարզի բոլոր կանանց: Որոշման մեջ ասված էր. «Մենք, Ստեփանակերտ քաղաքի կանայք, պետք է անմիջապես ակտիվ մասնակցություն ցուցաբերենք Կարմիր բանակի մարտիկների համար տաք հագուստի և սպիտակեղենի հավաքման գործում: Մենք պարտավորվում ենք, կարել, հավաքել և հայրենիքի հերոս պաշտպաններին ուղարկել՝ տաք գուլպաներ, ձեռնոցներ, բամբակաբաճկոններ, ֆուֆայկաներ: Չենք կասկածում, որ մարզի բոլոր կանայք կհետևեն մեր օրինակին»[38]: Մինչ 1941 թ. նոյեմբերի 26-ը մարզում հավաքվեց և գործող բանակ ուղարկվեց 40314 կտոր տաք հագուստ, 6000 զույգ սպիտակեղեն, ինչպես նաև կարի արհեստանոցներին հանձնվեց 10 տոննա բուրդ[39]: Տաք հագուստի հավաքման աշխատանքները շարունակվեցին նաև 1942 թվականին: Մինչև 1941 թ. կեսերը ամբողջ մարզում հավաքվեց և գործող բանակ ուղարկվեց 72000 կտոր տաք հագուստ, այդ թվում ոչխարի մորթուց կարված 4722 մուշտակ, 854 կիսամուշտակ, 764 զույգ բրդյա թաթմաններ, 3191 զույգ ձեռնոց, 12520 զույգ տաք սպիտակեղեն, պետությանն է հանձնվել 15 տոննա բուրդ[40]: Մարզի աշխատավորուհիները կոլտնտեսային դաշտերում և բանվորական հաստոցների մոտ լարված աշխատանքային ժամերից հետո, գիշերները երկար ժամանակ նստում էին տանը և նավթի լամպի կամ ճրագի լույսի տակ բանակում կռվող մարտիկների համար գործում՝ բրդյա գուլպաներ, ձեռնոցներ, ֆուֆայկաներ, կարում սպիտակեղեն և այլն: Ստեփանակերտի շրջանի Բալուջա գյուղի 26 կոմիսարների անվան կոլտնտեսությունում տեղի ունեցած միտինգում, որին

---

[37] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 52, л. 181.
[38] «Սովետական Ղարաբաղ», 31 օգոստոսի 1941:
[39] РГАСПИ, ф. 17, оп. 43, д. 30, л. 18.
[40] Նույն տեղում:

մասնակցում էին ճակատայինների 90 մայրեր ու կանայք, որոշում ընդունեցին ակտիվորեն մասնակցել կարմիրբանակայինների համար տաք հագուստ հավաքելու կամպանիային: Որոշման մեջ նշված է. «Մեր սիրելի որդիները գտնվում են ռազմաճակատում: Ուղարկելով ռազմաճակատ, մենք նրանց պատվիրեցինք հայրենիքի պաշտպանության համար ջխնայել իրենց կյանքը: Ռազմաճակատ ուղարկած մեր նամակներում մշտապես նրանց ոգեշնչում ենք կատարել նորանոր սխրանքներ: Այսօր մենք պարտավորվում ենք ակտիվ մասնակցություն ունենալ ռազմաճակատում մարտնչող մեր սիրելի որդիների համար տաք հագուստի հավաքման գործին, որ նրանց հագցնենք բրդյա գուլպաներ, ձեռնոցներ, որպեսզի նրանք չմրսեն»[41]:

Ռազմաճակատում կռվող մարտիկների համար տաք հագուստի հավաքման և ուղարկման գործը մշտապես գտնվել է մարզի կուսակցական և պետական մարմինների ուշադրության տեսադաշտում: Շնորհիվ ձեռնարկված միջոցառումների, այդ հայրենասիրական գործընթացի մեջ ներգրավվեց մարզի ողջ բնակչությունը: Հատուկ ուշադրություն էր դարձվում հավաքված հագուստի պահեստավորման և ուղարկման գործին: Տաք հագուստի ծանրոցների մեջ մարզի աշխատավորները հաճախակի նամակներ էին թողնում զինվորներին ուղղված: Այսպես, օրինակ, Մարտունի գյուղի Մյասնիկյանի անվան կոլտնտեսության կոլտնտեստիները իրենց նամակում գրել էին, «Ռազմաճակատում ձեր կատարած յուրաքանչյուր սխրանքին մենք պատասխանում ենք թիկունքում ձեռք բերած մեր հաջողություններով: Մենք ձեզ հետ միասին ապրում ենք մեկ կյանքով, մեկ մտքով: Այսօր մենք ձեզ ենք ուղարկում այս համեստ նվերը: Մենք շրջապատել ենք ձեզ մայրական հոգատարությամբ: Մենք ձեզ տաք կհագցնենք, որպեսզի դուք չմրսեք: Մենք ուղարկում ենք ձեզ այն ամենը, ինչ պետք է ձեզ, իսկ դուք համարձակ խփեք նենգ ֆաշիստներին, որպեսզի նրանց շուտ քշեք մեր սրբազան հողից: Այս նվերների հետ մենք ձեզ ենք ուղարկում մեր սրտերը, մեր սե-

[41] «Սովետական Ղարաբաղ», 14 սեպտեմբերի 1941:

ը»[42]: Հայրենասիրական այդպիսի պոռթկում էր ապրում մարզի ամբողջ բնակչությունը:

* * *

Լեռնային Ղարաբաղի աշխատավորության հայրենասիրությունը դրսևորվեց նաև պատերազմում զոհված զինվորների ընտանիքներին, պատերազմի հաշմանդամներին, ճակատայինների երեխաներին ցուցաբերած հոգատարության դրսևորումով: Միայն Շուշիում ստեղծվեց 3 մանկատուն: Նրանց աշխատանքները գտնվում էին կուսակցական և տեղական խորհրդային իշխանությունների ամենօրյա տեսադաշտում: Ուսումնական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացը և դրանց անհրաժեշտ միջոցներով ապահովելը հանդիսանում էր մարզի համապատասխան մարմինների առաջնահերթ խնդիրներից մեկը և այդ հարցը հաճախակի քննարկվում էր մարզբյուրոյի նիստերում: Այսպես, օրինակ, քննարկելով Շուշի քաղաքի թիվ 2 և թիվ 3 մանկատներում տիրող իրավիճակը, մարզկոմի բյուրոն նկատելով, որ շենքային պայմանները բավականաչափ սուղ են, հանձնարարեց քաղաքի գործկոմին գտնել նոր շենքեր, միջոցներ հայթայթել դրանց վերանորոգման և կահույքի ձեռք բերման համար, որպեսզի բարելավվեն երեխաների կենցաղային պայմանները: Կարճ ժամանակաընթացքում Շուշի քաղաքի գործկոմը իրականացրեց մարզկոմի բյուրոյի որոշումը[43]:

«Սովետական Ղարաբաղ» թերթի տվյալներով 1944 թ. մարզի մանկական հիմնարկներում տեղավորված էին ճակատայինների 5549 երեխա: Նրանց ընտանիքներին օգնության կարգով 1944 թ. բաժանվել է՝ 95921 ռուբլի, 189370 կգ գյուղատնտեսական մթերք, 16375 խորանարդ մետր վառելափայտ, 13491 կտոր հագուստ, 7392 զույգ կոշիկ: Ճակատայինների ընտանիքների համար կառուցվել է 92 նոր բնակարան, վերանորոգվել 1538-ը, 140 ընտա-

---

[42] «Սովետական Ղարաբաղ», 17 սեպտեմբերի 1941:
[43] РГАСПИ, ф. 17, оп. 43, д. 30, лл. 111-112.

նիք ձեռք է բերել անասուններ, որոնց համար հատկացվել է 11519 ցենտներ կեր[44]:

Հադրութի շրջանի կուսակցության շրջկոմի քարտուղար Համբարձումյանին, շրջգործկոմի նախագահ Զախարովին, պետական ապահովագրության բաժնի վարիչ Կաֆյանին ուղարկած Ի. Վ. Ստալինի հեռագրից իմանում ենք, որ 1944 թ. սեպտեմբերի դրությամբ շրջանի աշխատավորները ճակատայինների ընտանիքների օգնության համար հավաքել են 505000 ռուբլի, 27000 փութ հացահատիկ և գյուղատնտեսական այլ մթերքներ, որի համար Ի. Վ. Ստալինը հայտնում է իր ողջույնն ու շնորհակալությունը[45]: Նույն աղբյուրից իմանում ենք, որ 1944 թ. հոկտեմբերի 6-ի դրությամբ Ստեփանակերտի աշխատավորները ճակատայինների օգնության ֆոնդ են մուծել 400000 ռուբլի[46], Մարտակերտի շրջանի աշխատավորները՝ 454000 ռուբլի[47], Մարտունու շրջանի կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները՝ 350000 ռուբլի և 2260 փութ հացահատիկ[48]:

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությունը սրտացավ օգնություն էր ցույց տալիս նաև գերմանաֆաշիստական զորքերի կողմից Խորհրդային Միության ժամանակավորապես զավթված շրջաններից Ղարաբաղ էվակուացված բնակիչներին: Միայն 1941 թ. ամռան-աշնան ամիսներին ԼՂԻՄ-ը ընդունեց 1000 էվակուացվածների, որոնք բաշխվեցին հետևյալ կերպ. Մարտակերտի շրջան՝ 500 մարդ, որոնցից 350-ը տեղավորեցին Կաուչուկի սովխոզներում, 150-ը՝ կոլտնտեսություններում. Մարտունու շրջան՝ 250 մարդ, որոնցից 100 մարդ Ղարգինտրեստի սովխոզներում, իսկ 150-ը՝ կոլտնտեսություններում. Ստեփանակերտի շրջան՝ 250 մարդ: 1942 թ. մարզն ընդունեց ևս 1000 էվակուացվածների[49]: Էվակուացվածների տեղաբաշխման, բնակարանով ապահովման, աշխատանքի տեղավորման հարցերով զբաղվում էին շրջաններում ստեղծված հատուկ հանձնաժողովները, որոնք ղեկավարվում էին

---

[44] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[45] «Սովետական Ղարաբաղ», 27 սեպտեմբերի 1944:
[46] «Սովետական Ղարաբաղ», 6 հոկտեմբերի 1944:
[47] «Սովետական Ղարաբաղ», 4 նոյեմբերի 1944:
[48] «Սովետական Ղարաբաղ», 16 դեկտեմբերի 1945:
[49] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 53, л. 62.

շրջանային կուսակցական կազմակերպությունների 1-ին քարտուղարների կողմից: Հանձնաժողովները հետևում էին, որ էվակուացվածների ընտանիքները, որոնք ունեին մանկահասակ և դպրոցական տարիքի երեխաներ, ընդգրկվեն մանկամսուր-մանկապարտեզներում, դպրոցներում, իսկ ամռան ամիսներին նրանք հանգստանային պիոներական ճամբարներում[50]:

* * *

Կովկասի ճակատամարտում (25 հուլիսի 1942 թ. – 9 հոկտեմբերի 1943 թ.) Կարմիր բանակի տարած հաղթանակից անմիջապես հետո, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատավորները, Անդրկովկասյան հանրապետությունների օրինակով, օգնության ձեռք մեկնեցին գերմանաֆաշիստական զավթիչների լծից ազատագրված Ստավրոպոլի երկրամասի բնակիչներին: Միայն մարզի աշխատավորները 1943 թ. աշնանը Ստավրոպոլի երկրամաս ուղարկեցին 15755 ցենտներ սերմացու ցորեն, 500 գլուխ անասուն, 3428 ցենտներ միս և զանազան այլ գյուղմթերքներ[51]: Մարզում ստեղծվեցին հանձնաժողովներ ազատագրված շրջանների կոլտնտեսությունների ու սովխոզների համար սերմացու և անհրաժեշտ այլ սարքավորումներ, ու իրեր հավաքելու նպատակով: Մարզի յուրաքանչյուր կոլտնտեսություն առանձնացնում էր սերմացու, անասուններ, անասնակեր, յուրաքանչյուր մշակութային հիմնարկ առանձնացնում էր համապատասխան կահավորանք, բոլորը ձգտում էին օգնել իրենց եղբայրներին՝ շուտափույթ վերականգնելու գերմանաֆաշիստական զավթիչների կողմից ավերված ժողովրդական տնտեսությունը: Դրա հետ մեկտեղ ազատագրված շրջաններ էին ուղարկվում գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ՝ նոր վերակառուցված մեքենատրակտորային կայանների համար: Միայն Ստեփանակերտի շրջանում մի քանի օրվա ընթացքում Ստավրոպոլի երկրամասի ազատագրված շրջանների համար հավաքեց 86000 ռուբլի, 27 տոննա ցորեն, 75 գլուխ անասուն: Հավաքումը ընթանում էր նաև մարզի մնացած շրջաններում: Մարզում նույնիսկ այդ նպա-

---

[50] Նույն տեղում, թթ. 63-64:
[51] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 49.

տակով ցանվեցին հատուկ հեկտարներ, որոնցից ստացված բերքը ուղարկվում էր Ստավրոպոլի երկրամաս[52]:

* * *

Պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ի աշխատավորության ուշադրության կենտրոնում է եղել նաև վիրավոր մարտիկների հոգածության խնդիրը: 1942 թ. Ստեփանակերտում և Շուշիում բացվեցին զինվորական 3 էվակոհոսպիտալներ, որոնք սարքավորվեցին տեղում և համալրվեցին տեղական բժշկական կադրերով: Այնտեղ աշխատանքի անցան մարզի լավագույն բժիշկներն ու բժշկասանիտարական կադրերը: Մարզի բնակչությունը վիրավոր զինվորներին շրջապատեցին հատուկ հոգատարությամբ և անում էին ամեն ինչ, նրանց ամեն տեսակ անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար: Այսպես, օրինակ, Ստեփանակերտ քաղաքի հասարակությունը և հարևան գյուղերի ու քաղաքների բնակիչները սերտ կապեր էին պաշտպանում հոսպիտալների հետ, այցելում վիրավոր մարտիկներին, նրանց բերում զանազան նվերներ: Ստեփանակերտի պետական թատրոնի դերասանները, քաղաքի դպրոցականներն ու ուսանողները, պարբերաբար մասնակցում էին վիրավոր մարտիկների կուլտուրական սպասարկման աշխատանքներին, հաճախակի հոսպիտալներում հանդես գալիս համերգներով: Մարզկոմի բյուրոն բազմիցս իր նիստերում լսում էր էվակոհոսպիտալների աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր, կյանքում իրականացնում այդ աշխատանքները էլ ավելի լավ հիմքերի վրա դնելու միջոցառումներ: Այսպես, օրինակ, կուսակցության մարզկոմի կողմից Ստեփանակերտ քաղաքում տեղաբաշխված թիվ 1493 և թիվ 2472 էվակոհոսպիտալներում կատարած ստուգումները ցույց տվեցին, որ այնտեղ բուժսպասարկման գործը դրված է լավ հիմքերի վրա, վիրավոր և հիվանդ զինվորների մեծ մասը վերադառնում է ռազմաճակատ, որ 1944 թ. ընթացքում մահացության ոչ մի դեպք չի գրանցվել: Դրա հետ մեկտեղ պարզվեցին հակասանիտարական բնույթի մի շարք փաստեր, պետական միջոցների հափշտակման դեպքեր,

---

[52] Նույն տեղում:

որոնց մեղավորները ստացան իրենց արժանի պատիժները: ԼՂԻՄ կուսակցական մարզային բյուրոն պահանջեց Ստեփանակերտի և Շուշիի կուսակցական շրջկոմներից ուժեղացնել քաղմասսայական աշխատանքները ինչպես հոսպիտալների անձնակազմերի, այնպես էլ վիրավոր և հիվանդ զինվորների շրջանում: Միաժամանակ որոշվեց շեֆական կապեր հաստատել արդյունաբերական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, բուհերի, դպրոցների, մշակութային հաստատությունների աշխատողների և հոսպիտալներում բուժվող մարտիկների միջև[53]: Շեֆ կազմակերպությունները էվակոհոսպիտալներին ապահովում էին՝ վառելափայտով, սննդամթերքով, զանազան սպասքեղենով և այլն: Միայն 1944 թ. Ստեփանակերտի շրջանի զանազան կազմակերպություններ 881 խորանարդ մետր վառելափայտ հատկացրին քաղաքում տեղաբաշխված երկու էվակոհոսպիտալներին: Էվակոհոսպիտալների կենցաղային պայմանները բարելավելու գործը մշտապես գտնվում էր քաղաքի կոմունալ ծառայությունների ուշադրության կենտրոնում, որոնք այդ աշխատանքները կատարում էին շեֆական կարգով: Կոմերիտականների ու պիոներների ուժերով էվակոհոսպիտալները ապահովվեցին գեղարվեստական և քաղաքական գրականությամբ: Քաղաքի մշակույթի բնագավառի աշխատողները պարբերաբար վիրավոր զինվորների համար կազմակերպում էին կինոնկարների ցուցադրումներ, համերգներ, դասախոսություններ և այլն: Նրանց ջանքերով հոսպիտալների տարածքներում բացվեցին թերթերի կրպակներ, հիվանդասենյակներում տեղադրվեցին ռադիոսարքեր[54]:

* * *

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ ԼՂԻՄ-ում, ծայր առավ հայրենասիրական մի հզոր շարժում, որի նպատակը Կարմիր բանակի համար տանկային շարասյուներ ու ավիաէսկադրիլիաներ կառուցելու համար նվիրատվություններ հավաքելն էր: Մարզի բոլոր կոլտնտեսություններում, սովխոզներում, մեքենատրակտորային

---

[53] РГАСПИ, ф. 17, оп. 45, д. 18, л. 10.
[54] Նույն տեղում, թ. 11:

կայաններում և արդյունաբերական ձեռնարկություններում միահամուռ որոշումներ ընդունեցին այդ հայրենասիրական գործը իրականացնելու համար: Մարզում առաջիններից մեկը նման որոշում ընդունեցին Ստեփանակերտի շրջանի Խանաբադ և Կարաբուլախ գյուղերի կոլտնտեսականները[55]: Այդպիսի որոշումներ ընդունվեցին նաև մարզի մնացած կոլտնտեսություններում: Դա ցույց էր տալիս գյուղի աշխատավորության բարձր գիտակցությունը և ամուր վճռականությունը՝ հայրենիքին օգնել հաղթահարելու պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունները: 1942 թ. դեկտեմբերի 15-ին ԼՂԻՄ-ի մարզային բյուրոն որոշում կայացրեց՝ Կարմիր բանակի համար տանկային շարասյուն կառուցելու մասին: Դրանից հետո ամբողջ մարզով մեկ սկսվեց դրամական միջոցների հավաքման գործընթացը: Թերթերում հայտնվեցին ամենօրյա հաղորդագրություններ հայրենիքի պաշտպանության ֆոնդին մուծումներ կատարելու վերաբերյալ: Այսպես, օրինակ, Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի Լենինի անվան կոլտնտեսության նախագահ Խաչատուր Պետրոսյանը 1942 թ. դեկտեմբերի 19-ին մարզում առաջինը տանկային շարասյան կառուցման ֆոնդի հաշվին մուծեց 50000 ռուբլի[56]: Նրա օրինակին հետևեցին շատերը: Այսպես, օրինակ, 1942 թ. դեկտեմբերի 22-ին Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղի կոլտնտեսության նախագահ Մամիկոն Միրզոյանը ֆոնդի հաշվին մուծեց 51000 ռուբլի[57]: Նույն թվի դեկտեմբերի 24-ին Մարտակերտ գյուղի կոլտնտեսության նախագահ Կարապետ Պետրոսյանը մուծեց 50000 ռուբլի[58]: Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Նոր կյանք» կոլտնտեսության նախագահ Գարեգին Նարիմանյանը ֆոնդի հաշվին մուծեց 113000 ռուբլի[59]: Մարտունու շրջանի Գիշի գյուղի Կարլ Մարքսի անվան կոլտնտեսության նախագահ Ներսես Դադայանը և նրա կինը՝ Անուշ Դադայանը տանկային շարասյան ֆոնդին նվիրաբերեցին 100000 ռուբլի[60]:

---

[55] «Սովետական Ղարաբաղ», 11 նոյեմբերի 1942:
[56] "Правда", 23 декабря 1942.
[57] «Սովետական Ղարաբաղ», 24 դեկտեմբերի 1942:
[58] «Սովետական Ղարաբաղ», 28 դեկտեմբերի 1942:
[59] «Սովետական Ղարաբաղ», 1 հունվարի 1943:
[60] «Սովետական Ղարաբաղ», 27 դեկտեմբերի 1942:

Հետաքրքիր է, որ ԼՂԻՄ-ի աշխատավորները ակտիվ մասնակցություն են ունեցել նաև բանակի գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյան և Խորհրդային Միության կրկնակի հերոս, լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանի անվան ավիաէսկադրիլիայի կառուցման համար հանգանակություններ անելու գործընթացին: Այսպես, օրիակ, «Սովետական Ղարաբաղ» թերթի 1944 թ. դեկտեմբերի 4-ի համարում տպագրված հեռագրում, որը Ի. Վ. Ստալինը ուղարկել էր Շուշիի շրջանի մանկավարժական տեխնիկումի տնօրեն Խաչատրյանին, կուսակցական կազմակերպության քարտուղար Աղաբեկյանին և կոմերիտական կազմակերպության քարտուղար Շինականյանին, ասվում էր. «Խնդրում եմ հաղորդեք իմ եղբայրական ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը Շուշվա մանկավարժական տեխնիկումի ուսանողությանն ու ուսուցչական կոլեկտիվին, որոնք իրենց անձնական միջոցներից հավաքել և մուծել են 32375 ռուբլի՝ բանակի գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյուն կառուցելու համար»[61]:

1944 թ. դեկտեմբերի 7-ին Ի. Վ. Ստալինը շնորհակալական նամակ ուղարկեց Մարտունու շրջանի Քերթ գյուղի «Կարմիր հեղափոխություն» կոլտնտեսության նախագահ Բարսեղ Միրզայի Աբրահամյանին, որն իր անձնական միջոցներից 102000ռ. էր մուծել Կարմիր բանակի համար տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին: Հեռագրում ասված էր. «Թանկագին Բարսեղ Միրզայի, ընդունեք իմ ողջույններն ու շնորհակալություն Կարմիր բանակի տանկային շարասյուն կառուցելու նպատակով Ձեր կողմից մուծումներ կատարելու համար»:

1945 թ. մայիսի սկզբներին Ի. Վ. Ստալինը շնորհակալական նամակ էր ուղարկել Ստեփանակերտի Խաչմաչ գյուղի Կրուպսկայայի անվան կոլտնտեսության նախագահ Հայրապետյանին, գյուղական խորհրդի նախագահ Հայրապետյանին և սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղար Պետրոսյանին այն բանի համար, որ գյուղի կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի

---

[61] «Սովետական Ղարաբաղ», 4 դեկտեմբերի 1944:

անվան մարտական ավիաէսկադրիլիայի կառուցման համար հավաքել են 50000 ռուբլի և 54000 ռուբլու պետական փոխառության պարտատոմսեր[62]:

Մինչ այդ, 1943 թ. հունվարի սկզբներին ԼԿԵՄ Ղարաբաղի մարզկոմի քարտուղար Ռուբեն Թևոսի Շահրամանյանը Ի. Վ. Ստալինին ուղարկած հեռագրում նշում է, որ մարզի կոմերիտականները հավաքել ու «Երիտասարդություն» և «Պատանի պիոներ» տանկային շարասյան ու մարտական ինքնաթիռների էսկադրիլիա կառուցելու ֆոնդի հաշվին են մուծել 1526000 ռուբլի: Պատասխան հեռագրում Ի. Վ. Ստալինը շնորհակալություն է հայտնում մարզի պիոներներին ու կոմերիտականներին՝ հայրենավեր գործի համար[63]:

Լեռնային Ղարաբաղի գյուղի աշխատավորները ակտիվորեն նվիրատվություններ կատարեցին նաև «Ադրբեջանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման համար: Մինչև 1942 թ. դեկտեմբեր նրանք հավաքեցին ու ֆոնդի հաշվին մուծեցին 13856100 ռուբլի[64]: Նույն ժամանակաշրջանում ԼՂԻՄ-ի պատանի հայրենասերները հավաքեցին 1526000 ռուբլի և այն մուծեցին «Երիտասարդություն» տանկային շարասյան և «Պատանի պիոներ» ավիաէսկադրիլիա կառուցելու ֆոնդերի հաշվին[65]:

Մարտունու շրջանի մեքենատրակտորային կայանի կոմերիտական-տրակտորիստ Սերգեյ Անդրեյի Սարգսյանը իր խնայողություններից 100000 ռուբլի մուծելով «Անդրբեջանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման ֆոնդին ասաց. «Ես կոմերիտական եմ, իմ ծնողները նախկիում աղքատ էին: Խորհրդային իշխանությունը և կոլտնտեսային կարգը մեր ընտանիքի անդամներին դարձրեցին գրագետ և ունևոր: Հիտլերական ավազակները ցանկանում են խլել մեր երջանկությունը, վերացնել մեր կոլտնտեսությունները և մեզ դարձնել գերմանական բարոնների ստրուկները: Իմ երկու ավագ եղբայրները գտնվում են ռազմաճակատում, նրանցից մեկը՝ Երվանդը, զոհվեց հերոսի մահով, պաշտպանելով մեր հայրենի-

---

[62] «Սովետական Ղարաբաղ», 15 մայիսի 1945:
[63] «Սովետական Ղարաբաղ», 30 հունվարի 1943:
[64] "Правда", 29 декабря 1942.
[65] "Бакинский рабочий", 29 января 1943.

քը, մյուսը՝ Աշոտը, այսօր էլ մարտնչում է ֆաշիստական զավթիչների դեմ: Ես ատում եմ ֆաշիստ մարդակերներին, չեմ կարող անտարբեր լսել նրանց կատարած գազանությունների մասին, որոնք իրագործում են մեր երկրի ժամանակավորապես զավթված տարածքներում: Իմ անձնական խնայողություններից ես պետական բանկ եմ մուծել 100000 ռուբլի՝ «Ադրբեջանի կոլտնտեսական» տանկային շարասյուն կառուցելու համար: Ես կցանկանայի իմ աշխատանքային խնայողությունների հաշվին կառուցած տանկով եղբորս՝ Աշոտի հետ միասին վրեժ լուծել ֆաշիստներից հանուն հայրենիքի, հանուն մեր ժողովրդի, իմ զոհված եղբայր Երվանդի համար»[66]:

Տանկային շարասյուն կառուցելու համար դրամական զգալի միջոցներ հավաքեցին նաև մարզի պիոներները: Մարտունու շրջանի Շեխեր գյուղի Կիրովի անվան կոլտնտեսության դպրոցի պիոներ Անուշ Ղուլյանը ֆոնդի հաշվին մուծեց 10000 ռուբլի, Հադրութի միջնակարգ դպրոցի աշակերտ Էդիկ Բաղդասարյանը՝ 8000 ռուբլի, Ստեփանակերտի շրջանի Մեհտիշեն գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության դպրոցի պիոներ Զաբելլա Ղամբարյանը՝ 20000 ռուբլի և այլն[67]:

Դրամական միջոցների հավաքման հետ մեկտեղ մարզի կոլտնտեսականները մեծ պատասխանատվությամբ պետությանը հանձնեցին նաև ցորենի պաշարների ավելցուկներից: Միայն 1943 թ. նրանք պետությանը հանձնեցին 150365 փութ ցորեն[68]:

Մարզի բնակչությունը երկրի պաշտպանության համար նվիրեց նաև միջոցներ, որոնք ստացվել էին դրամահիրային վիճակահանության տոմսերի իրացման հետևանքով: Այսպես, օրինակ, 1942 թ. դրամահիրային վիճակախաղի առաջին խաղարկության ժամանակ մարզի աշխատավորները իրենց աշխատավարձի 15-20 տոկոսը նվիրաբերեցին վիճակախաղի տոմսերի ձեռքբերմանը: Միայն Ստեփանակերտ քաղաքում մեկ օրում իրացվեց 338000 ռուբլու, իսկ ամբողջ շրջանում՝ 150000 ռուբլու վիճակախաղի տոմս: Մարզի

---

[66] «Կոմունիստ», 17 փետրվարի 1943:
[67] «Սովետական Ղարաբաղ», 27 դեկտեմբերի 1942:
[68] РГАСПИ, ф. 17, оп. 22, д. 44, л. 48.

աշխատավորությունը ակտիվորեն մասնակցեց նաև 1943 թ. տեղի ունեցած դրամահրային վիճակախաղի երկրորդ խաղարկությանը՝ ձեռք բերելով 5507000 ռուբլու վիճակախաղի տոմսեր: Արդեն 1944 թ. երրորդ խաղարկության ժամանակ մարզում իրացվեց 8440000 ռուբլու տոմս[69]:

Մարզում մեծ վերելքով ընթացավ նաև ռազմական փոխառությունների բաժանորդագրման գործընթացը: 1942 թ. ապրիլի սկզբներին մարզի աշխատավորները պլանով նախատեսված 9652000 ռուբլի արժողության ռազմական փոխառության պարտատոմսեր բաժանորդագրման փոխարեն, ձեռք բերեցին 11600000 ռուբլու պարտատոմս[70]: Մարզում հայրենասիրական մեծ վերելքով ընթացավ ռազմական փոխառության բաժանորդագրման գործընթացը նաև 1943 թ. մայիսին: Լեռնային Ղարաբաղի աշխատավորները իրենց խնայողությունների հաշվին ձեռք բերեցին 21120000 ռուբլու ռազմական փոխառության պարտատոմսեր[71], որը համարյա կրկնակի անգամ շատ էր նախորդ տարվա համեմատ:

1944 թ. մարտին ԼՂԻՄ մարզային կոմիտեի բյուրոն քննարկելով պետական ռազմական երրորդ փոխառության բաժանորդագրության հարցը, որոշեց բնակչության շրջանում բացատրական աշխատանքներ տանել այդ գործընթացը ավելի բարձր մակարդակով իրականացնելու համար: Շնորհիվ ձեռնարկված միջոցառումների, ռազմական երրորդ փոխառության բաժանորդագրման աշխատանքները մարզում ընթացան ժամանակին և բարձր մակարդակով: Բաժանորդագրվողների առաջին շարքերում էին գյուղատնտեսության առաջավորները, որոնք բաժանորդագրվում էին 10-ից մինչև 60 հազար և ավելի ռուբլու պարտատոմսեր: Ինչպես վկայում է «Սովետական Ղարաբաղ» թերթը՝ 1944 թ. մայիսի 8-ի դրությամբ մարզում պետական երրորդ ռազմական փոխառության բաժանորդագրությունը կազմել է 39317000 ռուբլի, որից Մարտունու շրջանում՝ 8868000 ռ., Ստեփանակերտի շրջանում՝ 7319000 ռ., Հադրութի շրջանում՝ 7052000 ռ., Շուշիի շրջանում՝ 1939000 ռ.,

---

[69] "Бакинский рабочий", 28 июля 1944.
[70] «Կոմունիստ», 21 մայիսի 1943:
[71] «Սովետական Ղարաբաղ», 21 մայիսի 1943:

Ստեփանակերտ քաղաքում՝ 1265000 ռուբլի: Մարտունու շրջանի Ավդոտ գյուղի կոլտնտեսության նախագահ Սամվել Բաբուտյանը բաժանորդագրվել էր 110000 ռուբլու, Քերթ գյուղի կոլտնտեսության նախագահ Բարսեղ Աբրահամյանը (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանի հայրը)՝ 102000 ռ., Նորշենի կոլտնտեսության նախագահ Իվան Զարգարյանը, Մյուրիշենի կոլտնտեսության նախագահ Ամիրջան Հարությունյանը, Մավաս գյուղի կոլտնտեսության նախագահ Առուշան Ավանեսյանը, Ղզղալա գյուղի կոլտնտեսության նախագահ Իշխան Հարությունյանը՝ 100000-ական ռուբլու, Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի կոլտնտեսության նախագահ Սաշա Մարտիրոսյանը՝ 50000 ռ. փոխառության պարտատոմս և այլն[72]:

«Սովետական Ղարաբաղ» թերթի մեկ այլ վկայությամբ մինչև 1944 թ. մայիսի 18-ը մարզում պետական ռազմական երրորդ փոխառության բաժանորդագրությունը կազմել էր 41298000 ռուբլի[73]:

Բացի կամավոր բաժանորդագրություններից ու նվիրատվություններից մարզի յուրաքանչյուր բնակիչ պարտավոր էր մուծել ռազմական հարկ: Այսպես, օրինակ, ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմի 1943 թ. հունվարի 28-ի թիվ 253-րդ որոշման հիման վրա նախատեսված էր, որ Շուշիի շրջանում ապրողները պետք է մուծեին 300 ռ., իսկ Ստեփանակերտի, Մարտունու, Մարտակերտի և Հադրութի շրջանների բնակիչները՝ 375 ռ. ռազմական հարկ[74]:

* * *

Հայրենական մեծ պատերազմի տարիներին փառապանծ ավանդույթ դարձավ ռազմաճակատի և թիկունքի մարտական համագործակցությունը: Կարմիր բանակի զինվորները թիկունք ուղարկած նամակներում իրենց հարազատներին պատմում էին ռազմաճակատում կատարած հերոսական սխրանքների մասին, իսկ թիկունքի աշխատավորները զինվորներին ուղարկած պատասխան

---

[72] «Սովետական Ղարաբաղ», 8 մայիսի 1944:
[73] «Սովետական Ղարաբաղ», 18 մայիսի 1944:
[74] ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, կապոց 13, գ. 145, թ. 32:

նամակներում պատմում էին իրենց աշխատանքային սխրանքների մասին: ԼՂԻՄ-ի կառուցական և տեղական իշխանությունները իրենց հատուկ ուշադրությունն էին սևեռում թիկունքի և ռազմաճակատի միջև սերտ կապեր հաստատելու վրա: Ռազմաճակատից թիկունք ուղարկված բոլոր նամակները, որտեղ պատմվում են Կարմիր բանակի հերոսական գործունեության մասին, թերթերի և ռադիոյի միջոցով անմիջապես տարածվում էին մարզի բոլոր շրջաններում, դառնում ամենքի սեփականությունը: Այդ նամակները մեծ չափով նպաստում էին ռազմաճակատին օգնելու նպատակով թիկունքի աշխատավորների ուժերի համախմբմանը: ԼՂԻՄ մարզկոմը պահանջում էր բոլոր կուսակցական սկզբնական կազմակերպություններից ուժեղացնել ռազմաճակատի հետ թիկունքի կապը, նամակներ ուղարկել գործող բանակ, սերտ կապեր պահպանել ճակատայիններ-ի ընտանիքների հետ, սնել նրանց, նամակագրական կապեր հաստատել այն զորամասերի հետ, որտեղ մարտնչում են Լեռնային Ղարաբաղի զավակները: Հարյուրավոր այդպիսի նամակներ ուղարկվել էին ռազմաճակատ: Ռազմաճակատում մարտնչող զինվորներին նամակ և նվերներ ուղարկեցին նաև Ստեփանակերտ քաղաքի 7-րդ թաղամասի կանայք: Պատասխան նամակում լեյտենանտ Միրոշնիչենկոյի ստորաբաժանման զինվորները գրեցին. «Մենք, զինվորներս, հրամանատարներս ու քաղաշխատողներս Ստեփանակերտ քաղաքի 7-րդ թաղամասի կանանց հայտնում ենք մեր մարտական ողջույնը: Այսօր, մենք, լեյտենանտ Միրոշնիչենկոյի ստորաբաժանման մարտիկներս, ստացանք ձեր նամակը և նվերները: Դրանք մեզ մեծ ուրախություն պատճառեցին: Ձեր նամակը մեզ մեկ անգամ ևս հավաստիացրեց, որ հերոսական խորհրդային ժողովուրդը ուշի ուշով հետևում է մեզ, հոգատարություն ցուցաբերում մեր հանդեպ: Խորհրդային ժողովրդի այդ հոգատարությունը մեզ ոգևորում է թշնամու դեմ մղվող պայքարում տանել նորանոր հաղթանակներ: Ձեր նամակը մեկ անգամ ևս խոսում է խորհրդային մարդկանց կուռ միասնության, Կոմունիստական կուսակցության ազգային ճիշտ քաղաքականության, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության մասին, որոնք ոտքի են կանգնել սրբազան պատերազմի՝ ընդդեմ նենգ թշնամու՝ գերմանական ֆաշիզմի դեմ, նրանց դեմ, ովքեր ցանկա-

նում են մեզ դարձնել իրենց ստրուկները, խլել մեր ազատությունը, ազգային մշակույթը, գիտությունը, նրանց դեմ, ովքեր ցանկանում են ազգամիջյան կոտորածներ հրահրել: Բայց դա նրանց չի հաջողվի: Մոտիկ է այդ թալանչիների և հասարակության տականքների վերջը: Մեր յուրաքանչյուր մարտիկ և հրամանատար պատրաստ է իր կյանքը զոհել հանուն մեր հայրենիքի ազատության, մեր մայրերի, կանանց ու քույրերի պատվի համար: Հայրենիքը մեզ դաստիարակել է որպես անվեհեր մարտիկներ, որոնց համար սարսափելի չեն թշնամու տանկերն ու ինքնաթիռները: Մենք գիտենք, որ ինչի համար է արյուն թափվում, մենք համոզված ենք, որ նենգ թշնամին կջախջախվի և հաղթանակը մերը կլինի: Դուք, մեր հարազատները, թիկունքում ազնիվ աշխատեք, իսկ մենք էլ ռազմաճակատում կջախջախենք թշնամուն»[75]:

Լեյտենանտ Միրոշնիչենկոյի ստորաբաժանման մարտիկների նամակը Ստեփանակերտի աշխատավորուհիների մեջ ոգևորության նոր ալիք առաջ բերեց: Այդ նամակի հետ տառացիորեն ծանոթացան քաղաքի բոլոր կանայք: Այն ձեռքից ձեռք էր անցնում և ավելի ու ավելի ամրապնդում հավատը հաղթանակի հանդեպ: Ստեփանակերտ քաղաքի կանանց կապը ճակատայինների հետ շարունակվեց ամբողջ Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Ստեփանակերտի 60-ամյա բնակչուհի Անուշ Ավանեսյանի ռազմաճակատ ուղարկած նամակն ու ծանրոցը ստացավ հոսպիտալում բուժվող վիրավոր մարտիկ Անատոլի Պագուլը: Պատասխան նամակում վերջինս Անուշ Ավանեսյանին գրում է. «Բարև, սիրելի մայրիկ: Ձեր ուղարկած նվերն ու նամակը ես ստացա, որի համար մեծապես շնորհակալ եմ ձեզանից: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրը ես զորակոչվել եմ Կարմիր բանակի շարքերը: Ռազմաճակատում ես մարտնչել եմ ֆաշիստների դեմ և ոչնչացրել մի քանի տասնյակ զավթիչների: Այժմ ես վիրավոր եմ և գտնվում եմ «Տ» քաղաքի հոսպիտալում: Մենք, վիրավոր մարտիկներս, շրջապատված ենք ոչ միայն հոսպիտալի բժշկասանիտարական անձնակազմի հոգատարությամբ, այլև ձեր հոգատարությամբ: Սի-

[75] «Սովետական Ղարաբաղ», 21 հոկտեմբերի 1941:

ռելի մայր, երդվում եմ քեզ, որ հոսպիտալից դուրս գրվելուց հետո ես կրկին կվերադառնամ ռազմաճակատ և մինչև արյանս վերջին կաթիլը կպայքարեմ հանուն մեր հայրենիքի ազատության: Մեր գործը արդար է, մենք անպայման կջախջախենք նենգ թշնամուն: Կարմիրբանակային ողջույններով Ա. Պագուլ»[76]:

Զինվոր Անատոլի Պագուլի նամակը ձեռքից ձեռք էր անցնում: Ստեփանակերտի կուսակցության շրջանային կոմիտեն կազմակերպեց քաղաքի աշխատավորուհիների մի շարք ժողովներ, որտեղ կարդացվում էր վիրավոր զինվորի նամակը: Ժողովների մասնակիցները իրենց վրա նոր պարտավորություններ էին վերցնում շարունակել ռազմաճակատում մարտնչողների հետ կապերը, նոր ծանրոցներ ու նամակներ ուղարկել նրանց համար:

Ի պատասխան ճակատայինների նամակների հավաքվեց և ռազմաճակատ ուղարկվեց հազարավոր ծանրոցներ: Վիրավոր զինվորի նամակից հուզված Անուշ Ավանեսյանը պատասխանում գրեց. «Բարև, իմ թանկագին որդի Անատոլի: Քո նամակը անսահման չափով ինձ ուրախացրեց, ուրախ եմ, որ ինձ քո մայրն ես համարում: Այսօրվանից դու կլինես իմ որդին, իսկ ես՝ քո մայրը: Ես ամբողջ հոգով քեզ առողջություն եմ ցանկանում, որ շուտով վերադառնաս ռազմաճակատ: Ես հաջողություն եմ ցանկանում հարազատ Կարմիր բանակին, որ շուտափույթ ջախջախի Հիտլերի բանակին և դու մեզ հյուր գաս»[77]:

Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի Էնգելսի անվան կոլտնտեսությունից հերոսուհի մայր Մինա Բաբայանի 9 որդիները մարտնչում էին ռազմաճակատում: Նրանք մշտապես նամակագրական կապ էին պաշտպանում իրենց մոր հետ, կոչ անում նրան և համագյուղացիներին պատվով աշխատել հանուն հաղթանակի: «Իմ սիրելի թանկագին մայրիկ,- նամակում գրում է Մինա մայրիկի տղաներից մեկը՝ Գրիգոր Բաբայանը,- ես գիտեմ, որ պատերազմը իր հետ բերել է շատ հոգսեր, դժբախտություններ ու զրկանքներ: Բայց դրանք կարելի է հաղթահարել, ամրապնդվեք և աշխատեք մեր երկրի լավագույն մարդկանց նման: Իմացեք, որ

---

[76] «Սովետական Ղարաբաղ», 14 դեկտեմբերի 1941:
[77] «Սովետական Ղարաբաղ», 14 դեկտեմբերի 1941:

հաղթանակի օրը մոտ է, մենք շուտով կվերադառնանք հայրենի տուն, կապրենք նոր երջանիկ կյանքով և ընտանեկան շրջապատում անպայման բաժակ կբարձրացնենք խմելու հաղթողների կենացը, մեր հայրենիքի հավատարիմ զավակների կենացը»[78]:

Հերոսուհի մայր Մինա Բաբայանը ռազմաճակատ ուղարկած իր նամակներում որդիներին ոգեշնչում էր հերոսական սխրանքների, իսկ ինքը թիկունքում ջանք չէր խնայում հայրենանվեր աշխատանքում: Նա խորապես հավատացած էր, որ հաղթանակը շուտով կլինի և իր որդիները կվերադառնան տուն: «Խորհրդային ժողովուրդը անհաղթելի է»,- նշում է հերոսուհի մայրը իր նամակներում և այդ հավատով էլ նա իր համագյուղացիների հետ աշխատում էր օր ու գիշեր: Մինա Բաբայանը տեսավ հաղթանակը: Նրա 9 որդիներն էլ վերադարձան հայրենի տուն և լծվեցին խաղաղ աշխատանքի:

Ռազմաճակատում մարտնչող իր որդուն գրած նամակում Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի կոլտնտեսուհի Ազիզ Ասրիյանը պատվիրում է որդուն լինել կարգապահ և խիզախ մարտիկ, երբեք թիկունք ցույց չտալ թշնամուն: Այնուհետև նա որդուն զգուշացնում է, որ նրան տուն կընդունի միայն հաղթանակից հետո[79]:

Մարտակերտի շրջանի կոլտնտեսուհիները, հաջողությամբ ավարտելով 1943 թ. գարնանը բամբակի ցանքսի աշխատանքները, նամակով դիմել են Առաջին Ուկրաինական ռազմաճակատի զորքերին: Նամակում նրանք զինվորներին պատմում են թիկունքում կատարվող իրենց ամենօրյա աշխատանքի մասին, որ իրենք ինչպես են այդ աշխատանքում փոխարինել ռազմաճակատ մեկնած իրենց ամուսիններին, հայրերին ու որդիներին: Նամակում պատմվում է ստախանովական կոլտնտեսուհիներ Աստղիկ Պողոսյանի, Մարալ Մարգարյանի, Սոնի Բալուտյանի և շատ ուրիշների մասին, որոնք իրենց օրվա պլանները ոչ միայն կատարում, այլև գերակատարում են մի քանի անգամ: Նամակում պատմվում է նաև այն մասին, թե ինչ հոգատարությամբ են շրջապատված ճակատայինների ընտանիքները, որ իրենք ամեն ինչ անում են ռազմաճակատի կարիքները հոգա-

---

[78] «Սովետական Ղարաբաղ», 29 մայիսի 1945:
[79] «Կոմունիստ», 10 հոկտեմբերի 1943:

լու և թիկունքի ամրապնդման համար: Նրանք ռազմաճակատում մարտնչող խիզախ մարտիկներին ցանկանում էին ավելի շատ հաջողություններ, պահանջում էլ ավելի ուժեղ հարվածել թշնամուն և արագորեն մաքրել հայրենիքի սրբազան հողը թշնամական հորդաներից[80]:

1943 թ. հուլիսի վերջին ստացվեց պատասխան նամակը՝ ուղղված Մարտակերտի կոլտնտեսուհիներին, որտեղ ասված էր. «Ի խորոց սրտի շնորհակալություն ենք հայտնում մեր հայրենիքի հայրենասիրուհիներին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի կանանց Կարմիր բանակին հաջողություններ մաղթելու համար: Հայրենական մեծ պատերազմում գերմանական բարբարոսների դեմ զենքը ձեռքներին իրենց պատիվն ու ազատությունն են պաշտպանում մեր բազմազգ Խորհրդային Միության միլիոնավոր կանայք: Ձեր ուղարկած նամակից երևում է, որ ձեր շրջանի կանայք այդ պայքարում ընթանում են խորհրդային ժողովրդի ավանգարդում և թիկունքում կատարած ամենօրյա հերոսական աշխատանքով նպաստում Կարմիր բանակի ձեռք բերած հաղթանակներին: Դրանում է կայանում ձեր պատիվն ու սխրանքը, որն իր էությամբ չի զիջում ռազմաճակատում մարտնչող զինվորների կատարած սխրանքին: Մեզ դեռ սպասվում են նորանոր ճակատամարտեր՝ թշնամուն լրիվ ջախջախելու համար: Հավաստիացնում ենք ձեզ, որ Կարմիր բանակը անպայման կջախջախի թշնամուն և վերջնականապես մեր երկիրը կմաքրի ֆաշիստական աղտեղությունից: Մեկ անգամ ևս շնորհակալություն ենք հայտնում Կարմիր բանակին ցույց տված ձեր մեծ օգնության համար և ցանկանում հաջողություններ՝ թշնամու դեմ Կարմիր բանակի վերջնական հաղթանակին նպաստող ձեր արգասավաբեր աշխատանքում»[81]:

Մարտակերտի շրջանի կանայք, ոգևորված այդ նամակից, օրեցօր էլ ավելի ու ավելի էին ավելացնում իրենց ջանքերը՝ թշնամուն ջախջախելու գործում: Շրջանում կազմակերպվեցին բարձր բերքի ստացման բրիգադներ ու օղակներ: Աշխատելով բամբակի բարձր բերք ստանալու համար, նրանք հասան լավ արդյունքների:

---

[80] «Սովետական Ղարաբաղ», 22 հունիսի 1943:
[81] «Սովետական Ղարաբաղ», 22 հունիսի 1943:

Այսպես, օրինակ, Իլյիչի անվան կոլտնտեսության կոլտնտեսուհի Գոհարիկ Բաբայանը 1944 թ. բամբակի հավաքման պլանը կատարեց 264 տոկոսով, Մարտակերտ գյուղից Նախշուն Սանդրիյանի օղակը նույն տարվա պլանը կատարեց 267 տոկոսով, իսկ Ջանյաթաղ գյուղի «Նոր ուղի» կոլտնտեսության Սոնի Բախտամյանի օղակը՝ 194 տոկոսով և այլն[82]:

1945 թ. Մարտակերտի շրջանի կանայք նոր նամակ ուղարկեցին Առաջին Ուկրաինական ռազմաճակատի մարտիկներին, որտեղ մեծ հպարտությամբ նշում էին ֆաշիզմի դեմ Կարմիր բանակի տարած նշանավոր հաղթանակները, նշում այն օգնության մասին, որ ցույց է տալիս թիկունքը՝ ռազմաճակատին: «Թշնամու ջախջախման և հիտլերյան զավթիչներից մեր սրբազան հողը ազատագրելու գործում,- նշվել է նամակում,- Կարմիր բանակի հետ միասին մեծ վաստակ ունեին նաև թիկունքի աշխատողները, հատկապես կոլտնտեսային գյուղացիությունը, որը մեծ վաստակ ունի թշնամու ջախջախման գործում և դեռ անելու է ամեն ինչ՝ մեր հայրենիքը շուտափույտ կերպով ֆաշիստներից ազատագրելու համար: Վատ չենք աշխատել նաև մենք՝ Մարտակերտի շրջանի կանայք: Մեր շրջանը բարձր ցուցանիշներով ավարտեց 1944 թ. գյուղատնտեսական աշխատանքների տարին: Ժամկետից շուտ կատարվել են պետությանը և Կարմիր բանակին՝ հացի, մսի, կաթի և մնացած մթերքների հանձնման պլանները, շրջանը բամբակի մթերման պլանը կատարել է 121.3 տոկոսով: Մեր շրջանում կազմակերպվել է բարձր բերք ստանալու 23 օղակ, որոնք պատվով կատարեցին վերցված պարտավորությունները: Հատկապես աչքի ընկավ Թալիշ գյուղի Իլյիչի անվան կոլտնտեսությունից Գոհարիկ Բաբայանի օղակը, որը բամբակի հավաքման պլանը կատարեց 264 տոկոսով: Մարտակերտ գյուղի կոլտնտեսությունից Նախշուն Սանդրիյանի օղակը պլանը կատարեց 267 տոկոսով, Ջանյաթաղ գյուղի «Նոր ուղի» կոլտնտեսությունից Սոնի Բախտամյանի օղակը՝ 194 տոկոսով, Աղաբեկալենջ գյուղի Ֆրունզեի անվան կոլտնտեսությունից Սոնի Բալուզյանի օղակը՝ 134 տոկոսով և այլն: Մարտակերտի

---

[82] РГАСПИ, ф. 17, оп. 44, д. 20, л. 23.

շրջանի կանայք իրենց անձնական խնայողություններից 100000 ռուբլի են մուծել պաշտպանության ֆոնդի հաշվին՝ ձեր ռազմաճակատի մարտիկների համար ինքնաթիռ կառուցելու նպատակով: Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ համարձակ արշավեք Բեռլինի վրա՝ հիտլերիզմի վերջնական ջախջախման համար»[83],- այսպես ավարտեցին իրենց նամակը ուղղված Առաջին Ուկրաինական ռազմաճակատի մարտիկներին՝ Մարտակերտի շրջանի կոլտնտեսությունների դաշտերի աշխատավորուհիները:

Նամակի պատասխանը ստացվեց ապրիլի վերջերին, որտեղ Առաջին Ուկրաինական ռազմաճակատի մարտիկները շնորհակալություն էին հայտնում Մարտակերտի շրջանի գյուղատնտեսության աշխատավորուհիներին և առաջավորներին նրանց կատարած անձնուրաց աշխատանքի համար: «Ձեր խնդրանքը թշնամուն անխնա ջախջախել նրա իսկ որջում, մենք կկատարենք մինչև վերջ, հաստատ հավատալով ֆաշիստական բարբարոսների դեմ մղվող մեր պայքարի սուրբ ճշմարտությանը: Ոգեշնչված և ղեկավարվելով մեր հերոսական Կոմունիստական կուսակցության կողմից, խորհրդային մեծ ժողովուրդը և նրա հաղթական Կարմիր բանակը շուտով կհասնեն իրենց արդար գործի լրիվ ավարտին և Կարմիր բանակը հաղթանակի դրոշը կպարզի պարտված թշնամու մայրաքաղաքի վրա»[84]:

1943 թ. ապրիլին "Известия", "Правда", "Комсомольская Правда" թերթերում հրապարակվեց ադրբեջանական ժողովրդի նամակ-կոչն՝ ուղղված ռազմաճակատում հանրապետությունից մարտնչող մարտիկներին, որտեղ կոչ էր արվում նրանց տուն վերադառնալ միայն հաղթանակով: Այդ նամակը հանգամանորեն քննարկվեց հանրապետության բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում և մեքենատրակտորային կայաններում, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Մարզից այդ նամակի տակ իրենց ստորագրություններն էին դրել 45000 մարդ՝ արդյունաբերության և գյուղատնտեսության

---

[83] «Սովետական Ղարաբաղ», 8 մարտի 1945:
[84] РГАСПИ, ф. 17, оп. 44, д. 20, л. 24.

բնագավառի աշխատողներ, մտավորականներ: Նամակի քննարկման ժամանակ մարզի աշխատավորները իրենց վրա նոր պարտավորություններ էին վերցնում կատարել և գերակատարել ինչպես արտադրական, այնպես էլ գյուղատնտեսական աշխատանքների պլանները, աշխատել «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով:

* * *

Բացի փոխադարձ նամակագրական կապից, թիկունքի և ռազմաճակատի կապի մի այլ ձև էր հանդիսանում ռազմաճակատից արձակուրդ եկած մարտիկների հետ տեղերում հանդիպումներ կազմակերպելը: Յուրաքանչյուր այդպիսի հանդիպում վեր էր ածվում ժողովրդական տոնախմբության: Այսպես, օրինակ, Մարտունու շրջանի Քենդխուրդ գյուղի բնակիչ գվարդիական զինվոր Մամիկոն Առաքելյանը արձակուրդ էր եկել հայրենի գյուղ: Երբ նա այցելեց հարևան Շեխեր գյուղ՝ իր մարտական ընկերոջ հարազատների հետ հանդիպելու համար, նրան ջերմ ընդունելություն ցույց տվեցին ոչ միայն ընկերոջ ծնողները, այլև գյուղի ողջ բնակչությունը: Կոլտնտեսության ղեկավարությունը գվարդիական զինվորի համար կազմակերպեց հանդիսավոր հանդիպման արարողություն, որին ներկա էր համարյա գյուղի ողջ բնակչությունը: Զինվորին շատ էին հարցուփորձ անում ռազմաճակատային առօրյայի մասին: Մամիկոն Առաքելյանը շատ հետաքրքիր դեպքեր պատմեց Կարմիր բանակի հերոսական առօրյայից: Նրա պատմությունը հաճախ ընդհատվում էր ծափահարություններով և հիացական բացականչություններով՝ ի պատիվ ռազմաճակատում մարտնչող հերոս մարտիկների, ի պատիվ ԽՍՀՄ ժողովուրդների մարտական համագործակցության և բարեկամության: Հանդիպումը վերածվեց թիկունքի և ռազմաճակատի անխախտ կապի հաստատման տոնախմբության: «Մենք պատվով կկատարենք հայրենիքի հանդեպ ունեցած մեր սրբազան պարտքը, թշնամին անպայման կջախջախվի և հաղթանակը մերը կլինի: Դուք թիկունքում աշխատեք այնպես, ինչպես ռազմաճակա-

տում մենք ենք կռվում և դա կլինի մեր հաղթանակի գրավականը»[85],- իր խոսքը այսպես եզրափակեց գվարդիական զինվորը:

Գյուղատնտեսական աշխատանքները պլանները ժամկետից շուտ կատարելու պարտավորություններ ստանձնելուց հետո, Շեխեր գյուղի կանայք զինվոր Առաքելյանին խնդրեցին հայտնել իրենց ամուսիններին, որդիներին ու եղբայրներին, որ թիկունքում նրանց սպասում են վերադառնալ միայն հաղթանակած: «Հայտնենք նրանց, որ մենք պատվով կկատարենք մեր վերցրած պատվավորությունները և հարազատ Կարմիր բանակի մարտիկներին կապահովենք անհրաժեշտ ամեն ինչով»[86],- հայտարարեցին նրանք:

2. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՎԱՆԴԸ

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի գործում իր ուրույն ավանդն են ներդրել նաև ԼՂԻՄ-ի կրթության բնագավառի աշխատողները: Չնայած պատերազմի հենց առաջին իսկ օրերին ռազմաճակատ զորակոչվեցին հարյուրավոր ուսուցիչներ, որոնք հերոսաբար մարտնչեցին զենքը ձեռքներին, այնուամենայնիվ ոչ մի օր չդադարեցվեց մարզի դպրոցների աշխատանքը: Այդ են վկայում հետևյալ թվական տվյալները. եթե 1939-1940 ուսումնական տարում ԼՂԻՄ-ում կար 191 դպրոց, որտեղ սովորում էր 37413 աշակերտ և դասավանդում՝ 1537 ուսուցիչ, ապա՝ 1944-1945 ուսումնական տարում մարզում գործում էր 198 դպրոց, որոնցից 51-ը՝ տարրական, 106-ը՝ յոթնամյա, 41-ը՝ միջնակարգ: Դպրոցներում սովորում էր 33719 աշակերտ և դասավանդում՝ 1671 ուսուցիչ: Ինչպես տեսնում ենք դպրոցների թիվը պատերազմի տարիներին ոչ թե նվազել է, այլ ավելացել է 7-ով, իսկ ուսուցիչների թիվը ավելացել՝ 137-ով[87]: Հասկանալի պատճառներով 3694-ով նվազել է

---

[85] «Սովետական Ղարաբաղ», 19 հունվարի 1943:
[86] Նույն տեղում:
[87] Ռազմաճակատ մեկնած ուսուցիչներին փոխարինել էին միջնակարգ և նույնիսկ յոթնամյա կրթություն ունեցող աղջիկները, մանկավարժական տեխնիկումների և ինստիտուտի շրջանավարտները, թոշակառու ուսուցիչները:

աշակերտների թիվը, քանի որ պատերազմի տարիներին զգալի չափով անկում է ապրել ծնելիությունը: Բացի 198 հանրակրթական դպրոցներից 1945 թ. մայիսի 5-ի դրությամբ մարզում գործում էին 2 մանկավարժական տեխնիկում (Շուշիում և Հադրութում), 2 երաժշտական դպրոց, բժշկական և գյուղատնտեսական տեխնիկումներ: 1939 թ. Շուշիում բացվել էր երկամյա ուսուցմամբ մանկավարժական ինստիտուտ[88] (1946 թ. այն տեղափոխվեց Ստեփանակերտ և գործեց մինչև 1953 թվականը):

«Ելելով պատերազմական պայմաններից փոփոխությունների ենթարկվեցին կրթության բովանդակությունը, ինչպես և դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերն ու մեթոդները,- գրում է դոկտոր Հրանտ Աբրահամյանը,- կենսական պահանջ դարձավ դպրոցականների կողմից ուսումնական աշխատանքներին զուգընթաց հանրօգուտ և արտադրողական աշխատանք կատարելը: Բոլոր փոփոխությունները կատարվեցին միայն շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման հաշվին: Դպրոցներում հաճախակի քննարկվում էին աշակերտների ուսումնադաստիարակչական, գաղափարաքաղաքական, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, ռազմահայրենասիրական դաստիարակության վերաբերյալ հրատապ հարցեր և ընդունվեցին կոնկրետ որոշումներ»[89]:

Չնայած պատերազմի հետևանքով առաջացած օբյեկտիվ դժվարություններին (ուսուցիչների զգալի մասը մեկնել էր ռազմաճակատ, ավագ դասարանցիների մի մասը աշխատանքի էր անցել արտադրության մեջ՝ փոխարինելով իրենց հայրերին ու ավագ եղբայրներին), կրթության համակարգը ոչ միայն դիմացավ այդ լուրջ փորձություններին և կարողացավ ապահովել ընդհանուր պարտադիր ուսուցման բնագավառում նախապատերազմյան տարիներին ձեռք բերած նվաճումները, այլև ուսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը վերակառուցելով պատերազմական պահանջներին համապատասխան, զգալի հաջողությունների հա-

---

[88] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:

[89] Հրանտ Աբրահամյան, Մաքտնչող Արցախը 1917-2000, գիրք Բ, 1923-1985, էջ 232:

սավ հատկապես սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության բնագավառում: Պատերազմի հենց առաջին ուսումնական տարում մարզի դպրոցներում (ինչպես ամբողջ երկրում) մտցվեց պարտադիր զինվորական ուսուցում: Աշակերտները սովորում էին տիրապետել զենքին, կրակում էին հրացաններից, ֆիզիկապես կոփվում, կատարում շարային պարապմունքներ, աղջիկները առանձին խմբերում տիրապետում էին վիրավոր մարտիկներին առաջին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց տալու արվեստին, քաղաքում սովորողները ուսումասիրում էին նաև ռադիո գործը, մորզեի այբուբենը, տիրապետում հեռագրիչի, ավտովարորդի և տրակտորիստի մասնագիտություններին և այլն:

Պատերազմի տարիներին մի շարք լուրջ ճշգրտումներ մտցվեցին ուսումնական ծրագրերում, ավելացվեցին ԽՍՀՄ պատմության հերոսական իրադարձություններին, խորհրդային ժողովրդի հեղափոխական պայքարին նվիրված նյութերին տրվող դասաժամերը: Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ Կարմիր բանակի և խորհրդային ողջ ժողովրդի պայքարը լայնորեն արտացոլվում էր տարբեր դասընթացների նյութերում, թեմատիկ շարադրություններում, վարժություններում, զրույցներում, արտադասարանական ընթերցանություններում, տարբեր միջոցառումներում:

Չնայած ֆինանսական սուղ պայմաններին, այնուամենայնիվ մարզի իշխանությունները միջոցներ էին գտնում դպրոցական շենքերի վերանորոգման և կահավորման համար: Այսպես, օրինակ, ԼՂԻՄ ժողովրդական կրթության բաժնի վարիչ Գրիգոր Գրիգորյանի վկայությամբ 1941-1942 ուսումնական տարվա հուլիսի 1-ի դրությամբ մարզի 193 դպրոցներից հիմնական և ընթացիկ վերանորոգման են ենթարկվել 168-ը, իսկ 129 դպրոցներ արդեն ձեռք են բերել ջեռուցման համար անհրաժեշտ վառելափայտը, կահավորման համար՝ 131 հազար ռուբլու անհրաժեշտ սարքեր[90]:

Պատերազմն իր կնիքը թողեց նաև դպրոցի պիոներական և կոմերիտական կազմակերպությունների գործունեության վրա: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում լայն տարածում ստա-

---

[90] Նշված աշխատությունը, էջ 321:

ցավ թիմուրական շարժումը: Թիմուրական խմբակները ստանձնում էին ռազմաճակատների ընտանիքների շեֆությունը, շաբաթօրյակներ էին կազմակերպում դպրոցներում և օգնում նրանց տնտեսական գործերին: Թիմուրականները հատկապես մեծ օգնություն էին ցույց տալիս ճակատայինների ընտանիքներին, մշակում տնամերձ հողամասերը, կերակրում անասուններին, նորոգում բնակարանները, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ խնամում աշխատող մայրերի երեխաներին, կարմիրբանակայինների ընտանիքների համար տեղափոխում վառելափայտ, ցանկապատում նրանց բանջարանոցները, փորում տնամերձ այգին և այլն:

Պատերազմի տարիներին մարզի դպրոցականները նաև օգնում էին ռազմաճակատ ուղարկվող ծանրոցների պատրաստմանը, հավաքում մետաղի ջարդոն, շեֆական օգնություն ցույց տալիս Ստեփանակերտի և Շուշիի զինվորական հոսպիտալներին, օգնում վիրավոր մարտիկներին: Երաժշտական դպրոցների սաները համերգային ելույթներ էին ունենում վիրավորների համար, նրանց համար թերթեր էին կարդում, արտասանում բանաստեղծություններ, գրում նամակներ: Մարզի դպրոցների աշակերտների զգալի մասը ամառային արձակուրդների ժամանակ մասնակցում էր գյուղատնտեսական աշխատանքներին, իրենց աշխատավարձը տրամադրելով երկրի պաշտպանության ֆոնդին: Մարզի դպրոցականները շեֆական օգնություն էին ցույց տալիս նաև գերմանական զավթիչների կողմից ժամանակավորապես գրավված տարածքներից Լեռնային Ղարաբաղ էվակուացվածներին, նրանց համար ձեռք բերում հագուստ, սպիտակեղեն, մթերք, ով ինչ կարող էր:

Պատերազմի տարիներին շնորհիվ մարզի ժողովրդական կրթության մարմինների և արհմիութենական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների, ստեղծվեցին պիոներական ճամբարներ, որտեղ իրենց ամառային հանգիստը անցկացրեց 4400 երեխա[91]:

«1942 թ. հուլիսի 30-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը հատուկ որոշում ընդունեց «Դպրոցական բոլոր երեխաներին դպրոց ընդգրկելու

---

[91] Հրանտ Աբրահամյան, նշված աշխատությունը, էջ 231:

և դպրոցական շենքերն ըստ նշանակության օգտագործելու մասին», որը պահանջում էր մինչև օգոստոսի 20-ը ազատել զբաղեցրած բոլոր դպրոցական շենքերը, առանձնացնել և կահավորել լրացուցիչ շենքեր, որոնք անհրաժեշտ են նոր ուսումնական տարին հաջող սկսելու համար,- իր գրքում նշում է Հրանտ Աբրահամյանը,- ընդհանրապես գյուղական դպրոցների ուսուցիչները ծանրաբեռնված էին աշխատանքով և այն հաղթահարում էին մեծ դժվարություններով: Ելնելով այդ ամենից Լեռնային Ղարաբաղի մարզկոմի և մարզխորհրդի 1943 թ. սեպտեմբերին տեղի ունեցած համատեղ նիստը որոշեց քաղաքների և գյուղերի ուսուցիչներին բավարարել արդյունաբերական ապրանքներով»[92]:

1942 թ. դեկտեմբերին ԼՂԻՄ մարզկոմը և մարզխորհուրդը որոշում ընդունեցին «Ուսուցիչների և աշակերտների կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու մասին», որը կարևոր նշանակություն ունեցավ մարզի դպրոցների համար: Համաձայն այդ որոշման ամենից առաջ ուշադրություն դարձվեց վարձով ապրող ուսուցիչների կենցաղային պայմանները բարելավելու վրա: Ժողկրթության բաժինները իրենք էին փակում տան վարձը, բացի այդ 40-50 տոկոսով բարձրացվեց ուսուցիչների աշխատավարձը, գյուղական դպրոցներին հատկացվեցին հողամասեր, որից ստացված եկամուտը բաժանվում էր կարիքավոր ուսուցիչներին ու աշակերտներին: Հատուկ ուշադրություն դարձվեց դպրոցական շենքերի կահավորմանը, ուսումնական պիտույքների ձեռքբերմանը, գրադարանների համալրմանը: Ուսուցիչների և աշակերտների համար շրջիկ կինոցանցը կազմակերպում էր ձրի կինոդիտումներ, այն դպրոցներում որտեղ ռադիո չկար, անց էին կացվում ռադիոգծեր, տեղադրվում բարձրախոսներ:

Ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ժողովրդական կրթության բնագավառում իրականացված կարևոր միջոցառումներից էր՝ 1943-1944 ուսումնական տարվանից երեխաներին դպրոցներում ընդունելությունը 7 տարեկանից սահմանելը, աշակերտների առաջադի-

---

[92] Նույն տեղում:

մության և վարքի գնահատման հինգբալյան համակարգի մտցնելը, հասունության ատեստատի քննություններ, գերազանց առաջադիմության և օրինակելի վարքի համար ոսկե և արծաթե մեդալներ սահմանելը:

Պատերազմի տարիներին մարզում իրականացվում էր նաև նախադպրոցական կրթություն: Հետաքրքիր է, որ Լեռնային Ղարաբաղում առաջին նախադպրոցական հիմնարկը բացվել է 1928 թ. Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղի մետաքսակարժային ձեռնարկությանն առընթեր[93]: 1941-1945 թթ. մարզում գործել է 20 մանկամսուր-մանկապարտեզ՝ 792 մահճակալով և 31 սեզոնային մանկամսուր-մանկապարտեզ, որտեղ ընդգրկված էին 3300 երեխա[94]:

Բացի հանրակրթական դպրոցներից և նախադպրոցական հիմնարկներից մարզում գործում էր նաև 6 մանկատուն, որոնցից 4-ը Շուշիում:, 2-ը՝ Ստեփանակերտում: Շուշիի մանկատունը ուներ 1200 սան, որոնք հիմնականում որբ, անապաստան և ճակատային-ների երեխաներ էին: Միայն 1944-1945 ուսումնական տարում ժողովրդական կրթութան բնագավառում ներդրվեց 23900000 ռուբլի[95]:

Պատերազմական տարիներին ոչ մի օր կանգ չառավ մշակութային կյանքը մարզում: 1932 թվականից Ստեփանակերտում գործում էր Մաքսիմ Գորկու անվան (այժմ՝ Վահրամ Փափազյանի անվան) հայկական պետական դրամատիկական թատրոնը, որտեղ պարբերաբար բեմադրվում էին հայրենասիրական բնույթի ներկայացումներ: Թատրոնի կայացման գործում իրենց արժանի ավանդն են ներդրել դերասաններ՝ Կարո Ալվարյանը, Իվան Ավանեսյանը, Միքայել Կորգանյանը, Աննա Մելիքը, բեմադրիչներ՝ Հրայր Գրիգորյանը, Գուրգեն Թավրիզյանը, Արտաշես Հովհաննիսյանը, Թամարա Մելքոնյանը և ուրիշներ: Կարո Ալվարյանը հանդիսացել է Ստեփանակերտի Մ. Գորկու անվան դրամատիկական թատրոնի հիմնադիրը[96]: Հարկ է նշել, որ Շուշիում դեռևս 1865 թվականից գործել է հայ-

---

[93] Հրանտ Աբրահամյան, նշված աշխատությունը, էջ 238:
[94] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[95] Նույն տեղում:
[96] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Ե., 1978, էջ 582:

կական թատրոն, որտեղ հյուրախաղերով հանդես են եկել հայ անվանի դերասաններ՝ Գևորգ Չմշկյանը, Պետրոս Ադամյանը, Սիրանույշը, Հովհաննես Աբելյանը, Հովհաննես Զարիֆյանը և շատ ուրիշներ: Շուշիում են ծնվել Խորհրդային Միության ժողովրդական դերասան Վաղարշ Վաղարշյանը և Խորհրդային Հայաստանի ժողովրդական դերասան Գուրգեն Գաբրիելյանը:

Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական Մաքսիմ Գորկու անվան թատրոնում հյուրախաղերով հանդես են եկել Խորհրդային Միության ժողովրդական դերասան՝ Վահրամ Փափազյանը, Ադրբեջանական և Հայաստանի ժողովրդական դերասան՝ ժասմենը (Մարիամ Հովսեփի Գրիգորյան), ՀԽՍՀ ժողովրդական դերասան Արոա Ոսկանյանը, Հայաստանի և Վրաստանի ժողովրդական դերասան Իսահակ Ալիխանյանը և շատ ուրիշներ: Պատերազմի տարիներին Շուշիում գործում էր պետական դրամատիկական թատրոն, որը հիմնականում ներկայացումներ էր տալիս ադրբեջաներեն լեզվով: Բացի դրանից Ստեփանակերտում, Շուշիում և մարզի շրջկենտրոններում գործում էին 7 ստացիոնար կինոթատրոններ, իսկ գյուղերը սպասարկվում էին շրջիկ կինոցանցի միջոցով: Պատերազմի տարիներին Ստեփանակերտում, Շուշիում և բոլոր շրջկենտրոններում գործում էին ռադիոհանգույցներ, իսկ գյուղերը սպասարկվում էին լարային ռադիոցանցով: Այդ տարիներին շատ քչերը ունեին ռադիոընդունիչներ, որոնք պատերազմի սկզբին հավաքվեցին բնակչությունից և վերադարձվեցին պատերազմի հաղթական տարում: Ստեփանակերտում անխափան կերպով գործում էր մարզային կենտրոնական փոստատունը իր հեռախոսակայանով, որն իր բաժանմունքներն ուներ Շուշիում և բոլոր շրջկենտրոններում: Խոշոր գյուղերում նույնպես ստեղծվել էին փոստային բաժանմունքներ: Կապը գյուղերի միջև իրականացվում էր փոստատարների միջոցով, հեռախոսային և հեռագրական ցանցի միջոցով:

Պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ում գործել է նաև 94 ակումբ, բյուջետային 10 գրադարան և խրճիթ-ընթերցարան, 1 պիոներական տուն և 2 թանգարան: Միայն Ստեփանակերտում կար 3 միջնակարգ դպրոց, բժշկական և գյուղատնտեսական տեխնիկում, մանկավարժական (ուսուցչական) երկամյա ինստիտուտ, հանրային

գրադարան, երկրաբանական և պատմության թանգարան, կուսակցական լուսավորության կաբինետ, բանվորական ակումբ, պետական դրամատիկական թատրոն, ձմեռային և ամառային կինոթատրոն, մարզային տպարան և այլն: Պատերազմի տարիներին Ստեփանակերտում կառուցվել է հյուրանոցի երեք հարկանի շենք[97]:

Ստեփանակերտի մարզային տպարանում էին տպագրվում՝ «Սովետական Ղարաբաղ» ԼՂԻՄ մարզկոմի և մարզխորհրդի պաշտոնաթերթը (առաջին համարը լույս է տեսել 1923 թ. օգոստոսի 5-ին), «Սոցիալիստական ուղիով» (Մարտակերտի շրջան) և «Սոցիալիստական անասնապահություն» (Շուշիի շրջան) շրջանային թերթերը, որոնք լույս էին տեսնում 1932 թվականից: 1935 թվականից լույս էին տեսնում Հադրութի շրջանի «Կոլխոզնիկ» և Մարտունու շրջանի «Բոլշևիկյան հաղթանակ» թերթերը: 1933 թվականից Մարտակերտի մեքենատրակտորային կայանի քաղբաժինը հրատարակում էր «Կոլխոզային կայծ» բազմատպաքանակ թերթը: 1934-1941 թթ. Ստեփանակերտում լույս է տեսել «Երիտասարդ բոլշևիկ» շաբաթաթերը, իսկ 1941 թվականից "Советский Карабах" թերթը՝ ռուսերեն լեզվով, որի տպագրությունը շարունակվեց մինչև 1958 թվականը:

Հարկ ենք համարում հիշատակվել, որ նախախորհրդային տարիներին միայն Շուշիում հրատարակվել է 21 անուն թերթ ու հանդես, որից 19-ը՝ հայերեն և 2-ը՝ ռուսերեն լեզուներով[98]:

Մարզային և շրջանային թերթերում իրենց գրական ստեղծագործություններն էին տպագրում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գրողները: Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին՝ 1940 թ. Ստեփանակերտում սկսեց գործել հանրապետության գրողների միության մարզային բաժանմունք: 1940-1941 թթ. գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղարն է եղել Ի. Պետրոսյանը: 1941 թ. նրան փոխարինել է բանաստեղծ Բոգդան Ջանյանը (Հադրութի շրջանի Տումի գյուղից): Սակայն, երբ նա նույն տարվա վերջերը մեկնեց ռազմաճակատ, նրան այդ պաշտոնում մինչև 1945 թ. փոխարինեց շուշեցի բանաստեղծ Միքայել Հարութ-

---

[97] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[98] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, էջ 579-580:

յունյանը: 1945 թ. պատերազմն ավարտելուց հետո Բոգդան Ջանյանը վերադարձավ ԼՂԻՄ և շարունակեց ղեկավարել գրողների միության մարզային բաժանմունքի աշխատանքները[99]: Նշենք նաև, որ երբ 1943 թ. Ադրբեջանի գրողների միությանն առընթեր Բաքվում ստեղծվեց հայ գրողների բաժանմունք, նրա քարտուղար դարձավ բանաստեղծ Սամվել Գրիգորյանը (Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղից), որն այնուհետև եղել է հայերեն լեզվով հրատարակվող «Գրական Ադրբեջան» հանդեսի խմբագիրը: Հայրենական մեծ պատերազմին ակտիվորեն մասնակցեցին ղարաբաղցի գրողներ՝ շուշեցիներ Գուրգեն Բորյանը և Գուրգեն Հովնանը (հետագայում նշանավոր արձակագիր, գրականագետ), Սերգեյ Աբրահամյանը՝ Հադրութի շրջանի Տումի գյուղից (հետագայում անվանի լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Սերգեյ Սարինյանը՝ Ստեփանակերտի շրջանի Սեյիդշեն գյուղից (հետագայում անվանի գրականագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս) և շատ ուրիշներ:

Չնայած պատերազմական տարիների ծանր հոգսերին, ԼՂԻՄ-ի կուսակցական-պետական աշխատողների տեսադաշտից չէր վրիպում մարզի տարածքում գտնվող պատմական կարևոր նշանակություն ունեցող հայկական միջնադարյան հուշարձանների պահպանության հարցը: Ելույթ ունենալով ԼՂԻՄ-ի մարզային կուսակցական կազմակերպության 1945 թ. փետրվարի 5-ին տեղի ունեցած 13-րդ պլենումում, մարզի անտառտնտեսության բաժնի վարիչ Վաղո Օվչյանը, անդրադառնալով մարզի տարածքով մեկ սփռված հայկական պատմական հնագույն հուշարձանների պահպանման հարցին, նշեց, որ այդ կարևոր գործը աչքաթող է արված, որ Ադրբեջանի կառավարությունը միջոցներ չի տրամադրում հուշարձանների պահպանության համար: Ելույթ ունեցողը նշեց, որ հատկապես վատ վիճակում են գտնվում Գանձասարի և Ամարասի վանքերը: Հարկավոր է շտապ միջոցներ գտնել հուշարձանները ավերումից փրկելու համար, քանի որ հետո ուշ կլինի: Պլենումը հավանություն տվեց Վ. Օվչյանի առաջարկությանը և դիմեց Ադրբեջանի կառավարությանը, որոշ ֆինանսական միջոցներ հատկացնել

[99] Նույն տեղում, էջ 579:

մարզին՝ լուծելու հնագիտական կարևոր նշանակություն ունեցող պատմական հուշարձանների պահպանման հարցը: Սակայն մարզկոմի պլենումի այդ պահանջը մնաց անպատասխան[100]:

1945 թ. մարտի 6-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հետմահու Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում շնորհվեց լեգենդար օդաչու, շուշեցի Նելսոն Ստեփանյանին: Ըստ գոյություն ունեցող կարգի, կրկնակի հերոսների բրոնզե կիսանդրին պետք է կանգնեցվի նրա ծննդավայրում: Այդ նպատակով էլ ԼՂԻՄ-ի կուսակցական մարզկոմի բյուրոն 1945 թ. ապրիլի 3-ին որոշում ընդունեց՝ Խորհրդային Միության կրկնակի հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանի հիշատակը հավերժացնելու մասին: Որոշման մեջ նշված էր. «1. Համաձայնվել ԼՂԻՄ Շուշի քաղաքի շրջգործկոմի և շրջկոմի որոշման հետ՝ ա) Շուշի քաղաքի պետական թատրոնի շրջակա զբոսայգին Ն. Գ. Ստեփանյանի անունով կոչելու և այնտեղ հերոսի կիսանդրին կանգնեցնելու մասին: բ) Շուշի քաղաքի «Ինտերնացիոնալ» փողոցը, Մեծ Կալադերեսի գյուղի միջնակարգ դպրոցը և «Ինգլաբ» կոլտնտեսությունը Ն. Գ. Ստեփանյանի անունով վերանվանելու մասին: գ) Համաձայնվել Ստեփանակերտի շրգործկոմի, շրջկոմի և Խանաբադ գյուղի «Տրակտոր» կոլտնտեսության կոլտնտեսականների ընդհանուր ժողովի որոշման հետ, որի համաձայն կոլտնտեսությունը վերանվանվում է Ն. Գ. Ստեփանյանի անունով և գյուղում կանգնեցվում է հերոսի հուշարձանը: դ) Անհրաժեշտ համարել Ստեփանակերտի ամառային կինոթատրոնի շրջանում քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված քաղաքային զբոսայգին կոչել Ն. Գ. Ստեփանյանի անունով և այնտեղ կանգնեցնել հերոսի հուշարձանը»[101]:

Հարկ ենք համարում նշել, որ Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին թուրք-ազերիները Շուշիում հիմնովին ջարդուփշուր արեցին լեգենդար օդաչուի կիսանդրին, վերանվանել նրա անունով կոչվող փողոցն ու զբոսայգին: 1992 թ. մայիսի 9-ին Շուշին քոչվոր զավթիչներից ազատագրելուց հետո, Լեռ-

---

[100] РГАСПИ, ф. 17, оп. 45, д. 17, л. 4.
[101] РГАСПИ, ф. 17, оп. 45, д. 18, л. 60-61.

նային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և Շուշիի քաղաքապետարանի որոշմամբ հերոսի ծննդավայրում կանգնեցվեց հայ ժողովրդի փառապանծ զավակ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի նոր հուշարձանը:

Պատերազմի տարիներին որոշ քայլեր կատարվեցին մարզում գիտության զարգացման ուղղությամբ: 1944 թ. մարտին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Ադրբեջանի մասնաճյուղը, որը հիմնադրվել է 1935 թ. (1945 թ. մարտի 31-ին նրա հիման վրա ստեղծվեց Ադրբեջանի գիտությունների ակադեմիան), ԼՂԻՄ-ում կազմակերպեց իր հենակետը[102]: Այն զգալի դեր խաղաց՝ թթենու, ծխախոտի, բամբակի, կաուչուկի, խաղողի նոր տեսակների ստացման, շերամապահության և մեղվապահության, տոհմային անասնաբուծության զարգացման, ինչպես նաև ընդերքի հանածոների հայտնաբերման ու մշակման ուղղությամբ:

Խաղողագործության և գինեգործության աշխատանքները գիտական հիմքերի վրա դնելու նպատակով 1944 թ. ապրիլի 8-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը իր թիվ 7765 հրամանով որոշում ընդունեց ԼՂԻՄ-ում Թբիլիսիի խաղողագործության և գինեգործության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հենակետ ստեղծելու մասին: Ի կատարումն այդ հրամանի, ԼՂԻՄ կուսակցության մարզկոմի բյուրոն համապատասխան որոշում ընդունեց Ստեփանակերտում վերոհիշյալ ինստիտուտի հենակետ ստեղծելու մասին: Այս հենակետը մարզում ստեղծում է իր մասնաճյուղերը՝ Քարաքենդ, Տող, Աշան, Գիշի, Գյունե ճարտար գյուղերում և Ղարգինտրեստի Մարտունու սովխոզում: Ստեփանակերտի գիտահետազոտական հենակետի վարիչ է նշանակվում գյուղատնտես Ս. Ս. Քոչարովը: Նույն որոշմամբ հանձնարարվում էր Ղարգինտրեստի տնօրեն Խանանովին հենակետին տրամադրել գինու մառան և փորձակայան (լաբորատորիա): Մարտունու գինեգործական սովխոզի տնօրեն Պետրոսյանին, Տող, Քարաքենդ, Աշան և Գյունե ճարտար գյուղերի կոլտնտեսությունների նախագահներին հանձնարարվում է կարճ ժամանակամիջոցում հենակետի համար առանձնացնել միկրո-

---

[102] «Սովետական Ղարաբաղ», 4 մայիսի 1945:

շրջաններ (խաղողի այգիներ) և նպաստել խաղողի բերքի հավաքման ու մշակման գործընթացին: Հատուկ հանձնարարվում է հենակետի տնօրինությանը, խաղողի մշակման հետ մեկտեղ, ուսումնասիրել շահթութի տնկիների հիվանդության և դրանց բուժման մեթոդները[103]:

Մարզի կրթության, մշակույթի և գիտության աշխատողներն իրենց ամենօրյա բեղմնավոր աշխատանքի շնորհիվ նպաստում էին «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանի իրականացմանը: Պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև Լեռնային Ղարաբաղի ծնունդ ականավոր գիտնականներ, կոնստրուկտորներ և պետական գործիչներ, որոնցից շատերը դարձան Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, պետական մրցանակի դափնեկիներ, գիտության վաստակավոր գործիչներ: Բավական է թվարկել նրանցից մի քանիսի անունները. Իվան Թևատրոսի Թևոսյան (ծնված Շուշիում), պատերազմի տարիներին եղել է ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, ծանրակշիռ ավանդ ներդրել հատկապես տանկաշինարարության բնագավառում. 1943 թ. սեպտեմբերի 30-ին նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Իվան Լյուդվիգի Կնունցանց (ծնվել է Շուշիում), ականավոր քիմիկոս, ինժեներա-տեխնիկական զորքերի գեներալ-մայոր, պատերազմի տարիներին եղել է Կարմիր բանակի Գլխավոր շտաբի փորձագետ և հսկայական աշխատանք տարել Խորհրդային զինված ուժերի հակաքիմիական պաշտպանության գործում: 1966 թ. նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, 1953 թ. ընտրվել ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Անդրանիկ Ղևոնդի Իոսիֆյան (ծնվել է Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղում), ինժեներ-էլեկտրատեխնիկ, ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ, 1958 թ. նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում: Պատերազմի տարիներին եղել է պաշտպանական նշանակություն ունեցող թիվ 627 գործարանի տնօրենը Մոսկվայում, որտեղ ռազմաճակատի համար արտադրվում էին էլեկտրատորպե-

---

[103] РГАСПИ, ф. 17, оп. 44, д. 20, л. 26-27.

դային ռումբեր, շարժական ռադիոկայաններ և այլն: Ենոք Հայրապետի Գուլյան, հրետանու գեներալ-մայոր, Պերմի թիվ 235 հրետանային գործարանի տնօրեն, ծնվել է Հադրութում: Սուրեն Իվանի Աղաջանով, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ-մայոր, Նիժնի Նովգորոդի թիվ 21 ավիացիոն գործարանի տնօրեն, ծնվել է Հադրութի շրջանի Ազոխ գյուղում: Նիկոլայ Արտեմի Նարինյան, Լենինգրադյան ռազմաճակատի երկաթուղիներ և կամուրջներ վերանորոգող թիվ 3 գլխավոր վերականգնող գնացքի գլխավոր ինժեներ, ծնվել է Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Երբ 1943 թ. հունվարի 18-ին ճեղքվեց Լենինգրադի պաշարումը, ապա նրա երկաթուղային շինարարները կարճ ժամանակամիջոցում վերանորոգեցին Մեծ Նևայի վրա գտնվող երկաթուղային կամուրջները, երկաթուղային գիծը Շլիսելբուրգից մինչև Պոլյանա և Լենինգրադը երկաթուղով կապեցին մեծ երկրի հետ: 1943 թ. նոյեմբերի 5-ին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահությունը Ն. Ա. Նարինյանին շնորհեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում[104]: Կարելի է այս ցուցակը շարունակել, բայց բավարարվենք այսքանով:

* * *

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Լեռնայի Ղարաբաղի Ինքնավար Մարզի առողջապահության բնագավառի աշխատողները: Հատկապես մեծ էր Արցախի բժիշկների ներդրումը՝ պատերազմական պայմաններում մարզի բնակչությունը համաճարակներից զերծ պահելու գործում: Մարզի առողջապահության բնագավառի աշխատողները պատերազմի առաջին իսկ օրերից մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին մարզում սանիտարական կարգ ու կանոն պահպանելու ուղղությամբ, որը նպաստեց համաճարակների կանխարգելմանը: Պատերազմի պահանջներին համապատասխան իրենց աշխատանքները վերակառուցեցին մարզի բոլոր բուժհիմնարկները: Այսպես, օրինակ, եթե պատերազմի նախօրյակին (1940 թ.)

---

[104] **К. А. Арутюнян**, Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945 гг.), с. 460-461.

մարզում կար 2 հիվանդանոց՝ 262 մահճակալով, 5 ամբուլատորիա, 21 բժշկական և ֆելդշերական կետ, 1 ջերմախտի կայան, մանկական և կանանց 1 կոնսուլտացիոն կետ, ապա 1945 թ. մայիսի 5-ի դրությամբ մարզում գործում էին 5 հիվանդանոց (Ստեփանակերտում, Շուշիում, Հադրութում, Մարտակերտում և Մարտունիում) շուրջ 600 մահճակալով (միայն Ստեփանակերտի մարզային հիվանդանոցն ուներ 375 մահճակալ), 6 պոլիկլինիկա և ամբուլատորիա՝ 35 կաբինետներով, մալարիայի (ջերմախտի) դիսպանսեր, տրոպիկական հիվանդությունների կայաններ, բոլոր կոլտնտեսություններում կային առողջապահական կետեր, 19 գյուղական բժշկական տեղամաս, որոնք լրիվ ապահովված էին բժիշկներով ու բժշկական միջին անձնակազմով: Բացի այդ մարզում գործում էին՝ մեկական սանիտարական կայան, պալարախտային և մաշկավեներական դիսպանսերներ, մարզային սանիտարական մշակույթի տուն, բոլոր կոլտնտեսություններում կային առողջապահական կետեր, 19 գյուղական բժշկական տեղամասեր, որոնք ապահովված էին բժիշկներով ու բժշկական միջին անձնակազմով, 34 բուժական և 13 մանկաբարձական կետեր, կոլտնտեսային 19 ծննդաբերական տուն, կանանց և մանկական 5 կոնսուլտացիոն կետ և 300 տեղանոց մեկ մանկական սանատորիա[105]: Շնորհիվ մարզի առողջապահության բնագավառի աշխատողների անձնազոհ ջանքերի, պատերազմի տարիներին մարզի բնակչությունը ոչ միայն փրկվեց համաճարակային հիվանդությունների բռնկումներից, այլև զգալի չափով նվազեցին մանկական վարակիչ հիվանդությունները, որովայնային և բծավոր տիֆով վարակվողների թիվը:

Պատերազմի տարիներին մարզի համար միջին բուժաշխատողների պատրաստման հիմնական դարբնոցը՝ Ստեփանակերտի բժշկական տեխնիկում էր և «Կարմիր խաչի» գծով պարբերաբար գործող բժշկական դասընթացները: Միայն 1942 թ. 4-րդ քառորդում Կարմիր բանակի համար պատրաստվեց 30 բուժքույր: Հաջորդ տարիներին պատրաստվեցին 253 բուժքույր, 1907 սանիրահանգիչ և 147 հիվանդապահուհի (սանիտարկա)[106]: Նրանց մի մասը

---

[105] «Սովետական Ղարաբաղ», 5 մայիսի 1945:
[106] РГАСПИ, ф. 17, оп. 45, д. 18, л. 10.

մեկնեց ռազմաճակատ, իսկ մյուս մասն էլ աշխատեց մարզի առողջապահական հիմնարկներում և էվակոհոսպիտալներում: Ինչ վերաբերում է բժշկական կադրերին, ապա նրանց մեծ մասը հանդիսանում էին Անդրկովկասի հանրապետությունների բժշկական ինստիտուտների շրջանավարտներ:

Պատերազմի տարիներին ռազմաճակատում վիրավոր մարտիկների բուժման գործում իրենց արժանի ավանդն են ներդրել Լեռնային Ղարաբաղի ծնունդ հարյուրավոր բժիշկներ: Նրանց թվում էին՝ Հովհաննես Միքայելի Դադալյանը (շուշեցի), բժշկական ծառայության գեներալ-մայոր, Սուրեն Մարգարի Բաղդասարյանը (ծնվել է Հադրութի շրջանի Թաղասեռ գյուղում), բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բժշկական ծառայության գնդապետ, Գևորգ Վահանի Մելիք-Բաբախանյանը (ծնվել է Շուշիում), բժշկական ծառայության գնդապետ, պատերազմի տարիներին եղել է 54-րդ բանակի գլխավոր թերապևտ, Քրիստափոր Նիկոլայի Փիրումյանը (ծնվել է Շուշիում), բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բժշկական ծառայության փոխգնդապետ, պատերազմի ժամանակ եղել է 38-րդ բանակի գլխավոր վարակաբանը, Անդրանիկ Ջումշուդի Ճաղարյանը (ծնվել է Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում), բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բժշկական ծառայության փոխգնդապետ, եղել է Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիայի վիրաբույժը, Գրիգոր Արսենի Մելքումյանը (ծնվել է Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղում), եղել է գնդի ավագ բժիշկ, դիվիզիայի, ապա բանակի գլխավոր բժիշկ, բժշկական ծառայության գնդապետ: Հետաքրքիր է, որ պատերազմից հետո նրա աջակցությամբ Մոխրաթաղում կանգնեցվել է Հայրենական մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակը հավերժացնող հուշարձանը (Մեծ հայրենականի նախօրյակին գյուղն ուներ 1187 բնակիչ, որից 387-ը զորակոչվել է Կարմիր բանակի շարքերը, նրանցից 154-ը զոհվել են ռազմաճակատում): Պատերազմում աչքի ընկած ղարաբաղցի բժիշկներից էին նաև՝ Գրիգոր Իշխանի Գրիգորյանը (ծնվել է Ստեփանակերտում), որը որպես գնդի ավագ բժիշկ մասնակցել է Կովկասի ճակատամարտին, Ուկրաինայի և Չեխոսլովակիայի ազատագրմանը, հաղթանակից հետո վերադարձել Ստեփանակերտ և մինչև 1954 թ. աշխատել որպես քաղաքի առողջապահության բաժնի վարիչ; Ռուբեն Հայրապետի Բազիյանը (ծնվել է Մարտակերտի շրջանի Ներքին Հորաթաղ գյուղում), եղել է գնդի վի-

ռաբույժ, պատերազմից հետո վերադարձել Մարտակերտ և աշխատել որպես շրջանային հիվանդանոցի գլխավոր բժիշկ, ուներ բժշկական գտությունների թեկնածուի կոչում; Ռուբեն Միքայելի Գրիգորյան (ծնվել է Ստեփանակերտի շրջանի Չանախչի գյուղում), պատերազմի տարիներին եղել է Սևծովյան նավատորմի գլխավոր ռազմածովային բազայի սանիտարական ծառայության պետ, պատերազմից հետո՝ ՀԽՍՀ առողջապահության նախարարի 1-ին տեղակալ; Գրիգոր Հովհաննեսի Թեյմուրյանց (ծնվել է Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում), պատերազմի տարիներին եղել է թիվ 4656 էվակոհոսպիտալի պետ, ունեցել է բժշկական ծառայության գնդապետի կոչում: Վիրավոր զինվորներին ու սպաներին մարտի դաշտում բժշկական առաջին անհրաժեշտության օգնությունն են ցույց տվել՝ բժշկական ծառայության կապիտան Շուշանիկ Թևանի Մուսայելյանը (ծնվել է Շուշիում), վիրաբույժներ՝ Օվսաննա Աբրահամի Ասրյանը (ծնվել է Մարտունու շրջանի Սարգսաշեն գյուղում), Ելենա Տիգրանի Բուռնազյանը (ծնվել է Շուշիում, մասնակցել է նաև Խորհրդաֆինական պատերազմին) և շատ ուրիշներ: Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտի ազատագրման ժամանակ իր պարտականությունները կատարելիս զոհվեց բժշկական ծառայության մայոր Շահեն Գաբրիելի Բաղդասարյանը (ծնվել է Մարտունու շրջանի Սոս գյուղում), որը հաղթական մարտերով Հյուսիսային Կովկասից հասել էր Կերչ, Ուկրաինա, ապա Հունգարիա[107]:

3. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Սույն աշխատության առաջին և երկրորդ գլուխներում մենք լուսաբանեցինք երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլին ԼՂԻՄ-ի հայերի մասնակցության, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին մարզում իրականացված ռազմամոբիլիզացիոն աշխատանքների հիմնահարցերը: Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին փուլի բաղկացու-

---

[107] Տվյալները վերցված են՝ Ա. Գրիգորյանի և Բ. Մելքումյանի «Հայաստանի բժիշկները Մեծ հայրենականում» (Ե., 1983), Հայկական սովետական հանրագիտարան, Հայկական համառոտ հանրագիտարան, Ով ով է, հայեր, կենսագրական հանրագիտարան աշխատություններից:

ցիչ մասն էր կազմում Խորհրդաֆիննական պատերազմը (30 նոյեմբերի 1939 թ. – 13 մարտի 1940 թ.), որին միայն ԼՂԻՄ-ից մասնակցեցին ավելի քան 1000 հայորդիներ, որոնցից ավելի քան 100-ը զոհվեց այդ մարտերում: Արցախահայերից երեքը մարտերում ցուցաբերած անօրինակ խիզախության և կատարած սխրանքների համար արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման (ադրբեջանցիները այդ պատերազմում ոչ մի հերոս չունեցան): Երբ 1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ ԼՂԻՄ-ում իրականացվեց համընդհանուր զորակոչ և հերթական զինակոչեր (մինչև 1945 թ. մայիս), ապա ընդհանուր առմամբ 1941-1945 թթ. մարզից Կարմիր բանակի շարքերը զորակոչվեց ավելի քան 45000 հայ, որը կազմում էր ԼՂԻՄ-ի հայ բնակչության 1/3 մասը: Ռազմաճակատում զոհվածների թիվը կազմել է 22000 արցախահայ, որը կազմել է մարզից բանակ զորակոչվածների 30 տոկոսը: Պատերազմի տարիներին մարզից զորակոչվածների մեջ եղել է 1850 հայուհի:

Քանի որ հայ պատմագրության մեջ մանրամասն լուսաբանվել է Հայրենական մեծ պատերազմին արցախահայերի մասնակցության հիմնահարցը (Հյուսիսային Արցախը և Լեռնային Ղարաբաղը միասին), ապա այդ խնդրին մենք կմոտենանք յուրովի, առանց ավելորդ մանրամասնության կաշխատենք բերել միայն թվական ընդհանրացնող տվյալներ ԼՂԻՄ-ից պատերազմի տարիներին Խորհրդային Միության հերոսի, Փառքի շքանշանի լրիվ ասպետի, մարշալի գեներալի և ծովակալի կոչման արժանացած հայորդիների մասին: Մեր ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միայն ԼՂԻՄ-ից Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 19, իսկ 5-ը պարգևատրվելով Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով դարձել են այդ շքանշանի լրիվ ասպետ: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Հյուսիսային Արցախից ռազմաճակատ մեկնած հայերից 10-ը արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման և 2-ը դարձել Փառքի երեք աստիճանների շքանշանի լրիվ ասպետ:

Պատերազմի տարիներին Անդրկովկասյան հանրապետություններից առաջինը Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման է արժանացել ավիագնդի հրամանատար, գվարդիայի

փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանը (ծնվել է 1913 թ. մարտի 28-ին Շուշի քաղաքում):

Հայերից առաջինը մարշալի կոչման է արժանացել Արմենակ Արտեմի Խանփերյանցը (Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակովը): Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի նախագահության 1944 թ. օգոստոսի 19-ի հրամանագրով նրան շնորհվել է ավիացիայի մարշալի կոչում[108]: Ա. Ա. Խանփերյանցը ծնվել է 1902 թ. հունվարի 7-ին Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում: Պատերազմի տարիներին նա եղել է օդային բանակի հրամանատար, Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ[109]:

Խորհրդային Միության հերոս, գեներալ-գնդապետ Միքայել Արտեմի Պարսեղովը ծնվել է 1899 թ. Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում: Պատերազմի տարիներին եղել է բանակի հրամանատար, ռազմաճակատի հրետանու պետ:

Ավիացիայի գեներալ-գնդապետ Սերգեյ Արշակի (Արկադիի) Սարդարով, ծնվել է 1909 թ. Հադրութի շրջանի Ազոխ գյուղում: Պատերազմի տարիներին եղել է ավիացիոն գնդի հրամանատար, ավիացիոն դիվիզիայի հրամանատարի տեղակալ, պատերազմից հետո՝ բանակի հրամանատար:

Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյան, ծնվել է 1904 թ. Շուշի քաղաքում: Պատերազմի տարիներին եղել է գնդի, բրիգադի, ապա դիվիզիայի հրամանատար:

Տանկային զորքերի գեներալ-մայոր Բագրատ Հովհաննեսի Իսահակյան, ծնվել է 1904 թ. Շուշի քաղաքում, պատերազմի տարիներին եղել է տանկային բրիգադի հրամանատար: Մասնակցել է նաև Խորհրդաֆիննական պատերազմին:

Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-մայոր Կոնստանդին Ալեքսանդրի Նազարով, հայրը Ստեփանակերտի Խնձրիստան գյուղից էր, պատերազմի ժամանակ եղել է հրետանային մարտկոցի հրամանատար:

---

[108] "Правда", 20 августа 1944.

[109] Ավելի մանրամասն տե՛ս **К. А. Арутюнян**, Маршал авиации С. А. Худяков – А. А. Хачфераиц, Е., изд. "Зангак-97", 2008.

Խորհրդային Միության հերոս, գնդապետ Ռաֆայել Իվանի Կապրելյան, ծնվել է Բաքվում՝ շուշեցի հայտնի բժիշկ Հովհան Համբարձումի Գաբրիելյանի ընտանիքում: Պատերազմի տարիներին եղել է ավիացիոն գնդի հրամանատար, պատերազմից հետո՝ վաստակավոր փորձարկող-օդաչու:

Բացի Նելսոն Ստեփանյանից, Սերգեյ Սարդարովից և Ռաֆայել Կապրելյանից, պատերազմի տարիներին ԼՂԻՄ-ի զավակներից գնդերի հրամանատարներ են եղել՝ փոխգնդապետ Նիկոլայ Գրիգորի Պետրոսյանցը (ծնվել է 1903 թ. ապրիլի 14-ին Ստեփանակերտի շրջանի Սարդարաշեն գյուղում), պատերազմի առաջին օրերին եղել է 6-րդ հեծելազորային դիվիզիայի 94-րդ կազակական հեծյալ գնդի հրամանատար, մայոր Սամվել Սարգսի Բարսեղյանը (ծնվել է Հադրութի շրջանի Տող գյուղում), պատերազմի առաջին շրջանում հանդիսացել է Հայկական նախկին 76-րդ հրաձգային դիվիզիայի 207-րդ հրաձգային գնդի հրամանատար, նրա համագյուղացի գվարդիայի փոխգնդապետ Բորիս Արտեմի Մուսայելյանը, պատերազմի վերջերին հանդիսանում էր 34-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատարը, գնդապետ Արամայիս Սողոմոնի Մկրտիչև (ծնվել է 1906 թ. Շուշի քաղաքում), 1943-1944 թթ. հանդիսանում էր 1-ին օդային բանակի 1552-րդ հակաօդային պաշտպանության գնդի հրամանատարը և շատ ուրիշներ:

Արևելապրուսական գործողության ակտիվ մասնակիցներից էր 3-րդ Բելառուսական ռազմաճակատի 48-րդ գվարդիական գնդի հրամանատար գվարդիայի մայոր Արտավազդ Արտեմի Մարտիրոսյանը (ծնվել է Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղում): Սմբատ Խաչատուրի Արզումանյանի (ծնվել է Մարտունու շրջանի Ճարտար գյուղում) հրամանատարությամբ Բելոռուսիայում է մարտնչել Ստալինի անվան պարտիզանական բրիգադը:

Ինչպես նշեցինք ԼՂԻՄ-ի 5 հայ զավակներ պարգևատրվելով Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանների շքանշաններով դարձել են այդ եռաստիճան շքանշանի լրիվ ասպետ: Այստեղ հարկ ենք համարում հիշեցնել, որ երբ 1943 թ. նոյեմբերի 8-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով ստեղծվեց այդ շքանշանը, ապա ամբողջ Կարմիր բանակում Փառքի 3-րդ աստիճանի

շքանշանով պարգևատրված առաջին զինվորը հանդիսանում էր սերժանտ Գևորգ Ավանեսի Իսրայելյանը (ծնվել է 1920 թ. Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղում) պարգևատրումը կատարվել է 1943 թ. նոյեմբերի 17-ին՝ Լենինգրադի ռազմաճակատում: Հետագայում խիզախ զինվորը պարգևատրվել է նաև Փառքի 2-րդ և 1-ին աստիճաններով և դարձել այդ շքանշանի լրիվ ասպետ:

Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները Լեռնային Ղարաբաղի զավակները պատերազմի տարիներին ծառայել են բոլոր զորատեսակների կազմում և մասնակցել երկրորդ համաշխարհային պատերազմի և Հայրենական մեծ պատերազմի բոլոր շրջանների նշանավոր մարտական գործողություններին և իրենց արժանի ավանդը ներդրել այդ մարտերում տարած հաղթանակի գործում:

Մենք արդեն համառոտակի անդրադարձանք Խորհրդաֆիննական և Հայրենական մեծ պատերազմներին Լեռնային Ղարաբաղի զավակների ունեցած մասնակցության հիմնահարցին: Այժմ համառոտակի անդրադառնանք նաև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլին՝ Հեռավոր Արևելքում 1945 թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը տեղի ունեցած Խորհրդա-ճապոնական պատերազմին ԼՂԻՄ-ի զավակների մասնակցության հիմնահարցին: Թեկուզ ճշտված թվական տվյալներ չկան այդ պատերազմին ղարաբաղցի մասնակիցների քանակի վերաբերյալ, այնուամենայնիվ մեզ հասած փաստերը վկայում են, որ Խորհրդա-ճապոնական պատերազմին մասնակցած արցախահայերի թիվը անցել է 1000-ից: Արցախահայերը այդ պատերազմին մասնակցել են՝ Անդրբայկալյան, 1-ին և 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատների, ինչպես նաև Խաղաղօվկիանոսյան ռազմածովային նավատորմի կազմում:

Հեռավորարևելյան 2-րդ ռազմաճակատի հրետանու պետն էր Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ (1958-ից՝ հրետանու գեներալ-գնդապետ) Միքայել Արտեմի Պարսեղովը (ծնվել է Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղում): Գեներալ Մ. Ա. Պարսեղովի հրամանատարությամբ գործող հրետանին հատկապես աչքի ընկավ Մանջուրիայի տարածքում ճապոնական Կվանտունյան միլիոնանոց բանակի ջախջախման և Հարավային Սախա-

լինը ճապոնական զավթիչներից ազատագրելու գործում: Պատերազմի աստված հրետանին՝ ավիացիայի, տանկերի, հետևակի ու ծովայինների հետ սերտորեն համագործակցած գրոհում էր ճապոնացիների ամրակոտ պաշտպանական ամրությունները, հրետանային հզոր կրակով ավերում դրանք, ստիպում հակառակորդին հապճեպ նահանջել կամ հանձնվել: Հայրենիքը բարձր գնահատեց գեներալ Մ. Ա. Պարսեղովի ծառայությունները՝ նրան պարգևատրելով Սուվորովի 2-րդ և Կուտուզովի 1-ին աստիճանի զորավարական շքանշաններով: Հայ զորավարի անունը նշվեց նաև Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինի 1945 թ. սեպտեմբերի 3-ի թիվ 373 հրամանում[110]:

Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատարն էր ավիացիայի մարշալ Արմենակ Արտեմի Խանփերյանցը (Սերգեյ Ալեքսանդրի Խուդյակով), ծնված Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում: Նրա բանակը ակտիվորեն մասնակցեց Խինգան-Մուկդենյան մարտական գործողությանը, որի ընթացքում օդաչուները մեծ օգնություն էին ցույց տալիս ցամաքային զորքերին: Գործողության ընթացքում ավիացիայի մարշալ Ա. Ա. Խանփերյանցի նախաձեռնությամբ լայնորեն կիրառվեց մոտոհրաձգային ստորաբաժանումների ինքնաթիռներով դեսանտ իջեցնելը հակառակորդի օդանավակայաններում: Դրանով իսկ ավիացիոն միավորումները առաջին անգամ պատերազմի պատմության մեջ հարձակման ժամանակ կատարում էին առաջապահ ջոկատների յուրահատուկ պարտականություններ: Դա նորություն էր խորհրդային ավիացիայի մարտական գործողությունների մեջ և դրա նախաձեռնողն ու գործնականում կատարողներից առաջինը ավիացիայի մարշալ Խուդյակով-Խանփերյանցն էր: Խինգան-Մուկդենյան մարտական գործողության ընթացքում 12-րդ օդային բանակի զորամասերի գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում օպերատիվ-ռազմավարական բարձր ունակություններ դրսևորելու համար Արցախի անվեհեր արծիվը Անդրբայկալյան ռազմաճակատի հրամանատար Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միութ-

---

[110] Կլիմենտ Հարությունյան, Կարինե Հարությունյան, Հայ զորավարներ, Ե., «Զանգակ-97» հրատարակություն, 2011, էջ 78:

յան հերոս Ռոդիոն Յակովլևիչ Մալինովսկու ու Հեռավոր Արևելքում խորհրդային զորքերի գլխավոր հրամանատար, Սովետական Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ալեքսանդր Միխայլովիչ Վասիլևսկու կողմից ներկայացվեց Խորհրդային Միության հերոսի կոչման, սակայն պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով[111]:

Չինական Գիրին, Չանչուն և Խարբին քաղաքների ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցեց 1-ին Հեռավորարևելյան ռազմաճակատի 5-րդ բանակի 215-րդ հրաձգային դիվիզիան, որի հրամանատարը Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր, շուշեցի Անդրանիկ Աբրահամի Ղազարյանն էր: Դժվարամատչելի լեռնաանտառոտ և ճահճոտ տեղանքում դիվիզիայի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ Ա. Ա. Ղազարյանը պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի զորավարական շքանշանով[112]:

Մոնղոլիայի անջուր անապատները, Մեծ Խինգանի լեռնաշղթան և Մանջուրիայի ճահճոտ տարածքները 6-րդ գվարդիական տանկային բանակի շարքերում հաղթահարելիս ցուցաբերած սխրանքների համար Ալեքսանդր Նևսկու զորավարական շքանշաններով պարգևատրվեցին 30-րդ գվարդիական մեքենայացված բրիգադայի 2-րդ մեքենայացված գումարտակի հրամանատար, գվարդիայի մայոր Զավեն Աղաջանի Բաղդասարյանը (Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղից) և 31-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի 1-ին մոտոհրաձգային գումարտակի հրամանատար, գվարդիայի մայոր Ներսես Մանուչարի Հակոբյանը (Շուշիի շրջանի Վերին Դաշալթի գյուղից): Գումարտակների մարտական ուղին ընթանում էր սաստիկ շոգ և տոթ եղանակին, երբ ջերմաստիճանը օդում 40 աստիճան տաքության էր հասնում և տեղում էին համատարած անձրևներ: Երկու հրամանատարներն էլ այդպիսի դժվարին պայմաններում ներդրեցին իրենց ողջ կազմակերպչական ունակությունները, մեծ կամքի ուժ, ցուցաբերեցին մարտական և տակտիկական գրագիտություն, որոնց շնորհիվ գումարտակները ջափա-

---

[111] Նշված աշխատությունը, էջ 76-77:
[112] Նշված աշխատությունը, էջ 79:

զանց կարճ ժամանակամիջոցում հաղթահարեցին 950 կմ ճանապարհ՝ չտալով ոչ մի ետ մնացող զինվոր կամ մարտական մեքենա:

Մարտական գործողությունների ամբողջ ընթացքում վիրավոր և հիվանդ զինվորներին ու սպաներին անգնահատելի բժշկական օգնություն էր ցույց տալիս թիվ 17 գլխավոր դաշտային հոսպիտալի անձնակազմը՝ հոսպիտալի պետ, բժշկական ծառայության մայոր եգոր Խոսրովի Բաղդոմյանի (Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղից) գլխավորությամբ: Հոսպիտալի անձնակազմը բնակլիմայական բարդ պայմաններում հաջողությամբ հաղթահարեց. Մեծ Խինգանի լեռնաշղթան՝ պահպանելով իր աշխատունակությունն ու բարոյական բարձր ոգին: Չնայած դժվարին ուղուն, հոսպիտալի անձնակազմը ժամանակին կատարեց մարտական առաջադրանքը և Մանջուրիայի Լյանեմյաո քաղաքում ծավալեց իր աշխատանքը: Շնորհիվ բժշկական ծառայության մայոր Ե. Խ. Բաղդոմյանի պահանջկոտության ու անձնակազմի հանդեպ ցուցաբերած հոգատարության, բուժաշխատողները Մանջուրական գործողության ընթացքում էլ ավելի բարձրացրեցին իրենց օպերատիվությունն ու աշխատունակությունը: Չնայած մեծ ծանրաբեռնվածությանը, հոսպիտալի անձնակազմը փորձված բժշկի ղեկավարությամբ հաղթահարեց ամեն տեսակ դժվարություններ և ժամանակին որակյալ բժշկական օգնություն ցուցաբերեց վիրավոր և հիվանդ մարտիկներին: Հոսպիտալի անձնակազմի աշխատանքները դժվարին պայմաններում գերազանց ղեկավարելու համար բժշկական ծառայության մայոր եգոր Խոսրովի Բաղդոմյանը պարգևատրվեց Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով:

Մանջուրական գործողության ընթացքում հարձակվող զորամասերին ժամանակին որակյալ ռադիոկապ ապահովելու և այդ ընթացքում անձնազոհ գործելու համար Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեց 462-րդ առանձին հատուկ նշանակության ռադիոդիվիզիոնի հրամանատարի տեղակալ, մայոր Քրիստափոր Ղևոնդի Մովսիսյանը (Ստեփանակերտի շրջանի Քարաշեն գյուղից): Մեծ Խինգանի լեռնաշղթան և Մանջուրական տափաստանը հաղթահարելու օրերին նա իրեն դրսևորեց որպես բարեխիղճ, գործիմաց և խիզախ մասնագետ, որն իր անձնական օրինակով մշտապես

ոգևորում էր կապավորներին՝ կատարելու իրենց մարտական առաջադրանքը:

9-րդ օդային բանակի 429-րդ ավիադիվիզիայի 5-րդ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի շտաբի պետն էր լեյտենանտ Սուրեն Զաքարի Բաբայանը (Մարտունու շրջանի Գիշի գյուղից): Գնդի հրամանատար փոխգնդապետ Մանասևի վկայությամբ, լեյտենանտ Ս. Զ. Բաբայանը ճապոնական զավթիչների դեմ մղված մարտական գործողությունների ընթացքում, ճիշտ ժամանակին և օրինակելի կերպով ձևակերպում էր մարտական փաստաթղթերը, հմտորեն կազմակերպում ավիաէսկադրիլիայի անձնակազմի վերաբաշխումների աշխատանքները՝ մշտապես հոգ տանելով օդաչուների մարտական պատրաստության բարձրացման ու կարգապահության ամրապնդման ուղղությամբ: Մարտական գործողության օրերին, հաճախ ինքն է անձամբ կատարել հատուկ առաջադրանքներ՝ հետախուզական նպատակներով: Հրամանատարության տված հանձնարարությունները օրինակելի կերպով կատարելու, ավիաէսկադրիլիայի շտաբի աշխատանքները հմտորեն կազմակերպելու և անձամբ իրագործած մարտական թռիչքների ժամանակ ցուցաբերած խիզախության համար լեյտենանտ Սուրեն Զաքարի Բաբայանը 9-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի գեներալ-գնդապետ Ի. Մ. Սոկոլովի 1945 թ. սեպտեմբերի 10-ի թիվ 144 հրամանով պարգևատրվեց «Արիության համար» մեդալով:

Կարելի է այսպես շատ օրինակներ բերել Խորհրդա-ճապոնական պատերազմին մասնակից արցախահայերի մասին, սակայն դա մի առանձին մենագրության թեմա է, որն առ այսօր չի ուսումնասիրվել հայ պատմագրության կողմից: Մեր բերած օրինակները բավական են ցույց տալու, թե ԼՂԻՄ-ի զավակները ինչ ավանդ են ներդրել երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում տարած հաղթանակում:

* * *

Այսպիսով, ամփոփելով մեր աշխատության վերջին գլխում հետազոտված հիմնահարցերը, գալիս ենք այն եզրակացության, որ չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից ստացվող հարազատների մահ-

վան բոթը ծանուցող «սև թղթերին» ԼՂԻՄ-ի թիկունքի աշխատավորությունը (հիմնականում կանայք, մեծահասակներ, հաշմանդամներ ու պատանիներ) ծանր զոհողությունների շնորհիվ, աշխատելով օրն ի բուն, կարողացավ ոչ միայն պատվով և ժամանակին կատարել պլանով նախատեսված պարտավորությունները ինչպես արտադրության, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառներում, այլև իրենց անձնական միջոցներից երկրի պաշտպանության ֆոնդին նվիրաբերել զգալի միջոցներ: Այդ ամենի հետ մեկտեղ պատերազմի տարիներին մարզում բավարար մակարդակի վրա գտնվեց կրթության, առողջապահության և մշակույթի օջախների գործունեությունը, որոնք ոչ մի օր անգամ չդադարեցրեցին իրենց աշխատանքը և ամեն կերպ նպաստեցին պատերազմում տարած հաղթանակին:

Բացի թիկունքի աշխատավորության ներդրած ծանրակշիռ ավանդից, պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին Կարմիր բանակի շարքերում մարտնչող ԼՂԻՄ-ից զորակոչված 45000 հայ ռազմիկները, սպաներն ու զորավարները, որոնցից 22000-ը իրենց մատաղ կյանքը նվիրեցին հայրենիքի պաշտպանության գործին: Նրանցից 19-ը արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, 5-ը դարձան Փառքի եռաստիճան շքանշանի լրիվ ասպետ: Ընդ որում Կարմիր բանակում Փառքի երրորդ աստիճանի շքանշանով առաջինը պարգևատրված զինվորը եղել է Ստեփանակերտի Ներքին Ազնեք գյուղացի Գևորգ Ավանեսի Իսրայելյանը, իսկ պատերազմի տարիներին Անդրկովկասյան հանրապետություններից Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման արժանացած միակ քաջորդին հանդիսացել է շուշեցի լեգենդար օդաչու Նելսոն Գևորգի Ստեփանյանը: Ռազմաճակատում մարտնչած արցախահայերը, հավատարիմ մնալով իրենց նախնիների մարտական հարուստ ավանդույթներին, կատարած սխրանքներով ոչ միայն հարստացրեցին դրանք և ծանրակշիռ ավանդ ներդրեցին Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներում տարած հաղթանակում, այլև տված հերոսների, մարշալների, գեներալների, ծավակալների ու սպաների տոկոսային հարաբերությամբ առաջնակարգ տեղ գրավեցին ամբողջ Խորհրդային Միությունում:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ամփոփելով մեր մենագրության հիմնական դրույթները, հանգում ենք հետևյալ եզրահանգումներին.

1. 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի անօրինական որոշմամբ Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական Արցախ երկրամասը, չնայած ադրբեջանական կուսակցական և պետական մարմինների բացահայտ հակահայկական-խտրական քաղաքականությանն ու համընդհանուր բռնաճնշումներին, ի տարբերություն բռնի կերպով հայաթափված Նախիջևանի, ոչ միայն կարողացավ իր լեռների պես մնալ անսասան և պահպանել ազգային ինքնուրույնությունը, այլև պատերազմի նախօրյակին ստեղծել շատ թե քիչ զարգացած արդյունաբերություն և գյուղատնտեսություն, որոնց առաջատար ճյուղերն էին՝ մետաքսի արդյունաբերությունը, գինու, օղու, կոնյակի և սպիրտի արտադրությունը, հացահատիկային, տեխնիկական և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակումը, անասնապահությունը, այգեգործությունը և այլն: Պատերազմի նախօրակին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 98 տոկոսով վերացված էր անգրագիտությունը, լրիվ ավարտվել էր գյուղի կոլեկտիվացումը, ստեղծված բավարար մակարդակի վրա դրված կրթական ու մշակութային համակարգ և առողջապահական ցանց: Այդ ամենը հուսալի նախադրյալներ ստեղծեցին պատրաստ դիմակայել, ինչպես Երկրորդ Համաշխարհային պատերազմի առաջին փուլը, այնպես էլ ամբողջ Հայրենական մեծ պատերազմը:

2. Օգտվելով Հայրենական մեծ պատերազմի սկզբում իրականացված համընդհանուր զորահավաքի և ամենամյա զորակոչերի ընձեռած հնարավորություններից, Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը 132800 հայ բնակչություն ունեցող մարզի (1939 թ. մարզն ուներ 150800 բնակչություն, որից՝ հայեր 132800, ադրբեջանցիներ՝ 14100, ռուսներ՝ 3200, այլք՝ 700) հանդեպ կիրառեց պլանավորված հայաթափման քաղաքականություն՝ ռազմաճակատ ուղարկելով հայ բնակչության 30 տոկոսը՝ շուրջ 45000 մարդ: Դա տոկոսային հարաբերությամբ 5 անգամ ավելի շատ էր Խորհրդային Ադրբեջանից ռազմաճակատ զորակոչված ադրբեջանցիներից:

Նման հարաբերություն էր կազմում նաև զոհվածների թիվը. մարտերում զոհվել էր ԼՂԻՄ-ից զորակոչված 22000 հայ:

3. Շնորհիվ մարզի կուսակցական և պետական մարմինների ձեռնարկած միջոցառումների պատերազմի առաջին իսկ ամիսներին երկրամասի ժողովրդական տնտեսությունը վերակառուցվեց պատերազմական պայմաններին համապատասխան, որը հնարավորություն ստեղծեց ռազմաճակատի կարիքների համար թողարկել անհրաժեշտ արտադրանք և գյուղատնտեսական մթերքներ:

4. Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից պարբերաբար ստացվող հարազատների մահվան բոթը ծանուցող «Սև թղթերին», մարզի աշխատավորությունը (հիմնականում՝ կանայք, մեծահասակներ, պատանիներ, ռազմաճակատից վերադարձած հաշմանդամներ) կարողացավ մեծ զոհողությունների գնով ոչ միայն կատարել պլանով նախատեսված պետական պարտավորությունները, այլև իրենց անձնական խնայողություններից երկրի պաշտպանության, տանկային շարասյունների ու ավիաէսկադրիլիաների կառուցման ֆոնդերին նվիրաբերել զգալի դրամական միջոցներ, միաժամանակ բավարար մակարդակի վրա պահել կրթության, մշակույթի և առողջապահության օջախների գործունեությունը, դրանով իսկ իրենց արժանի ավանդը ներդրել պատերազմում տարած հաղթանակի գործում:

5. Ռազմաճակատում մարտնչող արցախահայերը, հավատարիմ մնալով իրենց նախնիների մարտական հարուստ և հերոսական ավանդույթներին, կատարած սխրագործություններով ոչ միայն ավելի հարստացրեցին դրանք և արժանի ավանդ ներդրեցին ինչպես Հայրենական մեծ պատերազմում, այնպես էլ երկրորդ համաշխարհային պատերազմի Հեռավորարևելյան թատերաբեմում միլիտարիստական Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի գործում, այլև տված հերոսների, Փառքի շքանշանի լրիվ ասպետների ու զորավարների թվով տոկոսային հարաբերությամբ առաջնակարգ տեղ գրավեցին ամբողջ Խորհրդային Միությունում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ առաջին

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը պատերազմի առաջին փուլում (1 սեպտեմբերի 1939 թ. – 21 հունիսի 1941 թ.).....15

1.Պատերազմի սկիզբը և ԼՂԻՄ-ից Կարմիր բանակի շարքերը զորակոչված արցախահայերի մասնակցության հիմնահարցը.....15

2. Մարզի տնտեսական իրավիճակը.....20

3. Կրթություն, մշակույթ, առողջապահություն և հոգևոր կյանք.....30

Գլուխ երկրորդ

Հայրենական մեծ պատերազմի սկիզբը. Մարզի ժողովրդական տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան.....36

1. Ռազմամոբիլիզացիոն և ռազմապաշտպանական աշխատողները մարզում.....36

2. Արդյունաբերության վերակառուցումը.....45

3. Գյուղատնտեսական աշխատանքների վերակառուցումը.....55

Գլուխ երրորդ.ԼՂԻՄ-ի աշխատավորության ներդրումը հայրենական մեծ պատերազմում և Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին փուլում տարած հաղթանակում.....67

1. Արդյունաբերության և գյուղատնտեսական բնագավառների աշխատողների ներդրումը.....67

2. Կրթության, առողջապահության, մշակույթի և գիտության աշխատողների ներդրումը.....104

3. Հայրենական մեծ պատերազմի գլխավոր ճակատամարտերում և Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում տարած հաղթանակում արցախահայերի ներդրումը.....119

Եզրափակում.....129

ԿԱՐԻՆԵ ԱՐՏՅՈՒՇԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնվել է 1969 թ. մարտի 4-ին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում՝ ծառայողի ընտանիքում: 1986թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը, ապա ուսումը շարունակել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության և իրավունքի ֆակուլտետի ցերեկային բաժնում: 1991 թ. գերազանցությամբ ավարտել է ինստիտուտը, որից հետո որպես իրավաբան-խորհրդական աշխատել Ստեփանակերտի մանկական հիվանդանոցում, ապա ԼՂՀ Գերագույն խորհրդում, դասավանդել Շուշիի Ա. Մանուկյանի անվան դպրոցում, դասախոսել Շուշիի ժողովրդական համալսարանում: 2003 թ. մարտից առ այսօր աշխատում է Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմում որպես ընդհանուր բաժնի վարիչ: 2009 թ. ապրիլին Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդը պատմության ամբիոնի՝ արտադրությունից չկտրված հայցորդ Կարինե Հարությունյանի համար թեկնածուական ատենախոսության թեմա է հաստատել՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.)», որն այժմ պատրաստ է հրապարակային պաշտպանության: Թեմայի շուրջ հրատարակել է 4 հոդված, զեկուցումներով հանդես է եկել գիտաժողովներում, հրատարակել է երկու գիրք, որից մեկը համահեղինակությամբ:

Ամուսնացած է, ունի երկու երեխա՝ աղջիկ ու տղա: Ամուսինը Արցախյան ազատագրական պատերազմի ակտիվ մասնակիցներից է:

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА
АРЦАХСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КАРИНЕ АРТЮШЕВНА АРУТЮНЯН

НАГОРНО-КАРАБАХСКАЯ АВТОНОМНАЯ ОБЛАСТЬ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1939-1945 ГГ.)

ԿԱՐԻՆԵ ԱՐՏՅՈՒՇԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945 ԹԹ.)

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{գ}

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0223591

II
A 97751